

Մ Ա Ր Ձ Ի Կ

ՀԱՐԱ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

38-րդ համար, 2020, Թիվ 415 VOL. XXXVIII N° 415 السنة الثامنة والثلاثون - عدد رقم ٤١٥

marzig
SPORTS MAGAZINE



Հ.Ս.Ր.Ս. ԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
25 ԵՐԿԻՐ, 111 ՄԱՍՆԱՃԻՂ ԵՒ ՄԻԱԲՈՐ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ 12-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 14-19 Յոկտեմբեր 2019-ին, Ծաղկաձոր, Յայաստան: Ժողովին մասնակցեցան 75 իրաւասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ, Յ.Յ.Դ. Բիւրոյի Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Խաչերեան, Իրանի Յայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան ներկայացուցիչ Յարմիկ Զովելեան, ինչպէս նաեւ՝ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներ, գործավարներ, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիրը, Կեդրոնական Վարչութեան յանձնախումբերու ներկայացուցիչներ, երիտասարդական համագումարի պատուիրակներ, Կեդրոնական Վարչութեան եւ շրջաններու կողմէ հրաւիրեալներ, ընդամենը՝ 117 ներկաներ: Ընդհանուր Ժողովի աշխատանքներուն միացան նաեւ Յ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ Յամազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան:



Ժողովը գոհունակութեամբ ողջունեց Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի նորակազմ շրջանները, որոնք միութեան մեծ ընտանիքի մասնաճիւղերուն թիւը բարձրացուցին 111-ի:

Ժողովը համապարփակ քննութեան ենթարկեց Հ.Մ.Ը.Մ.Ի անցնող չորս տարիներու սերնդակերտման ու հայակերտման աշխատանքները, գնահատեց

կատարուած իրագործումները եւ ապագայի հաշուոյն մշակեց նոր ծրագիրներ:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը լայնօրէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաւտութիւնը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող հրատապ հարցերուն եւ համապատասխան որոշումներով քայլեր առաջադրեց անոնց լուծման թափ տալու նպատակով: Ժողովը քննեց նաեւ միութեան կազմակերպական ընդհանուր իրավիճակը եւ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.Ի Յայաստանի, Արցախի եւ աշխարհասփիւռ մասնաճիւղերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները: Օրակարգի միւս դարձան նաեւ կանոնադրային տրամադրութիւններու կարգ մը բարեփոխումներ եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին ու կայք էջին զարգացման վերաբերող ծրագիրներ:

Ժողովը մանրամասն քննութեամբ անդրադարձաւ անցնող քառամեակին իրագործուած միութեան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն, Յամա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ ընդհանուր բանակումին եւ միութեան 100-ամեակի ձեռնարկներուն:



Ընթացաւարտ եւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ
12-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ

ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



ԽՕՍՔԵՐ

«Մարզիկ»ի այս թիվով կարդալ ԺԲ. Պատգամատրական Ընդհանուր Ժողովի բացման և ընթացքին արտասանուած պաշտօնական խօսքերը (էջ 14-19, 46-49), ինչպէս նաև՝ Շարաշ Բրիտանի յուշաքանդակի բացման և Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 30-ամեակի տօնակատարութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կերքոնական Վարչութեան խօսքերը (էջ 56-57 և 62-64):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Առաջին օրէն

2-3

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

4-7, 68-72

ԺԲ. ՊԱՏԳԱՄ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Բացումը

8-13

Ընթացքը

20-39

Պատմութեան համար

26-29

Խմբանկարներ

40-45

Ակնարկ

50-51

ՈԳԵԿՈՉՈՒՄ

52-55

ՄԱՍՆԱԾԻՂԷ

ՄԱՍՆԱԾԻՂ

58-61, 65-67, 72-78



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

Վարչական կազմ: Պարթիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղորեան, Յարութ Ալանանեան, Նազօ Հայիպեան, Ռիթա Օղուխան, Արլին Շամնասեան:

Էջադրում և ընդհանուր չեւադրում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէրեան» րպարան, Պէյրութ, Լիբանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան և Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ և Աւստրալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հարապաճառի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կարարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանսլ նաև «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը սրացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կերքոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

ԱՌԱՋՋԻՆ ՕՐԷՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ)

Իր ստեղծման առաջին օրեն, Հ.Մ.Ը.Մ. այլ միութիւններու չնմանեցաւ: Ո՛չ սովորական մարզական ակումբ մը եղաւ, ո՛չ ալ սկաուտական ընթացիկ շարժում մը հանդիսացաւ: Միութեան հիմնադիրները վարպետ ներդաշնակութեամբ մը մարզականն ու սկաուտականը յաջողեցան մէկտեղել կազմակերպական մէկ կառոյցի տակ, առաջինին խանդավառութեան միացնելով երկրորդին տիպիփիւնը, յաղթանակելու կամքին գուգորդելով «ամեն օր բարիք մը գործելու» պարտաւորութիւնը:



կերպման եւ ֆիզիքական դաստիարակութեան գործը՝ փրկելու համար անոնց ազգային էութիւնը:

Հազիւ մէկուկէ տարեկան, Հ.Մ.Ը.Մ. ընդառաջեց Հայաստանի յուսատուութեան նախարարութեան հրաւերին եւ իր լաւագոյն տարրերը գործուղեց հայրենիք, մարզական կեանքը ղեկավարելու, սկաուտական շարժում ծաւալելու եւ հայ որբերէն Հայաստանի արժանապատիւ, տիպար քաղաքացիներ պատրաստելու համար:

Սփիւռքի մէջ, հարազատ իր կոչումին եւ նպատակին, Հ.Մ.Ը.Մ. ծաւալեցաւ ամենուրեք եւ Միջին Արեւելքէն մինչեւ Ամերիկաներ, Եւրոպա եւ Աւստրալիա, իր յաղթական դրօշին տակ համախմբեց հայ երկսեռ երիտասարդութիւնը. մարզիկ թէ սկաուտ իրարու կապեց, իրարու եղբայրացուց եւ բոլորին սորվեցուց Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծառայելու ուխտով ամրացնել իր երազին հասնելու հայ մարդուն հաւատքը:

Հ.Մ.Ը.Մ. գուրգուրաց մայրենի լեզուին եւ աւանդութիւններուն վրայ: Աշխատեցաւ իր մարզիկներուն եւ ըսկաուտներուն հոգիներուն մէջ ամրապնդել հայ եկեղեցիին, հայ մշակոյթին եւ հայրենիքին հանդէպ սէրը, հայ դաստի հանդէպ նուիրումը: Ու յաջողեցաւ ան մարմնակրթականքն ու սկաուտութիւնը հայացնել, այնպէս ինչպէս ժամանակին մեր եկեղեցին քրիստոնէութիւնը հայացուցած էր եւ մեր թարգմանիչները մշակոյթը հայացուցած էին: Հ.Մ.Ը.Մ. ազգային նկարագիր եւ հայեցի շունչ տուաւ իր իրաքանչիւր նախաձեռնութեան՝ ըլլայ այդ հաւաքոյթ թէ ժողով, արշաւ թէ բանակում, մարզական փորձ թէ մրցում, անոր համար ալ ան հարազատ ու սիրելի մնաց իր ժողովորդին:

Հ.Մ.Ը.Մ. առաջին օրէն որդեգրեց կամատր աշխատանքի սկզբունքը, հիմնուած՝ անշահախնդիր նուիրումի, սեփական հանգիստը, ժամանակն ու հաճոյքը հաւաքականութեան սիրոյն զոհաբերելու պատրաստակամութեան վրայ, հոգեկան բաւարարութիւնը եւ խիղճի գոհունակութիւնը ունենալով վարձատրութեան միակ աղբիւր: Հ.Մ.Ը.Մ.ական մարդը, մարզիկ թէ սկաուտ, շատ բան տուաւ միութեան եւ միութեան ճամբով՝ իր ժողովորդին, խորապէս համոզուած, որ տա՛լը, նուիրաբերելը աւելի շատ կը հարստացնէ նուիրողը, քան՝ նուէրը ստացողը:

Անսակարկ նուիրաբերումի պատմական ցուցանիշ է այն իրողութիւնը, որ միութեան հիմնադիր ժողովը տեսեց միայն կէս ժամ: Միութեան անուան ճշդումէն ետք, երկրորդ օրակարգով քննուեցաւ Յեղասպանութենէն փրկուած հայ որբերու հոգատարութեան հարցը: Ընտրուեցաւ Կեդրոնական Վարչութիւն եւ ժողովականները ցրուեցան որբախնամի աշխատանքներ կատարելու համար:

Հետեւաբար, զարմանալի չէ, որ մարզական եւ սկաուտական նպատակներով ճամբայ ելած այս միութիւնը, փոխանակ մարզական եւ սկաուտական աշխատանքներով զբաղելու, իր գործունէութեան սկսաւ... կարօտեալ գաղթականներու օժանդակութեամբ: Օրուան կարիքին ընդառաջելով, ան մարզանքն ու սկաուտութիւնը «զէն ու զրահ» դարձուց իր կամատր բանակին, որպէսզի կարենայ յառաջ տանիլ իր ժողովորդի զաւակներուն կազմա-

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի ժողովրդականութեան աճին եւ մշտանորոգ ուժին հետ, միութեան պատասխանատունները ձեռք բերին այն խոր համոզումը, որ միութեանական իրաքանչիւր յաջողութիւն, մարզական նուաճում թէ սկաուտական իրագործում, պարտի հարազատ ժողովորդը քայլ մը աւելի հայացնել, ամրացնել եւ հաւաքական իր իղճերուն իրականացման մօտեցնել:



Այս իրականություններուն լոյսին տակ պէտք է արժեւորել Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին արդիւնքները, որոնք մարզական եւ սկաուտական ընթացիկ մտահոգութիւններէ անդին, սերտօրէն առնչուեցան հայ կեանքի դիմագրաւած ներկայ մարտահրաւերներուն եւ աշխարհասփիտ հայ երիտասարդութեան դէմ ցցուած դժուարութիւններուն: Ասով նաեւ հասկնալի եւ արդարանալի պէտք է ըլլայ, թէ ինչո՞ւ Պատգամատրական Ընդհանուր Ժողովը իր օրակարգին մեծ մասը յատկացուց կազմակերպական, դաստիարակչական եւ երիտասարդական հարցերու քննարկման, ուր հրատապ կարեւորութեամբ ներկայացաւ աշխարհի չորս ծագերուն Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայ երիտասարդութիւնը համախմբելու, կազմակերպելու եւ հայութեան ընդ-

հանրական նպատակներուն համար օգտագործելի ներուժ ստեղծելու հրամայականը:

Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովը ճշդեց համապատասխան քիրախներն ու միջոցները, թէ ի՞նչպէս մարմնակրթական այս միութիւնը մարզական եւ սկաուտական իր աշխատանքներուն հետ, իր աշխատանքներուն ճամբով անհրաժեշտ ներուժը պիտի ապահովէ հայ ժողովուրդին՝ իր երկճիւղ, այսուհետեւ եռաճիւղ (մարզական, սկաուտական, երիտասարդական) գործունէութեամբ, կամաւոր աշխատանքով եւ ազգային գիտակցութեամբ սերունդներու պատրաստութեամբ, այնպէս ինչպէս առաջին օրէն կատարած էր ան, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրս դառնայ անելի՛ հայ, իսկ հաւաքական մեր կամքը դառնայ անելի՛ հզօր եւ անպարտելի:

Հ.Մ.Ը.Մ.Ի 25 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻՎԻՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արուիեան (Արուիեան), «Հ. Առուարամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախչեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վերի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սյրեւիանակեայ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չախլէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Գիւնի, Անթիլիաս, Ժրլէյլի, Պաուշիէ, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղրատ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Մյունխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրիա. **Գանա:** Մոնրթալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Մէնք Գաթրինգ, Լաւալ, Վանքովըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթեպելլօ, «Ազարամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կլենլէյլ), Օրէնճ Բաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Սեւան» (Սան Տիէյօ), «Արազ» (Ինլընդ Էմիլայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Քրեմէնթա Հոլիոյր), «Սիփան» (Պըրպէնք), «Արցախ» (Լաւ Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Քրիք) «Չաւաիք» (Նորթ Հոլիոյր), «Լոռի» (Մաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Բլարիթա), «Հրազք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքսոյք, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ, Սերիմար Հոլիոյր. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորրոպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիդնի), «Արարատ» (Մելբուռն), «Կամք» (Սիդնի), «Նաւասարդ» (Սիդնի), «Արարատ» (Սիդնի).



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ-ի ԺԲ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը 2019-2023 քառամեակի իր առաջին լիազուտար նիստերը կատարեց Փարիզի մէջ, 6-7 Դեկտեմբեր 2019-ին:

Նիստերուն սկիզբը, Կեդրոնական Վարչութիւնը Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն լոյսին տակ քննեց Հ.Մ.Ը.Մ-ի դէմ ծառայած ներկայ մարտահրաւէրները եւ օրակարգի առանձին կէտերով արծարծեց միութեան սկստական, մարզական եւ երիտասարդական նորաստեղծ բաժանմունքին զարգացման միջոցները:

Կեդրոնական Վարչութիւնը ընդհանուր արժեւորումը կատարեց միութեան 111 մասնաճիւղերու իրավիճակին եւ հաստատեց, որ վերջին շրջանին Հ.Մ.Ը.Մ. նկատուելի յառաջիմութիւն արձանագրած է Հայաստանի կազմակերպական իր ցանցին ընդլայնումով, Արցախի եւ Թիֆլիսի մասնաճիւղերուն հիմնադրութեամբ եւ Մոսկուայի ու շրջակայ արուարձաններուն մէջ ծաւալած աշխատանքներուն աշխուժացումով:

Կազմակերպական օրակարգով, Կեդրոնական Վարչութիւնը շեշտեց Եւրոպայի եւ Նախկին ԽՍՀՄ-ի միութեան նորակազմ հայ համայնքներուն մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան ծաւալման հրատապ անհրաժեշտութիւնը՝ համախմբելու եւ փրկելու համար տեղոյն երիտասարդութիւնը ձուլման անմիջական վտանգէն: Կեդրոնական Վարչութիւնը որոշեց շարունակել Մ. Նահանգներու եւ Գանատայի գլխաւոր քաղաքներու կողքին՝ հեռավոր ու փոքրաթիւ համայնքներուն հասնելու իր ճիգերը՝ կազմակերպական ժամանակակից մօտեցումներով եւ կառուցային համապատասխան պատշաճեցումներով:

Միջին Արեւելքի պարագային, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց թափ տալ շրջանային մարզախաղերու եւ միջ-վարչական աշխատանքներու կազմակերպման՝ մասնաճիւղերը աւելի յաճախ քով-քովի բերելու եւ համայնքներու կենսունակութեան նպաստելու համար:

Կեդրոնական Վարչութիւնը վերականգնեց քոյր մասնաճիւղերու դրութիւնը՝ թեւադրելով չբաւարարուել միայն Հայաստան-Սփիւռք քոյր մասնաճիւղերու հոչակումով, այլ՝ անհրաժեշտութեան պարագային քոյր մասնաճիւղեր հոչակելով սփիւռքեան իրարմէ հեռու համայնքներու մէջ գործող իր մասնաճիւղերը:

Լիազուտար նիստերու կարեւոր մէկ բաժինով, Կեդրոնական Վարչութիւնը քննեց միութեան դաստիարակչական ծրագիրներու, սկստական գիրքերու եւ մարզական կանոնագրութեան վերամշակման հրամայականը: Ճշդուեցան ընդհանուր ուղղութիւններ եւ պայմանաժամներ՝ վերատեսուութեան ենթարկելու Հ.Մ.Ը.Մ-ական մարզու կազմաւորման աւանդական ծրագիրներն ու մեթոտները: Որոշուեցաւ վերամշակումի ենթարկել նաեւ միութեան ժողովավարական կանոնները, շքանշաններու կանոնագրութիւնը եւ փրոթոքային ուղեցոյցը:

Կեդրոնական Վարչութիւնը յատուկ ուշադրութեամբ քննեց միութեան նորաստեղծ երիտասարդական բաժանմունքին ստեղծման քայլերը եւ հաստատեց, որ բաժանմունքը պիտի համախմբէ Հ.Մ.Ը.Մ-ական Նախկին սկստներն ու մարզիկները, որոնք կը փափաքին միութեանական իրենց աշխատանքները շարունակել այլազան բնագաւառներու ճամբով: Կեդրոնական Վարչութիւնը որոշեց մինչեւ մէկ տարի

պատրաստել բաժանմունքին աշխատանքային ուղեցույցը եւ փորձարկել զայն մինչեւ յաջորդ Պատագամաւորական Ընդհանուր Ժողով:

Կեդրոնական Վարչութիւնը անդրադարձաւ միութեան քարոզչական, տեղեկատուական եւ արհեստագիտական մարզերուն ընդհանուր իրավիճակին եւ անհրաժեշտ գտաւ ժամանակակից ու արդիական մօտեցումներով հասնել երիտասարդական աւելի լայն շերտերու եւ հայկական կազմակերպ համայնքներէ հեռու մնացող աշխարհասփիւռ հայերու: Առ այդ, ան անհրաժեշտ գտաւ «Մարզիկ» պաշտօնաթերթը տպագրի կողքին համացանցային տարբերակով ներկայացնել, Հ.Մ.Ը.Մ-ի Application մը ունենալ, կայքէջի եւ ընկերային ցանցերու աւելի արդիւնաւէտ գործունէութեան Հ.Մ.Ը.Մ-ական ուղեցույց մը պատրաստել:

Քառամեայ իր ծրագիրներու յաջողութեան համար, Կեդրոնական Վարչութիւնը սերտեց միութեան նիւթական կարելիութիւններուն ընդլայնման միջոցները՝ մօտակայ եւ հեռակայ ծրագիրներու մշակման ճամբով:

Լիազուցման քննարկումի նիւթ դարձան նաեւ միութեան թանգարանին, արխիւներուն, համացանցային վաճառատան (online shop) եւ եկամտաբեր ֆոնտին (Endowment fund) կապուած հարցեր:

Երկօրեայ իր նիստերուն ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը գնահատեց Լիբանանի ներկայ տագնապալի պայմաններուն մէջ Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեան եւ մաս-

նաճիւղերուն արտակարգ ճիգերը՝ միութեանական աշխատանքները անչեղ յանձնառութեամբ եւ կարելի աշխուժութեամբ շարունակելու՝ մնալով պատենչի վրայ, յօգուտ համայնքին եւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան կենսագործման:

Լիազուցմար իր նիստերու աւարտին, Կեդրոնական Վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ-Ֆրանսի վարչութեան եւ Ֆրանսայի Հայոց Թեմի Առաջնորդ Վահան Եպս. Յովհաննէսեանի ներկայութեամբ, հանդիպում մը ունեցաւ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ Անտրէ Սանթինիի հետ՝ շնորհակալութիւն յայտնելու քաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մարզահամալիրի կառուցման իր բերած կարեւոր նպաստին համար: Մարզահամալիրը պիտի ծառայէ Եւրոպայի համայն հայութեան եւ պատրաստ պիտի ըլլայ մինչեւ 2022-ի աւարտ:

Վերջապէս, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց 2019-2023 քառամեակին համար համա-Հ.Մ.Ը.Մ-ական իր գլխաւոր ձեռնարկները կատարել հետեւեալ ժամանակացոյցով.- 2020-ին՝ միջ-դիւնական Ժ. խորհրդաժողով եւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական խմբագետական Ը. համագումար, 2021-ին՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական ԺԱ. մարզախաղեր, 2022-ին՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական ԺԲ. ընդհանուր բանակում, 2023-ին՝ երիտասարդական Բ. համագումար եւ Պատգամաւորական ԺԳ. Ընդհանուր Ժողով:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar

Europe Hotel

Feel at home, away from home...

Reservations Yerevan
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europelhotel.am

www.europelhotel.am

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Շաբաթ, 23 Նոյեմբեր 2019-ին, Հ.Մ.-Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխավորութեամբ ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի, անդամներ եղբ. Վիգէն Աւագեանի, քոյր Թալին Օրտողլեանի եւ եղբ. Մանուկ Քէօշկերեանի, այցելեց Անթիլիասի մայրավանք եւ տեսակցութիւն մը ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Տեսակցութեան ընթացքին, պատուիրակութիւնը Արամ Ա. Կաթողիկոսին ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի ԺԲ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ընդհանուր միջնորդաւոր, նորընտիր Կեդրոնական Վարչութեան կազմը եւ միութեան յառաջիկայ քառամեակի գլխավոր ծրագիրներն ու առաջադրանքները:

Իր կարգին, Արամ Ա. ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը եւ բարձր գնահատանքը յայտնեց



միութեան կատարած գործին՝ զայն նկատելով առաքելութիւն: Արամ Ա. հաստատեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ միշտ զօրավիգ կանգնել Հ.Մ.Ը.Մ.ի ազգային առաքելութեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ...

Շարունակուած Բ. կողքէն

Ժողովը արժեւորեց նաեւ միութեան առաջին երիտասարդական համագումարը եւ անկէ բխած թելադրանքները: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ եկամտաբեր հիմնադրամին (Endowment Fund):

Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր ժողովը շեշտեց միութեան եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի դիմագրաւած համաշխարհայնացումի եւ քաղքենիացումի ահարկու վտանգներուն դէմ դնելու անհրաժեշտութիւնը:

Ժողովը անդրադարձաւ Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններ թրքական թափանցումի քայլին եւ այդ իմաստով հրապարակեց յայտարարութիւն մը՝ առ ի զօրակցութիւն սուրիահայութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին:

Իր աշխատանքներուն աւարտին, Ընդհանուր ժողովը ընտրեց յառաջիկայ քառամեայ նստաշրջանի նոր Կեդրոնական Վարչութիւնը եւ Ընդհանուր ժողովի դիւանի ներկայութեան դիւանը կազ-

- մեց հետեւեալ ձեւով.-
- Եղբ. Վաչէ Նաճարեան՝ Ատենապետ (Լիբանան)
- Եղբ. Վիգէն Աւագեան՝ Ատենադպիր (Լիբանան)
- Քոյր Թալին Օրտողլեան՝ Գանձապահ (Լիբանան)
- Եղբ. Մանուկ Քէօշկերեան (Սուրիա)
- Եղբ. Դաւիթ Յակոբեան (Հայաստան)
- Եղբ. Օշին Փիրումեան (Հայաստան)
- Եղբ. Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա)
- Եղբ. Ֆէտի Թաթրա (Շուէտ)
- Եղբ. Մոսիկ Թովուզեան (Գանատա)
- Եղբ. Վահէ Թանաշեան (Արեւելեան Մ. Նահանգներ)
- Եղբ. Արմանտ Քիլիճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ)
- Եղբ. Արմանտ Թորգոմեան (Հարաւային Ամերիկա)
- Եղբ. Տիրան Վահրատեան (Աւստրալիա)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ՝

Ի ՊԱՏԻ ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆՏՐԷ ՍԱՆԹԻՆԻ



Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2019-ի երեկոյան, Ալիազուժարի աշխատանքներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը ընթրիքով մը պատուեց Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ Անտրէ Սանթինին, որ ամիսներ առաջ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին յատկացուց հողաչերտ մը՝ մարզահամալիրի մը կառուցման նպատակով: Սանթինիի քաղաքապետութիւնը ստանձնեց նաեւ մարզահամալիրին կառուցման ծախսերուն մեծ մասը:

Ընթրիքին ներկայ գտնուեցան Ֆրանսայի Հայոց Թեմի Առաջնորդ Վահան Եպս. Յովհաննէսեան, Իսի Լէ Մուլինոյի փոխ քաղաքապետ Յարուլթ Խանճեան, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եղբայրներ:

Ընթրիքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Առաջնորդ Վահան Եպս. Յովհաննէսեան, քաղաքապետ Սանթինի եւ փոխ քաղաքապետ Յարուլթ Խանճեան: Խօսքերը շեշտեցին Իսի Լէ Մուլինոյի մէջ կառուցուելիք մարզահամալիրին կարելորութիւնը ոչ միայն շրջանին, այլեւ՝ համայն Եւրոպայի հայրութեան համար: Աւելի քան 25 միլիոն տոլար արժողութեամբ մարզահամալիրը օժտուած պի-

տի ըլլայ Ֆուլթոլլի եւ պասքեթպոլի մարզադաշտերով, Ժողովարահներով եւ ակմբային արդիական բոլոր յարմարութիւններով:

Այս առիթով, առ ի գնահատանք ծրագիրին իրականացման իրենց բերած մեծ նպաստին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պատուեց քաղաքապետ Անտրէ Սանթինին եւ Առաջնորդ Վահան Եպս. Յովհաննէսեանը:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՋԵՐՄ ՀԻԻՐԸՆԿԱԼՈՒՄԸ

Օր մը առաջ, 6 Դեկտեմբերի երեկոյան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը ընթրիքի հիւրը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան, որ ոչ մէկ ճիգ խնայեց ջերմօրէն հիւրընկալելու Կեդրոնական Վարչութիւնը եւ բժախնդրօրէն կազմակերպելու Փարիզի լիազուժարի աշխատանքները:

Ընթրիքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Լեոն Պաղտասարեան: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին փոխանցեց յուշանուէր մը:





Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 2019-ի կէսօրուան ժամը 1-ին, Երեւանի «Մարիոթ» հիւրանոցի «Արարատ» դահլիճին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովին պաշտօնական բացումը՝ ներկայութեամբ Ամեայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Վազգէն Եպս. Միրզախանեանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եղբ. Յակոբ Խաչերեանի, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթեկեանի, Գերագոյն Մարմինի անդամ Միքայէլ Մանուկեանի, Պուրճ Համուտի քաղաքապետ եղբ. Մարտիկ Պօղոսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ եւ նախկին Կեդրոնական Վարչութեան անդամներու, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամներու եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մասնակից Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Բացման հանդիսաւոր արարողութիւնը սկսաւ Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներով:





ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ 12-ՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

Բացման խօսքով հանդես եկաւ եւ հանդիսավարութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեան:

բարձրօրէն կը գնահատէր եւ մեծապէս կը կարեւորէր Հ.Մ.Ը.Մ.-ի նուիրեալ ծառայութիւնը երիտասարդութեան խնամքի դործին մէջ: Ան նաեւ բարի ընթացք կը մաղթէր Հ.Մ.Ը.Մ.-ի նոր, ազգօգուտ ծրագիրներուն եւ նախաձեռնութիւններուն (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 14):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՒՆ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան առաջին խօսքը արտասանեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչ Վազգէն Եպս. Միրզախանեան: Ան ընթերցեց Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին յղուած Գարեգին Բ. Կաթողիկոսին խօսքը, ուր ան կը հաստատէր, որ «Մէկ դարէ ի վեր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր նուիրեալ առաքելութիւնը կ'արդիւնաւորէ՝ կրթելով մեր ժողովուրդին պատանի եւ երիտասարդ գաւակները, անոնց հոգիներուն մէջ գորացնելով ազգանուիրումը եւ հայրենասիրութիւնը»:

Գարեգին Բ. իր խօսքին մէջ

ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

Հանդիսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին օրհնութեան գիրը ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.-ի «Մարգիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Օրհնութեան գիրին մէջ Արամ Ա. կը հաստատէր, որ Հ.Մ.Ը.Մ.-ը սովորական իմաստով մարմնակրթական կազմակերպութիւն մը չէ, այլ՝ առաքելութիւն է իր հոլովեամբ եւ նպատակով: «Մեր ազգային արժէքներու տարածման, հայակերտման ու հայապահպանման նուիրուած որեւէ կառույց, նուիրական առաքելութեան մըն ալ լծուած է մեր ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս», կը շեշտէր Արամ Ա. իր գիրին մէջ ու կը շարունակէր. «Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.-ը հայ կեանքէն ներս ամէն տեղ. այս ոգիով ու նպատակասլաց յանձնառութեամբ սերունդներու դաստիարակութեան լծուած հայ եկեղեցւոյ ու հայ դպրոցի կողքին դառնալով հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու պահպանը, ջահակիրը ու առաքեալը»:

Իր գիրին մէջ, Արամ Ա. կը մաղթէր, որ Պատգամաւորական Ժողովը Հ.Մ.Ը.Մ.-ի առաքելութեան վերահաստատման





եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ականներու յանձնառութեան վերանորոգման առիթ մը կը հանդիսանայ (Խօսքը տեսնել էջ 15):

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ատենապետ եղբ. Դաւիթ Յակոբեան: Ան ողջունեց միութեան Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին Հայաստանի մէջ կազմակերպումը եւ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.-ը վեհ արժէքներու եւ դաւանանքի վրայ հիմնուած կուռ կազմակերպութիւն մըն է, որ կամաւոր, յամառ ու անտրտունջ, անցաւ բիւր դժուարութիւններէ եւ վաստակեց պատիւ ու յարգանք, բերաւ սէր ու միութիւն եւ ծոցին մէջ տաք պահեց ազատ հայրենիքի երազն ու հայոց սուրբ Եռագոյնը:

Շարունակելով, եղբ. Յակոբեան յայտնեց, որ այսօր մենք կանգնած ենք ժամանակակից աշխարհի նոր մարտահրաւէրներու դիմաց, որոնք շատ են ու բազմաշերտ, ունին զանազան դրսեւորումներ Սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Թէեւ քիչ

չեն նաեւ ընդհանուր խնդիրները եւ մտահոգութիւնները եւս: Հ.Մ.Ը.Մ. պիտի փորձէ գտնել եւ ճիշդ կերպով ձեւակերպել բազմաթիւ հարցերու պատասխանները, արժեւորել եւ վերլուծել մեր հասարակութեան եւ յատկապէս երիտասարդութեան դիմաց ծառայած խնդիրները, տեսնել անոնց խորքը եւ մշակել նոր, մեթոտապէս հարուստ ծրագիրներ, լուծման յատկ ուղիներ (Խօսքը տեսնել էջ 19):

Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈՅԻՆ ԽՕՍՔԸ

Այնուհետեւ, Պատգամաւորական Ժողովի բացման հանդիսութեան Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքը փոխանցեց Բիւրոյի անդամ եղբ. Յակոբ Խաչերեան: Ան ըսաւ, որ Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովը իւրապատուկ է իր կայացման ժամանակով: Քառամեայ գործունէութենէն անդին, հարկ է որ ժողովը հանգամանօրէն իր գնահատականը կատարէ հայկական իրականութեան մէջ խոր արմատներ նետած, ամենամարդաշատ, ամենատարածուած, ամենաժողովրդական եւ ամենաերիտասարդ միութեան մէկ դար հարուստ ու պատուաբեր անցեալի բազմաշերտ ու բազմաձաւալ գործունէութեան: Ու այդ արժեւորումէն մեկնելով ճշդէ յառաջիկայ տասնամեակներու իր առաքելութեան ճանապարհը:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.-ի կապուած ակնկալութիւններուն մասին խօսելով, եղբ. Խաչերեան յայտնեց, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ուղեկից այս միութիւնը, ինչպէս անցեալին, պիտի շարունակէ ժամանակակից աշխարհի յարափոփոխ պայմաններուն մէջ արժէքներ պահել, հաւատալ մեր դարաւոր արժեհամակարգին՝ ազգ, հայրենիք, լեզու, եկեղեցի, ընտանիք, աւանդութիւններ ու սրբութիւններ պահող կազմակերպական իր ու մեր ուժին:

Եղբ. Խաչերեան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.-ը այսօր եւ յառաջիկայ մօտիկ տասնամեակներուն կը հանդիսանայ կազմ ու պատրաստ



ա՛յն միութիւնը, որ կրնայ առաւելագոյն յաջողութեամբ անխորտակելի պատնէշներ ու պարիսպներ կառուցել համաշխարհայինացման մասնացու վտանգին դիմաց (Խօսքը տեսնել էջ 16):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ողջոյնի խօսքը ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Բաֆֆի Կէօփօղլանեան: Խօսքը կը նշէր, որ իր բազմաճիւղ գործունէութեամբ, սկստակաւ խիտ շարքերով եւ մարզական խումբերով հարուստ այս միութիւնը է՛ ու կը մնայ հայապահպանման եւ հայակերտման կարեւորագոյն դարբնոցներէն

մէկը: Հարիւրամեակի իր հարուստ փորձառութեամբ գինւած, եւ հաւատարիմ իր առաքելութեան, Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ քայլ պահել ժամանակին հետ, եւ Ձև-րդ դարու յարափոփոխ այս աշխարհին մէջ, հայրենիքի սահմաններէն ներս թէ դուրս, կը հանդիսանայ հայեցի դաստիարակութեան եւ ազգային ոգիի փոխանցման առաջնակարգ դրօշակակիրը (Խօսքը տեսնել էջ 18):

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ...

Հանդիսութեան վերջին խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ԵՂԲ. ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆ

Բազմատաղանդ մարզիկ, մարզիչ, վարչական եղբ. Հրաչ Սիսեռեան ծնած է 1956-ին, Սուրիա: Եօթը տարեկանին ան մաս կազմած է Հ.Ս.Ը.Մ.ին, իբրեւ գայլիկ սկաուտ:

Երիտասարդութեան եղբ. Հրաչ մաս կազմած է Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի պասքէպոլի տղոց ներկայացուցչական խումբին եւ 1970-ական տարիներու սկիզբը փայլուն ելոյթներ ունեցած է Լիբանանի պասքէպոլի ախոյեանութեան մրցումներուն:

Լիբանանեան պատերազմէն կարճ ատեն մը ետք, ան հաստատուած է Ֆրանսա, ուր 1977-ին մասնակցած է Հ.Ս.Ը.Մ.-Ֆրանսի հիմնադիր ժողովին եւ ընտրուած է մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամ, պասքէպոլի պատասխանատուի պաշտօնով: Այնուհետեւ, 22 տարի եղբ. Հրաչ մաս կազմած է մասնաճիւղի վարչութեան, 14 տարի՝ 1985-1995 եւ 2003-2007 վարելով ատենապետի պաշտօնը:

Եղբ. Հրաչ Սիսեռեան մասնակցած է Հ.Ս.Ը.Մ.ի ինը Պատգամաւորական ժողովներու: Պատգամաւորական Ձ. Ընդհանուր ժողովին ան ընտրուած է Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ 16 տարի, չորս շրջան՝ նախ 1995-1999, 1999-2003, ապա՝ 2007-2011 եւ 2011-2015 եղած է միութեան գերագոյն մարմինի անդամ, իբրեւ Եւրոպայի շրջանի ներկայացուցիչ:

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութենէն դադրել էտք, եղբ. Հրաչ Սիսեռեան դարձեալ քանի մը շրջան վարած է մասնաճիւղի ատենապետութիւնը: Եղած է մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եւ պասքէպոլի խումբի մարզիչ՝ առանց երբեք խտրութիւն դնելու Հ.Ս.Ը.Մ.ական գործի եւ բնոյթի մէջ:

Փայլուն մարզիկ եւ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան վաստակաշատ անդամ մը ըլլալու կողքին, եղբ. Հրաչ եղած է միութեան մնայուն բարերար:

Ան ստանձնած է սկաուտական միաստղ եւ երկ-

աստղ գիրքերու հրատարակութեան մեկեմասութիւնը:

Երկար տարիներ սատարած է Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գըլխաւոր ծրագիրներու իրականացման:

2013-ին եւ 2017-ին, համա-Հ.Ս.Ը.Մ.ական 9-րդ եւ 10-րդ մարզախաղերուն, եղբ. Հրաչ հաստատած է մարզախաղերու լաւագոյն մարզիկ-մարզիկուհիներու երախտաշատ Հ.Ս.Ը.Մ.ականներու անունով պարգեւատրման դրութիւն:

2009-ի համա-Հ.Ս.Ը.Մ.ական 8-րդ խաղերէն ըսկսեալ, ան հաստատած է հօրը՝ Գեղամ Սիսեռեանի անունով պասքէպոլի երէց եւ կրտսեր տղոց, երէց եւ կրտսեր աղջկանց ախոյեաններու բաժակներ:

Եղբ. Հրաչ իր տիկնոջ՝ Էլիզապէթին հետ եղաւ Հ.Ս.Ը.Մ.ի 100-ամեակի կնքահայրներէն մէկը:

Եղբ. Հրաչ Սիսեռեան աւելի քան 15 տարի Հ.Ս.Ը.Մ.ի ներկայացուցիչներէն մէկը եղաւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի կազմին մէջ:

Մեծ եղաւ եղբ. Հրաչին ներդրումը Հ.Ս.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային նոր կեդրոնի ծրագիրին յաջողութեան մէջ:

Իբրեւ մարզիկ եւ մարզիչ, եղբ. Հրաչ արժանացած է բազմաթիւ մետալներու՝ պասքէպոլի մարզածելին մէջ իր ունեցած բազմաթիւ յաջողութիւններուն համար: Համա-Հ.Ս.Ը.Մ.ական առաջին մարզախաղերուն (Գանատա, 1981), ան հռչակուած է պասքէպոլի լաւագոյն մարզիկ:

Եղբ. Հրաչ տիրացած է Հ.Ս.Ը.Մ.-Ֆրանսի «Ծառալութեան» շքանշանին եւ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի յատուկ յուշամետալին եւ պասքէպոլի Ֆրանսական Ֆետերասիոնի բազմաթիւ մետալներուն:



Իր խօսքին սկիզբը, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ Հ.Մ.-Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները միայն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը հետաքրքրող իրադարձութիւններ չեն: Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները համայն հայութեան ուշադրութեան արժանի հաւաքներ են, որովհետեւ անոնք կը համախմբեն Հայաստանէն, Արցախէն եւ աշխարհի 23 երկիրներէ մեր ժողովուրդի Հ.Մ.Ը.Մ.ական ներկայացուցիչները, որոնք լծուած են մեր նորահաս սերունդի մարդակերտման ու հայակերտման աշխատանքին:

Եղբ. Մկրտիչեան ընդհանուր ակնարկ մը նետեց միութեան վերջին քառամեակի աշխատանքներուն վրայ եւ կատարեց

ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԵՐԵԱՆ



Եղբ. Գարլոս Սէֆերեան ծնած է Արժանթին, 1954-ին: Փոքր տարիքէն ան անդամակցած է Զ.Ս.Ը.Մ.ի Պուէնոս Այրեսի մասնաճիւղի սկաուտական շարքերուն եւ տարիներու ընթացքին տիրացած է պատասխանատու զանազան պաշտօններու:

1971-ին, Զ.Ս.Ը.Մ.ի Պուէնոս Այրեսի պատուիրակութեան հետ, եղբ. Գարլոս մասնակցած է սկաուտական միջազգային 13-րդ ճեմպորիին, ճափոն:

1985-ին եղած է Պուէնոս Այրեսի «Արարատ» սկաուտական խումբի խմբապետ:

1986-ին գլխաւորած է շրջանի սկաուտական պատուիրակութիւնը՝ համա-Զ.Ս.Ը.Մ.ական Բ. Բանակումին, Լոնտոն:

1988-ին մասնակցած է Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած սկաուտական խմբապետական երկրորդ համագումարին:

1992-ին, իբրեւ Պուէնոս Այրեսի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամ, ան կը ստանայ «Ինսիդնիա մատերա»:

2007-ին, Զ.Ս.Ը.Մ.ի 9-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ չորս տարուան շրջանի մը համար:

2011-ին, Զ.Ս.Ը.Մ.ի 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին ան կը վերընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Գարլոս Սէֆերեան իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Զարաւային Ամերիկայի մէջ Զ.Ս.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութեան:



կարգ մը մատնանշումներ: Ան ըսաւ, որ նախորդ Պատգամաւորական Ժողովէն՝ 2015 թուականէն ասդին երկարած ժամանակաշրջանը Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան համար եղաւ պատմական, որովհետեւ ան զուգադիպեցաւ միութեան 100-ամեակի հանգրուանին: 100-ամեակը կազմակերպական, յարաբերական եւ քարոզչական զօրաշարժի մատնեց միութիւնը եւ նոր թափ ու մղում տուաւ անոր աշխատանքներուն:

Անցնող քառամեակին Հ.Մ.Ը.Մ. իր մասնաճիւղը ունեցաւ Արցախի մէջ: Ամրապնդեց եւ ընդարձակեց Հայաստանի մէջ իր գործունէութիւնը եւ լայն զարկ տուաւ Մոսկուայի մասնաճիւղին աշխատանքներուն: Նաեւ, միութիւնը ունեցաւ 8 նոր միաւորներ եւ մասնաճիւղեր աշխարհի տարածքին, ինչ որ դրական երեւոյթ է ընդհանուր նահանջի, ալյասերման եւ օտարացման մեր օրերուն:



Եղբ. Գարլոս Սէֆերեանի շքանշանը կը յանձնուի տղուն Եղբ. Վիգէն Սէֆերեանին:



Վերջապէս,- նշեց եղբ. Մկրտիչեան,- Հ.Մ.Ը.Մ-ի անցնող քառամեակը յատկանշական է, որովհետեւ միութեան սկաուտական եւ մարզական ճիւղերուն կողքին, ան ստեղծեց երկար տարիներէ ի վեր անհրաժեշտութիւն նկատուող միութեան երիտասարդական բաժանմունքը, նախ՝ Եւրոպայի երիտասարդութիւնը համախմբող Վիեննայի 2017-ի հաւաքով ու ապա՝ Աթէնքի 2019-ի երիտասարդական Ա. համագումարով:

Խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան խոստացաւ անակընկալ մը ներկայացնել 100-ամեակի տարուան աշխատանքները ծանօթացնող տեսերիզի ցուցադրութեանէն ետք (Խօսքը տեսնել էջ 17-18):

... ԵՒ ԱՆԱԿՆԿԱԼԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անակնկալը եղաւ վաստակաշատ երեք եղբայրներու պարզեւատրուած միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Շքանշաններու եւ ներկաներու գնահատանքի ծափող-ջոյններուն արժանացան միութեան իրենց երկարամեայ ծառայութիւններով ծանօթ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Հրաչ Սիսեռեան՝ Ֆրանսայէն, Մանուկ Քէօշկերեան Սուրիայէն եւ Գարլոս Սէֆէրեան՝ Արժանիքին: Վերջինը հանդիսութեանէն բացակայ ըլլալով, շքանշանը փոխանցուեցաւ զաւկին՝ եղբ. Վիգէն Սէֆէրեանին:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին յաջորդեցին պարզեւատրեալներու շնորհաւորութիւններ եւ հիւրասիրութիւն, որոնցմէ ետք՝ յետմիջօրէին Պատգամաւորական Ժողովի մասնակիցները մեկնեցան Ծաղկաձոր, ուր երեկոյեան ժամը 9-ին, «Մարիթ» պանդոկի ժողովասրահին մէջ սկսան Պատգամաւորական Ժողովի աշխատանքային իրենց նիստերուն (Ընդհանուր Ժողովի բացման հանդիսութեան ամբողջական տեսագրութիւնը դիտել այս կապով՝ <https://www.facebook.com/MyHomenetmen/videos/530121271133794/>):

ԵՂԲ. ՄԱՆՈՒԿ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ



Եղբ. Մանուկ Քէօշկերեան ունի աւելի քան կէս դարու միութենական ծառայութիւն: Ան ծնած եւ գործած է Զալէպի մէջ, սկաուտական եւ վարչական բնագաւառներու մէջ ունենալով բեղուն գործունէութիւն:

Եղբ. Մանուկ Հ.Մ.Ը.Մ-ին անդամակցած է փոքր տարիքէն: Ստացած է սկաուտական բոլոր կարգերն ու աստիճանները՝ տիրանալով մինչեւ «Արարատեան» կարգի:

Ան եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան սկաուտական կորիզի անդամ: Մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական վեց բանակումներու: 1999-ին, վարած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական վեցերորդ բանակումին ընդհանուր խմբապետի պաշտօնը: Սկաուտական աշխատանքներով Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ գործուղուած է Յորդանան եւ Քուէյթ:

Եղբ. Մանուկ մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական երեք համագումարներու, Միջին Արեւելքի խմբապետական առաջին համագումարին, Հ.Մ.Ը.Մ-ի միջ-դիւանական երկու եւ Պատգամաւորական չորս Ընդհանուր Ժողովներու:

Երկար տարիներ ան եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Զալէպի Սկաուտական Խորհուրդի եւ ապա՝ Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամ: Երեք շրջան ստանձնած է Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետութեան պաշտօնը:

Եղբ. Մանուկ հինգ շրջան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, երեք շրջան վարելով ատենապետի պատասխանատու պաշտօնը: Մեծ եղած է իր ներդրումը Հ.Մ.Ը.Մ-ի Տէր Զօրի աշխատանքներու վերակազմակերպման մէջ:

Ան կատարած է սկաուտական երկու գիրքի աշխատասիրութիւն:

Սուրիոյ տագնապի օրերուն, միշտ պատնէշի վրայ մնալով, եղբ. Մանուկ յաջողած է ձեռնհասօրէն վարել շրջանի աշխատանքները, իբրեւ նորութիւն կազմակերպելով ՍԵՎԱՍ-ի խաղերը եւ «Կանուրջներ հաստատել» բնաբանով դասախօսական, դաստիարակչական շարքերը:

Եղբ. Մանուկ Քէօշկերեան ամուսնացած է քոյր Բնար Ֆռունճեանի հետ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԽՕՍՔԸ՝ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱԴՈՐԱԿԱՆ 12-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելիներ,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովի մասնակիցներին:



Մէկ դար շարունակ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը արդիւնաւորում է իր նուիրեալ առաքելութիւնը՝ կրթելով մեր ժողովրդի պատանի եւ երիտասարդ գաւակներին, զօրացնելով նրանց հոգում ազգանուիրումը եւ հայրենասիրութիւնը:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրման օրերին կարեւոր ծառայութիւն բերեց Հայոց Յեղասպանութիւնից փրկուած տասնեակ հազարաւոր մանուկներին խնամելու գործում՝ նպաստելով նրանց առողջութեան ամրապնդմանը եւ մասնագիտական կարողութիւնների զարգացմանը: Այս առաքելութեանց հաւատարիմ՝ անցած հարիւրամեակի ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը նորանոր յաջողութիւններ արձանագրեց՝ աշխարհի տարբեր երկրներում հիմնադրուած մասնաճիւղերով իրականացնելով առաւել ընդգրկուն գովարժան սպասաւորութիւն մեր մանուկների, պատանիների ու երիտասարդների համար:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան յարգարժան անդամներ եւ պատասխանատուներ, Մենք բարձրօրէն գնահատում եւ մեծապէս կարեւորում ենք ձեր նուիրեալ ծառայութիւնը երիտասարդութեան խնամքի գործում: Երիտասարդները ներկան ու ապագան են մեր ժողովրդի: Այսօր թէ՛ հայրենիքում, թէ՛ աշխարհասփիւռ մեր համայնքներում տարաբնոյթ մարտահրաւերներ են ծառայած, որոնց յաղթահարման համար անհրաժեշտ է ազգի գաւակների միասնական ջանքն ու եռանդը: Հզօր պետութեան, բարգաւաճող ազգի տեսիլքը նորանոր ձեռքբերումներով պայծառ պահողը, նոր ժամանակների հիմնախնդիրների յաղթահարման համարձակ լուծումներ նախաձեռնողը նաեւ մեր երիտա-

սարդներն են, որոնց ճիշդ խնամքը, արդիւնաւոր կրթութիւնը, հայեցի դաստիարակութիւնն ու սատարումը բարիք պիտի լինի մեր պետութեան ու ժողովրդի զօրացման եւ լուսաւոր գալիքի համար:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հայաստանի եւ Սփիւռքի գործիչներից համախմբումը հայրենի մեր երկրում վառ վկայութիւններից է ձեր նախանձախնդրութեան եւ վճռականութեան՝ միասնական ջանքերով նպաստելու մեր ժողովրդի առաջընթաց ու բարօր կեանքին:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան համաժողովի յիշարժան առիթով վերստին Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում ամէնքիդ եւ Հայրապետական Մեր գնահատանքը

յայտնում միութեան պատասխանատուներին՝ ազգանուէր գործունէութեան, նոր սերնդին կրթելու ու դաստիարակելու գովելի ջանքերի համար:

Բարի ընթացք ենք մաղթում Հ.Մ.Ը.Մ.ի նոր ազգօգուտ ծրագրերին ու ձեռնարկումներին: Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք, որ Ամենակարող Աստուած յաւելի ձեր ուժն ու եռանդը՝ արգասաւորելու նուիրական այս հաստատութեան մէկդարեայ առաքելութիւնը՝ յանուն մեր ազգի եւ հայրենեաց: Թող Տիրոջ ողորմութեամբ մշտանորոգ յաջողութիւններով բարեգարդուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան շնորհակալ գործունէութիւնը, եւ թող Բարձրեալ Տէրը պահի ու պահպանի ձեզ ամէնքիդ Իր Սուրբ Աջի Ամենախնամ հովանու ներքոյ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿԻԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական սիրով եւ ազգային վառ ասարումներով կ'ողջունենք ձեզ: Ահա դարձեալ հաւարուած էք, որպէս Պատգամաւորական ժողով, քննարկելու ու արժեւորելու համահայկական ձեր կազմակերպութեան անցնող շրջանի գործունէութիւնը: Ինչպէս յաճախ կը յիշեցնենք, Հ.Մ.Ը.Մ.ը սովորական իմաստով մարմնամարզական կազմակերպութիւն մը չէ, այլ առաքելութիւն՝ իր էութեամբ ու նպատակով:



Արդարեւ, մեր ազգային արժէքներու տարածման, հայակերտման ու հայապահպանման նուիրուած որեւէ կառոյց, նուիրական առաքելութեան մըն է լծուած մեր ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս:

Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.ը իր ծնունդով ու նպատակով, իր կեանքով ու գործունէութեամբ: Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքէն ներս ամէն տեղ, այս ոգիով ու նպատակասլաց յանձնառութեամբ սերունդներու դաստիարակութեան լծուած՝ հայ եկեղեցւոյ ու հայ դպրոցի կողքին դառնալով հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու պահապանը, ջահակիրը ու առաքեալը:

Վստահ ենք, որ ներկայ Պատգամաւորական ժողովը Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան վերահաստատման եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու յանձնառութեան վերանորոգման առիթ մը պիտի հանդիսանայ:

Իմացանք, որ համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի կանոնադրութեան, Միութեան ներկայ ատենապետ տեար Գառնիկ Մկրտիչեան կ'աւարտէ իր շրջանը: Այս առիթով, եւ ձեր բոլորի ներկայութեան, Մեր հայրական օրհնութիւնն ու բարձր գնահատանքը կը յայտնենք պրն. Մկրտիչեանին: Մենք մօտէն ճանցչած ենք զինք եւ քաջածանօթ՝ Հ.Մ.Ը.Մ.ին մատուցած իր ամբողջանուէր ծառայութեան:

Արդարեւ, անցնող տարիներուն ան նուիրումով, զոհողութեամբ ու յանձնառութեամբ կատարեց իրեն վստահուած պատասխանատուութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ իր ընտանիքը, եւ եղաւ կենդանի ու առանցքային ներկայութիւն իր ամէնօրեայ կեանքէն ներս: Ան իր գերագոյն կարելին ի գործ դրաւ, որպէսզի առաւել եւս ծաւալի ու ծաղկի Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը՝ Լիբանանէն սկսեալ մինչեւ Հայաստան ու Արցախ եւ ի սփիւռս աշխարհի: Վստահ ենք, որ ան երբեք պիտի չհեռանայ իր կեանքին մէկ անբաժան մասը կազմող Հ.Մ.Ը.Մ.էն, եւ այս միութիւնը առաջնահերթ տեղ պիտի գրաւէ իր կեանքի օրակարգին

վրայ:

Այս առիթով, անգամ մը եւս կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը: Հայրական Մեր թելադրութիւնն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը վերանորոգ կենսունակութեամբ շարունակէ իր հայակերտումի առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս, ի սպաս մեր նորահաս սերունդներուն:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

2 Հոկտեմբեր 2019
Անթիլիաս, Լիբանան



ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ը

(ՅԱՆՈՒՆ Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈՅԻ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԽԱԶԵՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բիւրոյին անունով կ'ողջունեմ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը:

Ժողովը, ըստ կանոնագիրի տառին, պարտականութիւնը ունի քննարկելու եւ արժեւորելու Հ.Մ.Ը.Մ.Ի անցնող քառամեակի գործունէութիւնը, բայց մանաւանդ՝ նախագծելու հետագայ ընելիքներն ու ծրագիրները:

Սակայն, 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը իւրայատուկ է իր կայացման ժամանակով: Քառամեայ գործունէութեան անդին, հարկ է, որ ժողովը հանգամանորէն իր գնահատականը կատարէ հայ իրականութեան մէջ խոր արմատներ նետած ամենամարդաշատ, ամենատարածուած, ամենաժողովրդական եւ ամենաերիտասարդ միութեան մէկ դար, հարուստ ու պատուաբեր անցեալի բազմաշերտ ու բազմածաւալ գործունէութեան: Ու այդ արժեւորումէն մեկնելով ճշդէ յառաջիկայ տասնամեակներու իր առաքելութեան ճանապարհը:

Հաստատ, կասկածէ վեր ու անվիճելի կը մնայ բոլորիս համար այն ցայտուն իրականութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ.Ը-ը արժանապատիւ հմայքով կտրեց հայ ժողովուրդի անցեալ մէկ դարու պատմութեան ամբողջ ընթացքը՝ «Մի՛շտ պատրաստ» անհասանելի դարձաւ ազգին ու հայրենիքին:

Պահեց Եռագոյն դրօշը միշտ ծածան ու ի պատուի, երբ շատ-շատեր իրենց աչքերը թեքեցին անկէ հեռու:

Պահեց կամաւոր բանակ եւ երազանքն ու կամքը ազգային բանակ անգամ մը եւս ունենալու, երբ շատ-շատեր համոզուած էին ենթակայութեան:

Պահեց ազգային օրհներգը բարձրադաղակ լսելի, երբ շատ-շատեր, կամա՛յ, դոց պահեցին իրենց ականջներն ու հոգիները հայաշունչ սրբազան երգին առջեւ:

Ու... անոր շարքերը քալեցին «Յառա՛ջ, անսասան ու անդեղեւ», իբրեւ «Նահատակ ցեղի անմահներ»: Քալեցին օտար ասիերուն, տասնամեակներ, միշտ հաւատարմով, որ օր մը պիտի տողանցեն հոս՝ ազատ ու անկախ Հայաստանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ, իրենց աչքերը յառած Արարատի գագաթին:

Պատուաբեր անցեալ:

Կը հաւատանք, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ուղեկից այս միութիւնը, ինչպէս անցեալին, պիտի շարունակէ ժամանակակից աշխարհի յարափոփոխ պայմաններուն մէջ պահել արժէքներ, հաւատալ մեր դարաւոր արժեհամակարգին՝ ազգ, հայրենիք, լեզու, եկեղեցի, ընտանիք, աւանդութիւններ ու սրբութիւններ պահող կազմակերպական իր ու մեր ուժին:

Արժեհամակարգի պահակ Հ.Մ.Ը.Մ.Ը-ը, վստահ ենք ու համոզուած, որ պիտի շարունակէ իր առաքելութիւնը՝ միշտ կենսունակութիւն եւ աւելի հաղորդելով իր շարքերուն ու միշտ երիտասարդ պահելով համահայկական ամենաբազմադամ այս կազմակերպութիւնը:

Համաշխարհայնացման մերօրեայ պիւքները վտանգի ենթարկած են մեր ազգը, ի մասնաւորի՝ Սփիւռքի տարածքին, ուր հայրենի ՀՈՂ-ի ու ՇՈՒՆԶ-ի բացակայութիւնը առաւել եւս փուլ կը բերեն մեր ոգեղէն դիմադրականութիւնը, այլասերման ու ապագայնացման կ'առաջնորդեն մեր վառ պահած ԿՐԱԿ-ի նորագոյն ջահակիրները՝ մեր երիտասարդութիւնը:

Կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ.Ը-ը այսօր եւ յառաջիկայ մօտիկ տասնամեակներուն կը հանդիսանայ կազմ ու պատրաստ ա՛յն միութիւնը, որ կրնայ առաւելագոյն յաջողութեամբ անխորտակելի պատնէշներ ու պարիսպներ կառուցել այս համասփիւռ մահացու վտանգին դիմաց:

Կոչ կ'ողղենք հարիւրամեայ, բայց միշտ երիտասարդ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, սկստական եւ մարզական առաքելութեան առընթեր, իր առաջնահերթ ազգանուէր առաքելութիւնը նկատել փարոս դառնալ՝ հայ երիտասարդութիւնը ներգրաւելու դէպի մեր ազգային ակունքներ ուղղելու եւ ազգային գաղափարախօսութեամբ զինելու անյետաձգելի աշխատանքին:

Նոր աշխարհի պարտաւորեցնող արդիականացումը, արհեստավարժ արդիւնաւէտ գործելաոճը, գիտութեամբ զինուած մասնագիտական աշխատանքը, ռազմավարական ծրագիրներու մշակումը մեզ կը սպասեն ճիշդ ուղիէն շարունակելու համար հարիւրամեայ կազմակերպութեան ՅԱՂԹԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ:

Յաջողութիւն կը մաղթեմ ժողովի աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻԶԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ՄԻՈՒԹԵԱՆ 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ընդհանուր ժողովները միայն Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքը հետաքրքրող իրադարձութիւններ չեն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ընդհանուր ժողովները համա՛յն հայտնի մեծ շարժումներն են, որովհետեւ անոնք կը համախմբեն Հայաստանէն, Արցախէն եւ աշխարհի 25 երկիրներէ մեր ժողովուրդի Հ.Մ.Ը.Մ.ական ներկայացուցիչները: Քոյրեր եւ եղբայրներ, որոնք լծուած են մեր նորահաս սերունդի մարզակերտման ու հայակերտման աշխատանքին:

Ճիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ.Ի գործը առաւելաբար պատանիներու եւ երիտասարդներու հետ է: Բայց ճիշդ է նաեւ, որ ծնողներու, բարեկամներու, բարերարներու եւ համակիրներու հսկայ բանակ մը կը հետեւի միութեան աշխատանքներուն: Հ.Մ.Ը.Մ. կ'ապրի բոլորին հետ, ամէնուն համար: Եւ հետեւաբար, պարզ է, որ բոլորը հետաքրքրուին Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներով ու ծրագիրներով:

Քիչ ետք, Ծաղկաձորի մէջ ընթացք կ'առնեն Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին աշխատանքները, ուր միութեան կարգով կը կատարուի անցնող չորս տարիներու գործունէութեան ներկայացում, հաշուետուութիւն եւ արժեւորում:

Միութեան կարգը իր տեղին, կ'արժէ այստեղ, հրապարակային բացման այս հանդիսութեան, հաշուետուութեան մօտեցումով ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ի անցնող քառամեակը յատկանշող կարգ մը երեւոյթներ, անոնց լոյսին տակ ուրուագծելու համար գալիքը, յառաջիկայ չորս տարիները:

Նախորդ Պատգամաւորական ժողովէն՝ 2015 թուականէն ասդին երկարած ժամանակաշրջանը Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան համար եղաւ պատմական, որովհետեւ ան գուզադիպեցաւ միութեան 100-ամեակի հանգրուանին: 100-ամեակ, որ արժանավայել կերպով, պետական եւ ժողովրդային շուքով նշուեցաւ Հայաստանի եւ Սփիւռքի տարբեր համայնքներուն մէջ՝ Սիւնիէն Պուէնոս Այրէս, Լոս Անձելըսէն Պէյրութ եւ Պաղատա: 100-ամեակը կազմակերպական, յարաբերական եւ



քարոզչական զորաշարժի մատնեց միութիւնը եւ նոր թափ ու մղում տուաւ անոր աշխատանքներուն:

Անցնող քառամեակին Հ.Մ.Ը.Մ. իր մասնաճիւղը ունեցաւ Արցախի մէջ: Ամրապնդեց եւ ընդարձակեց Հայաստանի մէջ իր գործունէութիւնը եւ լայն զարկ տուաւ Մոսկուայի մասնաճիւղին աշխատանքներուն: Ու պէտք է ընդունիլ, որ տարած աշխատանքներուն արդիւնքները եղան աւելի քան գոհացուցիչ: Փաստը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկառու-

տական շարքերուն բազմացումն է: Փաստը Հայաստանի միաւորներուն կազմակերպական եռուն կեանքն է: Փաստը նաեւ Մոսկուայի մասնաճիւղին զգալի աշխուժութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.ի անցնող քառամեակը պատմական կարեւր է նկատել նաեւ այն պատճառով, որ միութիւնը ունեցաւ 8 նոր միաւորներ եւ մասնաճիւղեր աշխարհի տարածքին, ինչ որ դրական երեւոյթ է ընդհանուր նահանջի, այլասերման եւ օտարացման մեր օրերուն:

Վերջապէս, Հ.Մ.Ը.Մ.ի անցնող քառամեակը յատկանշական է, որովհետեւ միութեան սկառուտական եւ մարզական ճիւղերուն կողքին, ան ստեղծեց երկար տարիներէ ի վեր անհրաժեշտութիւն նկատուող միութեան երիտասարդական բաժանմունքը, նախ՝ Եւրոպայի երիտասարդութիւնը համախմբող Վիեննայի 2017-ի հաւաքով ու պալ՝ Աթէնքի 2019-ի երիտասարդական Ա. համագումարով:

Այս բոլոր նորութիւնները կատարուեցան կողքին այն մնացեալ աշխատանքներուն, որոնք ընթացիկ կարգ անցած են արդէն, բայց եւ այնպէս քառամեակէ քառամեակ կը զարգանան ու կը մեծանան: Այսպէս, 2015-2019 Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իրագործեց իմբապետական իր 7-րդ համագումարը, կատարեց Արարատեան կարգը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումը՝ 1192 մասնակիցներու մրցանշային թիւով եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը, դարձեալ աննախընթաց 1250 մասնակիցներով:

Յարգելինէր,
Հոս տեղը չէ ամբողջական թուարկումը կատարելու անց-

նող քառամեակին միութեան կատարած բոլոր աշխատանքներուն: Բայց ճոս տեղն է յիշեցնելու, որ կատարուած հսկայական աշխատանքը իրագործուած է կամաւոր բանակի գոհաբերութեամբ, աշխատասիրութեամբ եւ կարգապահութեամբ:

Իսկ այդ արդէն Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութեան մեծագոյն գաղտնիքն է՝ գոհաբերութիւն, անշահախնդրութիւն եւ տեւաբար լաւին ու լաւագոյնին ձգտելու կամեցողութիւն:

Կամեցողութիւնը, սակայն, առանձինն չի բաւեր՝ եթէ երբեք չըլլան կամաւոր բանակի անդամները, աշխարհասփիւռ 26 հազար Հ.Մ.Ը.Մ-ականները, եւ կամաւոր բանակի հաւատաւոր աջակիցները, որոնց համար այս պաշտօնական ամպլոնէն ունինք շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք:

Շնորհակալութիւն առաջին հերթին հայրենի պետութեան, որ անցնող չորս տարիներուն իր նախարարութիւններուն ճամբով կարելի ամէն դիւրութիւն ընծայեց միութեան զանազան նախաձեռնութիւններուն: Հայաստանի նախագահն ու վարչապետը անձամբ ներկայ գտնուեցան միութեան 100-ամեակի պաշտօնական տօնակատարութեան:

Շնորհակալութիւն Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական հոգեւոր պետերուն, որոնք անվերապահ կերպով

պով աջակից ու մասնակից հանդիսացան միութեան 100-ամեակի աշխատանքներուն: Ամենայն Հայոց Կաթողիկոսը անձամբ այցելեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումի մասնակիցներուն, մինչ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալը 100-ամեակի կոնդակ հրապարակեց եւ «Մ. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը շնորհեց միութեան:

Շնորհակալութիւն միութեան 100-ամեակի տօնակատարութիւններու կնքահայրներուն եւ բոլոր այն բարերարներուն, որոնք իրենց նիւթական օժանդակութեամբ սատար կանգնեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան թէ Շրջանային կամ Մեկուսի վարչութիւններու ծրագիրներուն:

Շնորհակալութիւն մեր մամուլին եւ տեղեկատուական միջոցներուն, որոնք մօտէն հետեւեցան միութեան իրագործումներուն եւ դրականօրէն արձագանգեցին կատարուած բոլոր աշխատանքներուն:

Վերջապէս, շնորհակալութիւն մեր հիւրերուն, որոնք այսօր իրենց ներկայութեամբ կը պատուեն Հ.Մ.Ը.Մ-ը:

Այս ուրախ առիթով, պատիւն ու պարտականութիւնը ունիմ յանուն Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկաներուն ներկայացնելու անակնկալ մը:

Անակնկալը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական երեք եղբայրներու պարգեւատրումն է:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴՐՕՇԱԿԱԿԻՐԸ

(ՀԱՄԱԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ)

101-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ կառույցներու ներկայացուցիչներով անգամ մը եւս համախմբուած էք, այս անգամ հանգամանօրէն քննարկելու եւ արժեւորելու միութեան վերջին քառամեակի գործունէութիւնը, որ յատկանշուեցաւ մասնաւորաբար Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի փառաշուք նշումով, որ ունեցաւ համահայկական տարողութիւն:

Իր բազմաճիւղ գործունէութեամբ, սկստական խիտ շարքերով եւ մարզական մրցունակ խումբերով հարուստ այս միութիւնը է՝ եւ կը մնայ հայապահպանման եւ հայակերտման կարեւորագոյն դարբնոցներէն մէկը: Հ.Մ.Ը.Մ-ը եկաւ դառնալու միութեան 111-րդ մասնաճիւղը՝ հերոսական Արցախի մէջ:

Հարիւրամեակի իր հարուստ փորձառութեամբ զինուած,



չուութեան:

եւ հաւատարիմ իր առաքելութեան, Հ.Մ.Ը.Մ-ը կը շարունակէ քայլ պահել ժամանակին հետ, եւ 21-րդ դարու յարափոփոխ այս աշխարհին մէջ, հայրենիքի սահմաններէն ներս թէ դուրս, կը հանդիսանայ հայեցի դաստիարակութեան եւ ազգային ոգիի փոխանցման առաջնակարգ դրօշակակիրը: Մենք կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ-ը պիտի շարունակէ քայլ իր հիմնադիր սերունդի՝ Շաւարշ Քրիսեանի, Յովհաննէս Հինդլեանի եւ Գրիգոր Յակոբեանի տեսլականին ուղենիշներով:

Կ'ողջունենք, Հ.Մ.Ը.Մ-ի 12-րդ Պատգամաւորական Ժողովի բոլոր մասնակիցները, յաջողութիւն կը մաղթենք ժողովի աշխատանքներուն եւ յաջորդ Կեդրոնական Վարչ-

ՎԵՀ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՈՒ ԴԱՒԱՆԱՆՔԻ ՎՐԱՅ ՅԵՆՈՒԱԾ ԿՈՒՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Կենտրոնական Վարչութեան անունից ողջունում եմ ձեզ եւ շնորհաւորում մեր կազմակերպութեան հերթական Պատգամաւորական Ժողովի բացման, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի մայր հայրենիքում վերահաստատման 30-ամեակի առթիւ: Վաղուց արդէն աներկբայ իրողութիւն է Հ.Մ.Ը.Մ.Ի բացառիկութիւնը հայ ժողովրդի կեանքում, նրա աշխարհասփիւռ զաւակների կրթութեան ու դաստիարակութեան գործում: Անգնահատելի է այն հայպահպան առաքելութիւնը, որ աւելի քան հարիւր տարի իրականացնում է Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքում: Սա վե՛հ արժէքների ու դաւանանքի վրայ յենուած մի կուռ կազմակերպութիւն է, որ կամաւոր, յամառ ու անտրտունջ անցաւ բիւր դժուարութիւններով եւ վաստակեց պատիւ ու յարգանք, բերեց սէր ու միութիւն, իր ծոցում տաք պահեց ազատ հայրենիքի երազն ու հայոց սուրբ Եռագոյնը: Եւ ահա, այսօր, 2019 թ.ին մենք հպարտօրէն կարող ենք ասել, որ մենք յաղթել ենք, մեր Եռագոյնը 30 տարի առաջ կոթողել ենք Արարատի հայեացքի ներքոյ եւ Հ.Մ.Ը.Մ.ը երկար տարիների ընդմիջումից յետոյ վերընձիւղել ենք մայր Հայրենիքում:



Թոյլ տուէք ասել, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը անկախ Հայաստանում, անցնելով բազում դժուարութիւնների միջով, այսօր արդէն կայացած կազմակերպութիւն է: Մեզ յաճախ չհասկացան, չօգնեցին ազգօգուտ առաքելութեան մէջ, նոյնիսկ հետապնդեցին, բայց կոտրել չկարողացան... Խոնարհում ու յարգանք բոլոր նրանց, ովքեր անցնող տարիներին անտրտունջ ու մեծ նուիրումով, ամէնօրեայ տըքնաջան աշխատանքով կայաց-

րին Հայաստանում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը, հաւատարիմ մնացին սկառուտի իրենց երզմանն ու կազմակերպութեան ոգուն: Կարծում եմ այսօր, աւելի քան երբեք, մենք ուժեղ ենք ու լի վճռականութեամբ, կանգնած նոր մտայղացումների ու ծրագրերի իրագործման շեմին...: Վստահ եմ, մօտ ապագայում դրանք նոյնպէս կը դառնան իրականութիւն՝ էլ աւելի ամրացնելով մեր կառոյցն ու աւելացնելով նրա գործելու կարողունակութիւնը:

Միւս կողմէ, մենք կանգնած ենք ժամանակակից աշխարհին յատուկ նոր մարտահրաւէրների առջեւ, որոնք շատ են ու բազմաշերտ, ունեն տարբեր դրսեւորումներ Սփիւռքում ու Հայաստանում, թէ՛ եւ քիչ չեն նաեւ ընդհանուր խնդիրներն ու մտահոգութիւնները: Պիտի փորձենք գտնել ու ճիշդ ձեւակերպել շատ հարցերի պատասխաններ, վերհանել ու վերլուծել մեր հասարակութեան ու յատկապէս երիտասարդութեան առջեւ ծառայած խնդիրները, տեսնել դրանց խորքն ու մշակել նոր, մեթոդապէս հարուստ ծրագրեր, լուծման յստակ ուղիներ:

Ուրախ եմ, որ կրկին միասին ենք, հրաշալի է, որ 2003 թ.ից ի վեր Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ժողովները գումարւում են հայրենիքում ու ամէն անգամ արդիւնաւորութեամբ ազգօգուտ նոր որոշումներով ու ձեռքբերումներով: Մաղթում եմ մեր ժողովին արդիւնաւէտ աշխատանք, կրկին ասում՝ բարով էք եկել ու կրկին շնորհաւորում բոլորիս մեր կազմակերպութեան համար կարեւոր այս յրբեկնական պատմական հանգրուանի համար:



«ԱՐՏԱԿԱՐԳ» ՔԱՌԱՄԵԱԿԷ ՄԸ ԵՏՔ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՒՂԻ ԿԸ ՀԱՐԹԷ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Ապագայ պայմագիրը կրնայ բազմաթիւ բնորոշումներ տալ միութեան 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: Կրնայ հաստատել, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ժողովներու պայմանութեան մէջ, 2019-ի Ընդհանուր Ժողովը մասնակից շրջաններու թիւով «ամէնէն մեծաթիւն էր», մասնակից ներկայացուցիչներու իմաստով «ամէնէն բազմամարդը», «ամէնէն երիտասարդը», իգական ներկայութեան պարագային «ամէնէն պարկառեւիկն»: Եւ դեռ, բազմաթիւ այլ բացարձակութիւններ:

Ապագայ պայմագիրը կրնայ նաեւ այս բոլոր բնորոշումները խորացնել մէկ բառի մէջ՝ «Արտակարգ»: Արտակարգ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով արտակարգ քառամեակէ մը ետք:

Իրաւամբ, 2015-2019 քառամեակը արտակարգ էր,

որովհետեւ ան կը զուգահիշէր միութեան 100-ամեակի բուսականին: Քառամեակի ընթացքին կատարուեցան արտակարգ իրազործումներ, որոնք փայլուն յաջողութեամբ պսակեցին միութեան առաջին հարիւրամեակը: Հերեւաբար, 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը արժեւորեց չորս փարտուան ընթացքին կատարուած բազմաբնոյթ աշխատանքները (կազմակերպչական, սկստութեան, մարզական, երիտասարդական, դաստիարակչական, փնտրեանական, քարոզչական, հրատարակչական...) եւ անոնց հիմամբ ճշդեց յառաջիկայ չորս, երբեմն ալ աւելի՛ երկար փարիներու, իր նպատակային ծրագիրներն ու անմիջական աշխատանքները՝ ի խնդիր աշխարհասփիռ հայ երիտասարդութեան համախմբման ու կազմակերպման, ի շահ հայութեան հզօրացման եւ Հայաստանի զարգացման:

Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 2019-ի կէսօրին, Երեւանի «Մարիոթ» հիւրանոցին մէջ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին պաշտօնական բացումը կատարելէ ետք (տեսնել էջ 8-13), Ժողովը իր նիստերուն սկսաւ նոյն օրը, երեկոյեան ժամը 9.00-ին, Ծաղկաձորի «Մարիոթ» հիւրանոցի Ժողովարահին մէջ:

Ժողովին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի ընթացակարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ նախ մէկ վայրկեան յօտնկայս լռութեան

հրաւիրեց ներկաները՝ յարգելու համար անցնող քառամեակին մեզմէ յաւելած բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն յիշատակը: Ապա, Ժողովականները երգեցին միութեան քայլերգ «Յառաջ նահատակը»:

Իր բացման խօսքին մէջ, եղբ. Մկրտիչեան ողջունեց Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եղբ. Յակոբ Խաչերեանի եւ Թեհրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան ատենապետ Հարմիկ Զովելեանի ներկայութիւնը Ընդհանուր Ժողովին:

Առժամեայ դիւանը բաղկացաւ եղբ. Հայկ Թապազեանէ՝



ատենապետ եւ քոյր Վարդուկ Ֆունդլեանէ (Լիբանան): Լիազօրագիրներու ստուգումէն ի յայտ դարձաւ, որ ժողովին կը մասնակցէին միութեան Շրջանային եւ Մեկուսի 26 շրջաններէն 74 պատգամաւորներ: Գլխաւոր բացականերն էին Հ.Մ.Ը.Մ.Ի Ամմանի, Աղեքսանդրիոյ, Ալքմարի եւ Առնհեմի ներկայացուցիչները: Իսկ առաջին անգամ ըլլալով նման ժողովի մը կը մասնակցէին Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի նորաստեղծ շրջանները:

Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուած էր լիազօր ներկայացուցիչով մը: Ի պաշտօնէ կը մասնակցէին 17 քոյրեր-եղբայրներ (ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յանձնախումբի ատենապետ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի ընդհանուր խմբապետուհի, Կեդրոնական Վարչութեան գործավարութեան անդամներ, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր): Իսկ Կեդրոնական Վարչութեան եւ շրջաններու կողմէ ներկայ էին 25 հրաւիրեալներ, որոնցմէ հինգը՝ Հ.Մ.Ը.Մ.ի

երիտասարդական Ա. համագումարին կողմէ ընտրուած քոյր մը եւ չորս եղբայրներ:

Այս հաստատումները կատարելէ, ապա՝ շրջաններու նիւթական պարտաւորութիւններուն մասին Կեդրոնական Վարչութեան բացատրութիւնը լսելէ եւ համապատասխան տնօրինումները կատարելէ ետք, ժողովը նկատուեցաւ օրինաւոր եւ նախքան իր աշխատանքներուն սկսիլը ընթերցեց ժողովին հրաւիրուած, սակայն բանաւոր կերպով բացակայող եղբայրներ Սարգիս Տէր Պետրոսեանի (Աւստրալիա), Կարպիս Գա-

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 111 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ**

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.	Քաղաք	Հիմն.	Սկաուտ Անդամ	Ընդհ.
			1330	177 1507
Գ. Յակոբեան	Երեւան	1989	163	21 184
Յ. Հինդլեան	Երեւան	1990	95	15 110
Վ. Չաքարեան	Երեւան	1990	56	7 63
Արովեան	Արովեան	1990	68	5 73
Հ. Առուստամեան	Չարենցաւան	1990	25	5 30
Վ. Չերազ	Կիւմրի	1990	82	5 87
Շ. Քրիսեան	Երեւան	1991	144	16 160
Վ. Չերազ	Երեւան	1991	108	30 138
Վ. Բախշեան	Արմաւիր	1991	232	22 254
Հրազդան	Հրազդան	1991	62	6 68
Վ. Ռոստոմեան	Էջմիածին	1992	52	5 57
Մարտունի	Մարտունի	2012	52	5 57
Ա. Ջոհրապեան	Վետի	2014	45	4 49
Տ. Խոյեան	Երեւան	2016	86	19 105
Դ. Վարդան	Երեւան	2019	60	12 72

ԱՐՅԱԽ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Արցախ	2019	45		7	52

ՎՐԱՍՏԱՆ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		45		10	55
Ախալքալաք	2001		Կազմալոյծ		
Ախալցխա	2001		Կազմալոյծ		
Թիֆլիս	2015	45		10	55

ՌՈՒՄԻԱ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Մոսկուա	2008	120		40	160

ԼԻԲԱՆԱՆ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Պէյրուօթ	1924	1412	1038	2066	4516
Չախլէ	1927	270	333	380	983
Թրիփոլի	1929	24	2	30	56
Պ. Համուտ	1929	-	32	47	79
Այնճար	1935	250	89	369	708
Գիւնի	1940	299	55	127	481
Անթիլիաս	1950	-	35	78	113
ժըտէյտէ	1970	315	370	805	1490
Պաուշրիէ	1974	190	45	95	330
Ռաուտա	1998	30	10	90	130
	2011	34	67	45	146

* Ներառեալ՝ Սկ. Շրջ. խմբապետութիւն 7, Շրջանային շեփորախումբ 42, Այնճարի շեփորախումբ 47:

ՍՈՒՐԻԱ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		720	545	312	1577
Դամասկոս	1925	95	18	43	156
Հալէպ	1925	260	335	130	725
Լաթաքիա	1926	130	94	47	271
Գամիշլի	1931	110	78	40	228
Քեսապ	1948	125	20	52	197



պատագալեանի (Լիբանան) եւ Տիրան Շահինեանի (Գանատա) նամակները:

Մնայուն դիւանի ընտրութեան օրակարգին, առժամեայ դիւանի կազմին միացան եղբայրներ Ֆէտի Թափրա՝ ատենապետ (Լիբանան), Շանթ Ժամկոչեան (Արեւելեան Մ. Նահանգներ), քոյրեր Յոլեր Մկրտիչեան (Գանատա) եւ Սիւզի Օհանեան (Արեւմտեան Մ. Նահանգներ)՝ քարտուղարներ:

Խօսք առաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եղբ. Յակոբ Խաչերեան: Ան նախ յիշեց Հ.Մ.Ը.Մ.ի 5-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի (Աթէնք, 1991) իր մասնակցութեանն զրուակ մը, որմէ ետք ժողովականները հրաւիրեց յօտնկալս ծափահարութեամբ ողջունելու Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի ներկայացուցիչին մասնակցութիւնը ժողովին:

Եղբ. Խաչերեան իր խօսքին մէջ հաստատեց, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ը նոյն տեսլականով գործող միաւորներ են, մէկը քաղաքական, իսկ միւսը՝ մարզական-սկաուտական: Անոնք ունին նոյնանման կառոյց եւ աշխատեցանք: Ան ըսաւ, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը ուժեղ է իր ուղեկից միութիւններով: Ան նաեւ մատնանշեց, որ օրուան մարտահրաւէրները բազմաթիւ են: Հ.Մ.Ը.Մ. հարկ է լրջօրէն աշխատի հիմնական երեք մարտահրաւէրներու դիմագրաւման համար:-





ա) Ապագազայնացման վտանգի դիմագրաւում, ինչ որ կ'ենթադրէ համազգային գործակցութիւն եւ ուժերու ամբողջական լարում:

բ) Գրասենեկային կառույցի ստեղծում, որպէսզի կարելի դառնայ աւելի արդիւնաւէտ եւ մասնագիտական գործունէութիւն ունենալ՝ ռազմավարական համապատասխան ծրագիրով եւ անոր գործադրութիւնը ապահովող միջոցներով:

գ) Կազմակերպական ուղղահայեաց յարաբերութիւններու կողքին, միութեան մէջ հորիզոնական յարաբերութիւններու զարգացում, ինչ որ կը կատարուի մեծ կազմակերպութիւններու մօտ, երբ այդ կազմակերպութիւններու տարբեր շրջանները շատ դիւրութեամբ եւ արագութեամբ իրարու փորձառութիւններ կը փոխանակեն եւ միացեալ ծրագիրներ կ'իրականացնեն:

Եղբ․ Խաչերեան իր խօսքը եզրափակեց շեշտելով, որ Հ.Մ.-Ը.Մ.-էն կը սպասուի ազգային գաղափարախօսութեան հիմքով ծրագիրներ մշակել երիտասարդութեան համար՝ նորահաս սերունդները հաւաքական մեր նպատակներուն եւ ընդհանրական իղձերուն շուրջ համախմբելու համար:

Այնուհետեւ, ժողովը իր աշխատանքները շարունակելով ընտրեց արխիւային, հաշուեքննիչ, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամները եւ կազմեց Ընդհանուր Ժողովի աշխատանքային ուժը խմբակները: Կազմակերպական, կանոնադրային, սկաուտական, մարզական, երիտասարդական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, տեղեկատուական արհեստագիտութեան եւ տնտեսական:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի առաջին օրուան առաջին նիստը աւարտեցաւ երեկոյեան ժամը 11.00-ին:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Երեքշաբթի, 15 Հոկտեմբերի առաւօտուն, ընթացակարտ Կեդրոնական Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրներու ներկայացման օրակարգով, ժողովականները դիտեցին հաշուետու մարմինին քառամեայ աշխատանքները ամփոփող տեսանիւթ մը: Կեդրոնական Վարչութեան 117 էջնոց տեղեկագիրը եւ անոր ընթերցուած ձայնագրեալ տարբերակը նախապէս ուղարկուած էին պատգամաւորներուն, հետեւա-

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Դ.Մ.Ը.Մ.Ի 111 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ

Մ. ԱՐԵՒԵԼԸ	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Աղեքսանդրիա*	1912	395	231	688	1314
Գահիրէ*	1914	59	23	270	352
Երուսաղէմ	1935	65	32	78	175
Հայֆա	1937	-	-	35	35
Եաֆա	1937	13	28	-	41
Ամման	1937	35	-	60	95
Քուէյթ	1983	143	108	145	396
Պաղատա**	1949	80	40	100	220

* Աղեքսանդրիոյ «Կամք»ը եւ Գահիրէի «Արարատ»ը Դ.Մ.-Ը.Մ.ի ընտանիքին միացած 1974-ին:
** 35 տարուան ընդմիջումէ ետք Դ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացած 2003-ին:

ԿԻՊՐՈՍ*	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Նիկոսիա	1927	52	3	86	141

* 2003-ին վերամիացած Դ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Աթէնք	1924	194	422	255	871
Գոքինիա	1924	104	277	90	471
Սելանիկ	1928	90	110	85	285
		-	35	80	115

ԵՒՐՈՊԱ	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		256	68	468	792
Լոնտոն	1979	43	26	96	165
Վիեննա	1985	61	-	25	86
Ալմեյլօ	1996	90	20	160	270
Ալքմար	2014	15	12	73	100
Անհեմ	2015	19	-	54	73
Միւնիխ	2015	28	10	60	98

ՖՐԱՆՍԱ	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		141	524	138	803
Փարիզ	1977	70	50	30	150
Վալանս	1983	51	109	58	218
Մարսէյ- «Արծիւ»*	1924	20	365	50	435

* 2007-ին վերամիացած Դ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

ՇՈՒԷՏ	Յիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		143	-	343	486
Վեսթերոս	2014	-	-	Կազմաւոյժ	
Սոտերթելիա	2015	93	-	180	273
Սթոքհոլմ	2015	50	-	163	213

Լուսանկարները՝ ՇԱՆԹ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 111 ՄԱՍՆԱԾԻԴԵՐՈՒ**

ՊՈՒԼԿԱՐԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		159	37	63	259
Սոֆիա	1991	31	7	12	50
Ռուսէ	1991	34	5	17	56
Փլովտիվ	1992	34	5	17	56
Վառնա	1992	41	16	12	69
Շումեդ	1997	10	2	-	12
Պուրկաս	1999	9	2	5	16

ԳԱՆԱՏԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1029	942	398	2369
Մոնթրեալ	1958	459	365	62	886
Համիլթոն միաւոր	1968	-	-	20	20
Թորոնթօ	1969	333	345	109	787
Քէմպրիժ	1977	69	85	97	251
Սէնթ Գաթրինզ	1986	22	30	15	67
Լաւալ	2010	146	81	87	314
Վանքուվեր միաւոր	2018	-	36	8	44

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		369	505	158	1032
Ուաշինկթօն	1971	65	60	24	149
Պոսթըն	1973	76	80	28	184
Նիւ Եորք	1975	-	150	22	172
Նիւ Ճրրզի	1975	22	40	10	72
Շիքակօ	1975	60	45	12	117
Ֆիլատելֆիա	1975	31	25	5	61
Տիքոնոյթ	1976	49	25	13	87
Փորվիտընս	1981	41	43	15	99
Ֆլորիտա	1981	-	15	14	29
Ալաբըմի	1986	9	8	8	25
Շարլոթ միաւոր	2015	16	-	5	21
Մերիմաք միաւոր	2017	-	14	2	16



բար ժամանակի խնայողութեան նպատակով, տեղեկագիրը վերընթերցելու փոխարէն, ժողովականները տեսանիւթի միջոցով վերլիչեցին հոն տեղ գտած գլխաւոր բաժինները (տեսանիւթը դիտել այս կապով՝ <https://www.facebook.com/MyHomenetmen/videos/750236255447171/>), մեծ պատասառ վրայ համակարգչային հեռասփռումով ծանօթացան նիւթական տեղեկագիրին եւ անցան լուսաբանական հարցումներու բաժինին:

Կէսօրուան նիստին, Կեդրոնական Վարչութիւնը իր ատենապետին ճամբով երկուքուկէս ժամ պատասխանեց զոյգ տեղեկագիրներու շուրջ կատարուած լուսաբանական հարցումներուն: Առիթ տրուեցաւ նաեւ Արցախի, Թիֆլիսի եւ Մոսկուայի ներկայացուցիչներուն, որպէսզի ամփոփ զեկուցումներով ծանօթացնեն նորաստեղծ այդ շրջաններուն աշխատանքները: Առանձին զեկուցումով մը հանդէս եկաւ նաեւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը՝ ծանօթացնելով 2018-ին հիմնուած «Հրաշք» բաժանմունքին գործունէութիւնը: Բաժանմունքին մաս կը կազմեն յատուկ կարիքներ ունեցող 43 մարզիկ-մարզիկուհիներ:

Տեղեկագիրներու ընթերցումէն պարզուեցաւ, որ 2015-2019 քառամեակը միութեան համար իսկապէս եղած է արտակարգ քառամեակ մը: Կեդրոնական Վարչութիւնը չորս տարուան ընթացքին ունեցած է բազմաճիւղ, բեղուն գործունէութիւն:

Կեդրոնական Վարչութեան գլխաւոր աշխատանքները եղած են.-

Ա. Կազմակերպական

● Հայաստանի եւ Մոսկուայի շրջաններու վերաշխուժացման աւընթեր, երեք նոր մասնաճիւղերու հիմնում Արցախի, Թիֆլիսի եւ Առնհեմի (Հոլանտա) մէջ: Շրջաններ, իրենց կարգին, չորս նոր մասնաճիւղեր եւ միաւորներ հիմնած են Սաքրամենթոյի, Սանթա Քլարիթայի (Արեւմտեան Մ.





Նահանգներ), Մերիմաք Հովիտի (Արեւելեան Մ. Նահանգներ) եւ Վանդուվրի մէջ (Գանատա):

● Միջ-վարչական դիւանական Թ. խորհրդաժողով (Նիւ-կոսիա, 27-29 Հոկտեմբեր 2016)

● Եւրոպայի ատենապետներու Ա. ժողով (Փարիզ, 19 Մարտ 2016):

● Եւրոպայի ատենապետներու Բ. ժողով (Ալմեյո, 29 Ապրիլ 2017):

● Եւրոպայի ատենապետներու Գ. ժողով (Միւնիխ, 17-18 Մարտ 2018):

● Եւրոպայի ատենապետներու Դ. ժողով (Լոնտոն, 17-18 Մարտ 2019):

● Ամերիկեան ցամաքամասի ատենապետներու Ա. ժողով (Լոս Անճելլոս, 6 Ապրիլ 2019):

● Երիտասարդական Ա. համագումար (Աթէնք, 10-11 Մայիս 2019):

Բ. 100-ամեակի տօնակատարութիւններ

● Միութեան 100-ամեակի փառաշուք տօնակատարութիւններու կազմակերպում Երեւանի, Բիւրականի եւ Կիւմրիի մէջ (Յուլիս 2018):

● Կեդրոնական Վարչութեան 100-ամեակի պատգամի փոխանցում շրջաններու մէջ կատարուած 100-ամեակի տօնակատարութիւններուն (Սեպտեմբեր 2018-Մայիս 2019):

Գ. Սկսուողական

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Է. համագումար (Երեւան, 27-31 Յուլիս 2016):

● Եւրոպայի մասնաճիւղերու Վկայեալ կարգի դասընթացք (Շուէտ, 26-28 Օգոստոս 2016):

● «Արարատեան» կարգի տեսական եւ գործնական դասընթացքներ (Փետրուար-Յունիս 2018 եւ 14-18 Յուլիս 2018):

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ԺԱ. բանակում (Բիւրական, 19-28 Յուլիս 2018):

Դ. Մարզական

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ժ. մարզախաղեր (Հայաստան, 20-29 Յուլիս 2017):

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ Զ.Մ.Ը.Մ.Ի 111 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ

ԱՐԵՄՏԵԱՆ Մ. Ն.	Յիմն.	Սկսուող	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		792	2922	3042	6756
Լոս Անճելլոս	1968	55	135	252	442
Սան Ֆրանսիսքո	1970	47	136	68	251
Սասուլն	1971	34	102	86	222
Մոնթեպելլո	1974	-	150	129	279
Ազատամարտ	1977	53	375	242	670
Արարատ	1978	255	563	1078	1896
Օրէնճ Քաունթի	1979	11	100	31	142
Մասիս	1979	26	460	420	906
Սեւան	1983	20	22	115	157
Արազ	1990	18	27	50	95
Անի	1991	45	72	68	185
Շանթ	1993	92	480	129	701
Սիփան	1995	60	205	172	437
Արցախ	1997	33	30	22	85
Ֆինիքս	1998	-	-	41	41
Կարս	1999	21	13	13	47
Ջաւախք	2011	22	37	56	115
Լոռի միաւոր	2016	-	-	23	23
Կիլիկիա միաւոր	2017	-	15	18	33
Յրաշք	2018	-	-	29	29

Հ. ԱՄԵՐԻԿԱ	Յիմն.	Սկսուող	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		332	492	512	1336
Պուէնոս Այրես	1927	143	402	341	886
Գորտոպա	1979	97	45	78	220
Մոնթեվիդեո	1987	92	45	93	230

ԱՄՍՐԱԼԻԱ	Յիմն.	Սկսուող	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		281	615	562	1458
Սիտնի «Անդրանիկ»	1965	110	347	210	667
Մելպուռն «Արաքս»	1966	41	58	87	186
Սիտնի «Նաւասարդ»	1973	56	30	55	141
Սիտնի «Կամք»	1981		Կազմաւոյժ		
Սիտնի «Արարատ»	1989	74	180	210	464

● Մարզախաղերու կանոնադրութեան վերամշակում (2018-2019):

Ե. Հրատարակչական

● «Մարզիկ» պաշտօնաթերթի 16 թիւերու հրատարակութիւն: Թերթի 35-ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւն (Յուլիս 2016):

● «Ալպում Հ.Մ.Ը.Մ.ի Վարդգէս Տէր Կարապետեան թանգարան»-ի հրատարակութիւն (Յուլիս 2018):

● «Դէպի յաղթանակ» (Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ երթին նուիրուած 100 ստեղծագործութիւն, 100 դէմք) հատորի հրատարակութիւն (Հոկտեմբեր 2019):

Զ. Տեղեկատուական արհեստագիտութիւն

● Նոր կայքէջի ստեղծում (Դեկտեմբեր 2017):



ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ. 1918-1931

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիր ժողովը կը գումարուի 16 Նոյեմբեր 1918-ին, Յակոբեան եղբայրներու գրասենեակին մէջ, Վիթալի խան, Պոլիս: Այս ժողովին միութեան անդրանիկ Կեդրոնական Վարչութիւնը կը կազմուի հետեւեալներէն.- Գրիգոր Յակոբեան ատենապետ, Տիգրան Խոյեան՝ ատենադպիր, Լեւոն Յակոբեան, Հայկ Ճիգմէճեան, Գարլօ Շահինեան, Վահրամ Փափազեան եւ Ժիրայր Խորասանճեան անդամներ:

Այնուհետեւ, տարեկան եւ ի հարկին քանի մը ամսը-ւան յաջորդականութեամբ կը գումարուին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ՝ ճշդելու համար միութեան գործունէութեան ընդհանուր ուղղութիւնը եւ ընտրելու համար այդ գործունէութիւնը ղեկավարող Կեդրոնական Վարչութիւնները: Այսպէս՝

Առաջին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ 16 Նոյեմբեր 1919-ին, Պոլիս, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Պոլսոյ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: Ան կը նկատուի միութեան վաւերական հիմնադրութեան ժողովը:

Ժողովը կ'որոշէ մինչեւ մէկուկէս ամիս գումարել նոր Ընդհանուր Ժողով մը, որուն մասնակցին իւրաքանչիւր մասնաճիւղէ երկուքական սկաուտ խմբապետներ՝ նշանակուած մասնաճիւղերու վարչութիւններուն կողմէ եւ զոյգ պատգամաւորներ՝ ընտրուած մասնաճիւղերու ընդհանուր ժողովներուն կողմէ:

Երկրորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ 9 Մայիս 1920-ին, Պոլսոյ Եսայեան վարժարանին սրահը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր մասնաճիւղերու երիտասարդ պատգամաւորներուն: Կը բացակային միայն Սան Սբեֆանոյի մասնաճիւղին

պատգամաւորները: Ժողովը կ'ընտրէ նոր Կեդրոնական Վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.- Արշակ Յակոբեան, Յովհաննէս Հինգղեան, Գրիգոր Յակոբեան, Ժիրայր Խորասանճեան, Գրիգոր Մերճանօֆ, տորք. Կ. Մուրաֆեան եւ Պօղոս Շապոյեան:

Երրորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ 20 Մարտ 1921-ին, Պոլսոյ Գարակեօզեան որբանոցին սրահը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի 16 մասնաճիւղերու 45 լիազօր պատգամաւորներու: Ժողովը կ'ընտրէ նոր Կեդրոնական Վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն.- Ժիրայր Խորասանճեան, Պօղոս Շապոյեան, Գարլօ Շահինեան, Վահրամ Փափազեան, Հայկ Ճիգմէճեան եւ Գրիգոր Յակոբեան: Վերջին երկուքին մերժումին վրայ, կազմը կ'ամբողջանայ Արարատ Քրիսեանով եւ Հրաչեայ Տէր Ներսէսեանով:

Չորրորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ 19 Յունիս 1921-ին, Պոլիս: Ժողովին կը վաւերացուի միութեան առաջին Ծրագիր-Կանոնագիրը: Կ'ընտրուի նոր Կեդրոնական Վարչութիւն:

Հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ 27 Նոյեմբեր 1921-ին, Բերայի ազգային մատենադարանին սրահը, մասնակցութեամբ 27 լիազօր պատգամաւորներու: Ժողովը կը յառաջաձգուի չորրորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ընտրուած Կեդրոնական Վարչութեան անդամներուն մեծամասնութեան հրաժարման պատճառով: Նոր Կեդրոնական Վարչութիւն կ'ընտրուին հետեւեալները.- Խաչիկ Ալեանաքեան, Յակոբ Անտոնեան, Չարեհ Խորասանճեան, Արամ Կեսարեան, Հայկ Ճիգմէճեան, Թորոս Մեծատուրեան, Լեւոն Յակոբեան, տորք. Ա. Սալբի եւ Քրիս Յէներճեան:



Հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն կարճ ատեն մը ետք, քաղաքական անյադա-
հարելի պայմաններու բերումով, Հ.Մ.Ը.Մ. լուծուած
կը յայտարարէ իր կազմակերպութիւնը Թուրքիոյ
մէջ: Միութիւնը կ'անցնի Սփիւռք, ուր Պատգամաւոր-
ական Ընդհանուր Ժողով գումարելու կարելիու-
թիւնը կը դժուարանայ: Փորձեր կը կատարուին Հ.Մ.-
Ը.Մ.ի Նիւ Եորքի մասնաճիւղին, Փարիզի շրջանին,
Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան
կողմէ նման ժողովի մը գումարումը յաջողցնելու հա-
մար: Միակ լուրջ փորձը կը յաջողի Մարտ 1931-ին,
երբ Ֆրանսայի Շրջանային Վարչութեան նախաձեռ-
նութեամբ կը գումարուի Պատգամաւորական Ընդ-
հանուր Ժողով մը, որուն կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի
Սուրիոյ, Լիբանանի, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Յու-
նաստանի, Հարաւային Ամերիկայի, Հիւսիսային
Ամերիկայի, Եգիպտոսի եւ Ֆրանսայի շրջանները:

Ժողովը կը մշակէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական առա-
ջին կանոնագիրը, միութեան մայր կանոնագիրին մէջ
կարգ մը փոփոխութիւններ կը կատարէ եւ կ'ընտրէ
արտասահմանի Կեդրոնական Վարչութիւն մը՝ հե-
տեւեակներէն.- Լեւոն Կիւմիւշկերտեան, Լ. Բաշալ-
եան, տոքթ. Լ. Գրիգորեան, Չ. Խանգատեան, Ներ-
սէս Օհանեան, Ն. Գարայեան եւ Ա. Չաքըրեան: Նո-
րընտիր Կեդրոնական Վարչութիւնը հազիւ տարի մը
բոլորած, կը ցրուի եւ անուանական գոյութիւն կ'ու-
նենայ:

1932-էն ետք, Հ.Մ.Ը.Մ. կը դադրի Կեդրոնական
Վարչութիւն ունենալէ: Պէտք կ'ըլլայ սպասել մինչեւ
1974, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի ստեղծում,
նոր ժամանակներու Պատգամաւորական Ընդ-
հանուր Ժողովներ գումարելու եւ միութիւնը վերստին
Կեդրոնական Վարչութեան կազմերով օժտելու հա-
մար:

**Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի
աշխատանքային յանձնախումբերը:**

● Հ.Մ.Ը.Մ.ի Online Shope-ի դրուութեան ստեղծում (Մարտ
2018):

Է. Տնտեսական

● Հ.Մ.Ը.Մ.ի եկամտաբեր Հիմնադրամի՝ Endowment
Fund-ի Հաստատում (Արեւելեան Մ. Նահանգներ, Դեկտեմբեր
2017):



ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ. 1929-1974

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները միութեան գերագոյն ժողովներն են, որոնց որոշումները պարտադիր են Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն համար: Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները կ'ընտրեն միութեան գերագոյն գործադիր մարմինը՝ Կեդրոնական Վարչութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան սկզբնական շրջանին, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ գումարուած են տարեկան եւ ի պահանջեալ հարկին՝ քանի մը ամսըւան յաջորդականութեամբ (1919, 1920, Մարտ 1921, Յունիս 1921, Նոյեմբեր 1921):

Միութեան համագաղութային կառոյցին ստեղծումէն՝ 1974-էն սկսեալ, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները գումարուած են չորս տարին անգամ մը, համախմբելով միութեան մեծ ընտանիքին աշխարհասփիւռ մասնաճիւղերը:

1974-էն առաջ, Պատգամաւորական Ժողով հասկացողութիւնը ունեցած է աւելի նեղ իմաստ եւ երկու տարին անգամ մը համախմբած է միութեան Միջին Արեւելքի մասնաճիւղերը: Այսպէս, 1929-1973, 44 տարուան ընթացքին գումարուած են 20 Պատգամաւորական Ժողովներ, որոնց աւարտին ընտրուած են պատասխանատու կազմեր, որոնք սկզբնական տարիներուն կոչուած են «Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութիւն»ներ:

1937-էն սկսեալ, Երուսաղէմի մասնաճիւղն ալ ներառնուելով այս կազմին մէջ, Շրջանային Վարչութիւնը կոչուած է «Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւն»: 1946-ին, Ամմանի մասնաճիւղին

Երուսաղէմէն անջատ մասնաճիւղ ճանաչումէն ետք, կազմը կոչուած է «Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդրյորդանանի Շրջանային Վարչութիւն», իսկ աւելի ուշ՝ 1960-էն սկսեալ, 15-րդ Պատգամաւորական Ժողովի որոշումով եւ գործնական նկատառումներով, Շրջանային Վարչութիւնը կոչուած է «Հ.Մ.Ը.Մ.Ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւն»:

Պատգամաւորական Ժողովներու պատկերը կը ներկայացնէ հետեւեալը.-

Ա. Պատգամաւորական Ժողով, 31 Մարտ-1 Ապրիլ 1929, Պէյրութ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի, Չահլէի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու:

Բ. Պատգամաւորական Ժողով, 28 Յունիս 1931, Պէյրութ, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի, Թրիփոլիի, Պալպէի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու:

Գ. Պատգամաւորական Ժողով, 2-4 Յուլիս 1933, Պէյրութ, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի, Լաթաքիոյ, Թրիփոլիի, Չահլէի, Անտիոքի եւ Ալեքսանտրէի մասնաճիւղերու:

Դ. Պատգամաւորական Ժողով, 13 Յուլիս 1935, Պէյրութ:

Ե. Պատգամաւորական Ժողով, 10 Յուլիս 1937, Պէյրութ, մասնակցութեամբ Սուրիոյ, Լիբանանի եւ Երուսաղէմի մասնաճիւղերուն:

Չ. Պատգամաւորական Ժողով, 14-15 Դեկտեմբեր 1940, Պէյրութ:

Է. Պատգամաւորական Ժողով, 2-3 Դեկտեմբեր 1942, Պէյրութ:

● **Հ.Մ.Ը.Մ.Ֆ**-ի 100-ամեակի դրամահավաքի կալա-ընթրիքին 700.000 ամ. տոլարի հանգանակութիւն (Յուլիս 2018):

Չորս տարի առաջ միութիւնը կը հաշուէր 104 մասնաճիւղեր եւ միաւորներ: Այսօր ան կը հաշուէ 111 մասնաճիւղեր եւ միաւորներ, առաւել՝ Արեւմտեան Մ. Նահանգներու յատուկ կարիքներ ունեցող մարզիկներու «Հրաշք» բաժանմունքը, որ ողջունելի նախաձեռնութիւն է եւ նորութիւն՝ հայ իրակա-նութեան համար: Այլ նորութիւն մըն է միաւորի դրութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ.Ֆ-ի ռազմավարական ծրագրի գաղափարներէն մէկն է եւ լաւապէս կը յարմարի այն փոքրաթիւ գաղութներուն, որոնք սկստական խմբակ մը կամ անդամական կո-րիկ մը ունենալու յարմարութիւնը ունին, առանց մասնաճիւղի մը բազմաճիւղ գործունէութեան կարելիութիւնները ու-

նենալու: Նման միաւորներ այսօր կը գործեն Գանատայի, Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու մէջ (Վանգու-վըր, Համիլթըն, Սաքրամենթօ, Սանթա Բարբարա, Շարլոթ եւ Մերիմաք Հովիտ):

Հիմնական նորութիւնը, անկասկած, Հ.Մ.Ը.Մ.Ֆ-ի Արցախի մասնաճիւղն է, որուն հիմնադրութիւնը տարիներու երազ մըն էր: Մասնաճիւղը կը գործէ Ստեփանակերտի մէջ, Հայաս-տանէն գործուղուած սկստական գործիչով եւ եօթը հոգի-նոց վարչութեամբ: Նորութիւն է նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ֆ-ի Թիֆլիսի մասնաճիւղը, որուն աշխատանքային պայմանները բաւական դժուար եւ իւրայատուկ են:

Անդամական ընդհանուր թիւերու լեզուով խօսելով, անց-նող քառամեակին նկատառելի յաջողութիւն արձանագրած են Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը (61 առ հարիւրի ած), Վիեննան (59 առ

Ը. Պատգամաւորական Ժողով, 23-25 Գեկտեմբեր 1944, Պէյրութ, մասնակցու-թեամբ Հալէպի, Պէյրութի, Գամակոսի, Պուրճ Համու-տի, Երուսաղէմի, Հայֆայի, Տէր Չօրի, Թրիփոլիի, Պաալ-պէքի, Լաքաքիոյ եւ Չահլէի մասնաճիւղերու:

Թ. Պատգամաւորական Ժողով, 15-17 Փետրուար 1947, Պէյրութ, մասնակցու-թեամբ 15 մասնաճիւղերու:

Ժ. Պատգամաւորական Ժողով, 21-23 Յունուար 1949, Պէյրութ:

ԺԱ. Պատգամաւորական Ժողով, 31 Մարտ 1951, Հա-լէպ: Ծրջանի 21 մասնաճիւղե-րու կարգին, ժողովին կը մաս-նակցին Հ.Մ.Ը.Մ.Ֆ-ի Յունաս-տանի եւ Գահիրէի մասնաճիւղերէն ներկայացուցիչներ:

ԺԲ. Պատգամաւորական Ժողով, 15-17 Յունուար 1954, Պէյրութ:

ԺԳ. Պատգամաւորական Ժողով, 7-9 Յունուար 1956, Պէյրութ, մասնակցութեամբ Հալէպի, Գամիշլիի, Լաքաք-իոյ, Արաք Բունարի, Հոմսի, Գամակոսի, Պէյրութի, Պուրճ Համուտի, Թրիփոլիի, Չահլէի, Ճիւնիի, Հատէքի, Երուսաղէմի եւ Ամմանի մասնաճիւղերու:

ԺԴ. Պատգամաւորական Ժողով, 7-8 Յունուար 1958, Պէյրութ:

ԺԵ. Պատգամաւորական Ժողով, 13-15 Ապրիլ 1960, Հալէպ, մասնակցութեամբ շրջանի 19 մասնաճիւղերու:

ԺԶ. Պատգամաւորական Ժողով, 27 Փետրուար 1965, Պէյրութ:



ԺԷ. Պատգամաւորական Ժողով, 26-26 Փետրուար 1967, Պէյրութ:

ԺԸ. Պատգամաւորական Ժողով, 1-2 Մարտ 1969, Պէյրութ: Ժողովին կը մասնակցին միայն Լիբանանի 6 մասնաճիւղերու եւ Մոնթրէալի մասնաճիւղին ներկայա-ցուցիչները:

ԺԹ. Պատգամաւորական Ժողով, 9-10 Յունուար 1971, Պէյրութ:

Ի. Պատգամաւորական Ժողով, 10-11 Փետրուար եւ 10-11 Մարտ 1973, Պէյրութ, մասնակցութեամբ Պէյրու-թի, Պուրճ Համուտի, Թրիփոլիի, Ճիւնիի, Անթիլիասի, Չահլէի, Այնճարի, Գամատայէն Մոնթրէալի եւ Թորոն-թոյի մասնաճիւղերու: Խորհրդակցական ձայնով կը մասնակցին նաեւ Կիպրոսի ՀԵՄ-ի եւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»-ի ներկայացուցիչները:



հարիւր), Վալանսը (53.52 առ հարիւր), Ալմերոն (37.7 առ հարիւր) եւ Գանատան (37 առ հարիւր): Հիմնովին վերականգնած է Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի մասնաճիւղը՝ անդամներու թիւը հասցնելով 160-ի (120 սկառուտներ եւ 40 անդամներ): Զանազան դժուարութիւններու պատճառով, անդամական թիւի նուազում ունեցած են Կիպրոսը (38 առ հարիւր), Լոնտոնը (31 առ հարիւր) եւ Հայֆան (22 առ հարիւր): Աղեքսանդրիոյ մասնաճիւղը կազմալուծուած է, իսկ Մոսկուի եւ Վեսթերոսի (Շուէտ) մասնաճիւղերը դադրած են գոյութիւն ունենալէ՝ առաջինը արտագաղթի, երկրորդը՝ գաղութային ներքին պայմաններու պատճառով:

Կ'արժէ նշել, որ անցնող քառամեակին, միութեան անդամական ընդհանուր թիւը արձանագրած է 12.7 առ հարիւրի աճ: Միջին Արեւելքի մէջ այդ աճը եղած է 4.47 առ հարիւր հա-

մեմատութեամբ, Եւրոպայի մէջ՝ 6 առ հարիւր, Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ՝ 12.2 առ հարիւր, Արեւելեան Մ. Նահանգներու մէջ՝ 0.97 առ հարիւր, Գանատայի մէջ՝ 37 առ հարիւրի, Աւստրալիոյ մէջ՝ 13 առ հարիւր:

Սկատուական թիւերու պարագային, հակառակ տարածւած թիւը կարծիքին, միութեան սկառուտական շարքերը անցնող չորս տարին արձանագրած են 15.77 առ հարիւրի աճ: Թիւի մեծագոյն բարելաւումները կատարուած են Վիեննա (117.8 առ հարիւրի աճ), Հայաստան (83 առ հարիւր), Գանատա (43.3 առ հարիւր), Սոտերթելիա (43 առ հարիւր), Հարաւային Ամերիկա (41.27 առ հարիւր), Փարիզ (40 առ հարիւր) եւ Աւստրալիա (24.3 առ հարիւր): Տեղ-տեղ արձանագրուած են նուազումներ: Սկառուտական թիւի ամէնէն աւելի անկում ունեցած են Լոնտոն (49.5 առ հարիւր), Արեւմտեան Մ. Նահանգներ (31 առ հարիւր), Միւնիխ (30 առ հարիւր), Ամման (30 առ հարիւր) եւ Քուէյթ (28.5 առ հարիւր):

Մարզականի պարագային, նկատելի է միութեան մարզիկներու ընդհանուր թիւի 6.49 առ հարիւրի նուազում: Ամէնէն աւե-



ԵՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ. 1974-2019

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԺԱՍՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՏԳԱՍՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1974-էն՝ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին ստեղծումէն մինչեւ օրս գումարուած են 12 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ, մասնաճիւղերու մասնակցութեան հետեւեալ պատկերով.-

- Ա. Պատգ. Ժողով- Պէյրութ, 13-15 Գեկտ. 1974, 28 մասնաճիւղ:
- Բ. Պատգ. Ժողով- Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979, 46 մասնաճիւղ:
- Գ. Պատգ. Ժողով- Աթէնք, 14-17 Ապրիլ 1983, 55 մասնաճիւղ:
- Դ. Պատգ. Ժողով- Աթէնք, 17-20 Ապրիլ 1987, 57 մասնաճիւղ:
- Ե. Պատգ. Ժողով- Աթէնք, 29 Մարտ-3 Ապրիլ 1991, 62 մասնաճիւղ
- Զ. Պատգ. Ժողով- Պէյրութ, 11-17 Ապրիլ 1995, 83 մասնաճիւղ:
- Է. Պատգ. Ժողով- Պէյրութ, 31 Մարտ-5 Ապրիլ 1999, 87 մասնաճիւղ:
- Ը. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003, 90 մասնաճիւղ:
- Թ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 19-23 Յունիս 2007, 99 մասնաճիւղ:
- Ժ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 5-10 Սեպտ. 2011, 102 մասնաճիւղ:
- ԺԱ. Պատգ. Ժողով- Աղվերան, 7-11 Սեպտ. 2015, 104 մասնաճիւղ:
- ԺԲ. Պատգ. Ժողով- Ծաղկաձոր, 14-19 Հոկտ. 2019, 111 մասնաճիւղ:



լի կորուստ ունեցած են Կիրորոս (87.5 առ հարիւր), Պաղտատ (72.2 առ հարիւր), Գահիրէ (55.7 առ հարիւր), Լոնտոն (54.3 առ հարիւր), Ալմեյո (53.4 առ հարիւր), Արեւմտեան Մ. Նահանգներ (27 առ հարիւր) եւ Աւստրալիա (26 առ հարիւր): Գտնուած են նաեւ շրջաններ, ուր մարզական կեանքը ծաղկում ապրած է մարզիկներու թիւի յաւելումով: Այսպէս, մարզիկներու թիւի կարեւոր աճ ունեցած են Վալանսը (72.5 առ հարիւր), Երուսաղէմը (68.4 առ հարիւր), Գանատան (46 առ հարիւր), Հարաւային Ամերիկան (42.6 առ հարիւր) եւ Քուէյթը (35 առ հարիւր): Երկու շրջան (Սթոքհոլմ եւ Հայֆա) դադրած է մարզիկ ու մարզական կեանք ունենալէ:

Սկստական եւ մարզական թիւերէ անկախ, անցնող քառամեակին, միութեան պարզ անդամներու (ո՛չ սկստ, ո՛չ մարզիկ) թիւը արձանագրած է 34.36 առ հարիւրի աճ: Ամէնէն յուսալից թիւերը արձանագրած են Արեւմտեան Մ. Նահանգները (252 առ հարիւր), Աւստրալիան (140 առ հարիւր), Վիեննան (102.2 առ հարիւր), Սոտերթեյիան (50 առ հարիւր) եւ Սթոքհոլմը (48 առ հարիւր): Պարզ անդամներու թիւերու մտահոգիչ անկում ունեցած են Պաղտատը (62.26 առ հարիւր), Կիպրոսը (43 առ հարիւր), Հարաւային Ամերիկան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Բ.Մ.ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովը Թուրքիոյ կողմէ Հիւսիսային Սուրիա ներխուժելու քայլին անդրադառնալով, խստօրէն կը դատապարտէ միջազգային օրէնքները ոսոնակոխող այս անմարդկային արարքը:

Միութեան գերագոյն ժողովին մասնակցող բոլոր անդամները իրենց ամբողջական զօրակցութիւնը կը յայտնեն Սուրիոյ ճեզիրէի շրջանի հայութեան եւ յատկապէս Հ.Մ.Բ.Մ.ի Գ-ամիշլիի մասնաճիւղի քոյրերուն ու եղբայրներուն, որոնք այս պահուն պատնէշի վրայ կանգնած, հաւատարիմ Հ.Մ.Բ.Մ.ական երդումին, իրենց ամբողջ կարողականութիւնը ի սպաս դրած են մեր ժողովուրդի ծառայութեան եւ ապահովութեան:

Մարդկութեան պատմութեան մէջ նորութիւն չէ բուրք-օսմանեան պետական այս քաղաքականութիւնը, որ դարերու ընթացքին միշտ սպառնացած եւ կործանած է ազգային փոքրամասնութիւններու պատմական արժէքներն ու մշակոյթները:

Առ այդ, յանուն Հ.Մ.Բ.Մ.ի մեծ ընտանիքի անդամներուն, կոչ կ'ուղղենք միջազգային ընտանիքին, որպէսզի Թուրքիոյ պարտադրէ անյապաղ կասեցնել իր ներխուժումը եւ վերահաստատել շրջանին մէջ խաղաղութիւնը եւ անմեղ քաղաքացիներու ազգային անվտանգութիւնը:

17 Հոկտեմբեր 2019

Ծաղկաշոր, Հայաստան

Հ.Մ.Բ.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱՐԱՐԱԿԱՆ
12-ՐԴ ԸՆԴ-ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ





ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Ամենէն բազմանդամը- Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու պատմութեան մէջ, 12-րդ Ընդհանուր Ժողովը ամենէն բազմանդամն էր մասնակիցներու թիւով: Ժողովին ներկայ էին 117 քոյրեր եւ եղբայրներ, 75-ը իրաւասու ձայնով պատգամաւորներ, 17-ը՝ ի պաշտօնէ ներկայներ եւ 25-ը՝ հրաւիրեալներ:

Կրտսերագոյնը- Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կրտսերագոյն մասնակիցն էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամ եղբ. Սեակ Նազարեան՝ 22 տարեկան ինը ամսու:



Ընդհանուր Ժողովներու պատմութեան մէջ, կրտսերագոյն ներկայացուցիչը եղած է Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն եղբ. Հրաչ Սիսեռեան, որ 1979-ին, միութեան Բ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցած է ... 22 տարեկան ութը ամսու:

Առաջինը- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու պատմութեան մէջ առաջին ընդհանուր խմբապետուհին դառնալէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանէն քոյր Թալին Օրտոդլեան դարձաւ նաեւ առաջին քոյրը, որ մաս կը կազմէ միութեան գերագոյն մարմինին՝ Կեդրոնական Վարչութեան:



(34.6 առ հարիւր), Արեւելեան Մ. Նահանգները (32.4 առ հարիւր) եւ Երուսաղէմը (29 առ հարիւր):

Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովին ներկայացուած տուեալներով, այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ 111 մասնաճիւղերը կը հաշուեն 7815 սկաուտներ, 8337 մարզիկներ եւ 9325 պարզ անդամներ, ընդհանուր՝ 25477 թիւով: Քառամեակին ընթացքին միութիւնը ունեցած է 2872 նոր անդամ: Այն պահուն, երբ մարզիկներու թիւը նուազած է 578-ով, սկաուտներու թիւը աւելցած է 1065-ով, իսկ պարզ անդամներու թիւը՝ 2385-ով: 25477 անդամներու ընդհանուր թիւը բաժնուած է հետեւեալ ձևով.- Հայաստան 1507, Արցախ 52, Վրաստան 55, Մոսկուա 160, Միջին Արեւելք 7407, Եւրոպա 3352, Արեւմտեան Մ. Նահանգներ 6756, Արեւելեան Մ. Նահանգներ 1032, Գանատա 2369, Հարաւային Ամերիկա 1336 եւ Աւստրալիա 1451 (իւրաքանչիւր շրջանի մասնաճիւղերու անդամական թիւերը տեսնել թուային առանձին տախտակներով):

Տեղեկագիրներու ներկայացումէն եւ լուսաբանական հարցում-պատասխաններէն ետք, Երեքշաբթի, 15 Հոկտեմբերի յետմիջօրէի երկու նիստերը եւ Չորեքշաբթի, 16 Հոկտեմբերի առաւօտեան նիստը յատկացուեցաւ ժողովականներու ըստ հովանի արտայայտութիւններուն եւ Կեդրոնական Վարչութեան ինքնապաշտպանութեան խօսքին:

Ընթերցուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ողջոյնի գիրը՝ ուղղուած Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին (տեսնել էջ 49): Նկատի ունենալով հիւսիսային Սուրիոյ հայութեան ճգնաժամային պայմանները՝ փափաք յայտնուեցաւ ժողովին կողմէ սուրիահայութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին զօրակցութեան յայտարարութիւն մը հրապարակել երկիւղով՝ հայերէն եւ անգլերէն (Յայտարարութեան հայերէն բնօրինակը տեսնել էջ 31):

Այնուհետեւ, ժողովականները լսեցին արխիւային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերուն զեկուցումները, որոնք ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը նկատեցին «Յոյժ գնահատելի»:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻՆԵՐԸ
Չորեքշաբթի, 16 Հոկտեմբերի յետմիջօրէին եւ Հինգշաբթի

Թի 17 Հոկտեմբերի առաւօտուն, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը ընթացակարգ աշխատանքային նիստերու դրութեամբ: Աշխատանքային ութը յանձնախումբեր՝ կազմակերպական, կանոնադրային, սկաուտական, մարզական, երիտասարդական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, տեղեկատուական արհեստագիտութեան եւ տնտեսական, առանձին հանդիպումներով քննարկեցին իրենց վստահուած օրակարգի կէտերը եւ շրջաններու բանաձեւերու հիմամբ պատրաստեցին որոշումի կարգ անցնելիք առաջարկները: Հինգշաբթի յետմիջօրէին եւ Ուրբաթ, 18 Հոկտեմբերի առաւօտուն գումարած նիստերուն որդեգրուելէ ետք՝ այդ առաջարկները դարձան Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ քառամեակի գործունէութիւնը առաջնորդող սկզբունքներ:

Յանձնախումբերու կողմէ ներկայացուած եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ որդեգրուած հիմնական որոշումներուն այստեղ կ'արժէ անդրադառնալ ընդհանուր գիծերով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

- Զարկ տալ զանազան շրջաններու մէջ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներու կազմակերպման (մարզախաղեր, համագումարներ...), որպէսզի այդ ձեւով զաղուծային կեանքի վերաշխուժացում կատարուի:

- Կազմակերպել Միջին Արեւելեան շրջաններու ատենապետներու ժողովներ (զէթ տարին մէկ անգամ), նկատի ունենալով Միջին Արեւելեան շրջաններու հայութեան թիւին նըլազումը, ձուլումի վտանգն ու արտագաղթը, որոնք իրենց բացասական ազդեցութիւնը կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն վրայ:

- Ուսումնասիրել զանազան շրջաններու մէջ միաւորներու ստեղծման փորձառութիւնը, որ 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշում էր եւ անցնող քառամեակին փորձարկուեցաւ կարգ մը շրջաններու մէջ, եւ ըստ այնմ կանոնադրային համապատասխան յօդուածներով ներկայա-նալ Պատգամաւորական յաջորդ Ժողովին:

- Մշակել ընկերային ծառայութեան ծրագիր մը, որ իւրանքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի առիթ կու տայ մասնակցելու



ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Հայր ու զաւակ... եղբայրներ- Միութեանկանո-թիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մէջ յաճախ կը պահուի ընտանեկան շարունակականութեամբ: Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ներկայ էին այս հաստատումին լաւագոյն օրինակը ներկայացնող երեք հայր ու զաւակներ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իրարու եղբայրներ. Մկրտիչեան Գառնիկ եւ Նժդէհ, Կարապետեան Սագօ եւ Սեւակ, Սիսեռեան Հրաչ եւ Արամ:

Առաւելագոյն մասնակցութիւն-

Իւրաքանչիւր Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի փորձ կը կատարուի գիտնալու, թէ ներկաներէն ո՞ր եղբայրը կամ քոյրը առաւելագոյն թիւով Ընդհանուր Ժողովներու մասնակցած է: Այս ժողովին պարզուեցաւ, որ առաւելագոյն մասնակցութեան պատիւը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի անդամ եղբ. Հրաչ Սիսեռեանի: Ան ներկայ գտնուած է միութեան 12 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներէն 9-ին: Իրեն կը յաջորդեն եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան՝ 8 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մասնակցութիւն, Արմանո թորգոմեան՝ 7, Մոսիկ Թովուկեան եւ Վիգէն Ասագեան՝ վեցական Ընդհանուր Ժողովներու մասնակցութիւն:



Կարելոր յառաջընթաց-

12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի ուշագրաւ երեւոյթներէն էր քոյրերու մեծաթիւ ներկայութիւնը: Պատգամաւորական Ժողովներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, քոյրեր կը կազմէին ներկաներու թիւին 23.36 առ հարիւր՝ 25 ներկաներ 117-ի վրայ: ԺԱ. Պատգա-



ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

մատրական Ընդհանուր Ժողովին քոյրերու ներկայությունը հագի 6.6 առ հարիւր էր՝ 6 քոյրեր 90-ի վրայ:

Ժ. Պատգամատրական Ժողովին քոյրերը կը կազմէին ներկայութեան պատկերին 16.30 առ հարիւրը՝ 15 քոյրեր 92-ի վրայ: Թ. Ընդհանուր Ժողովին պատկերը 5.40 առ հարիւր էր՝ 6 ներկայ 111-ի վրայ, իսկ Ը. Պատգամատրական Ընդհանուր Ժողովին 9.4 առ հարիւր՝ 8 ներկայ 85-ի վրայ:

Մեծ յեղափոխականի յիշատակին- Պատգամատրական Ժողովին վերջին օրուան առաջին նիստը սկսաւ վայրկեան մը յոտնկայս լուծեամբ: Պատգամատր եղբօր մը առաջարկով, ժողովը վայրկեան մը լուծեամբ յարգեց 160 տարի առաջ նոյն օրը՝ 18 Հոկտեմբեր 1859-ին ծնած Քրիստափոր Միքայէլեանի խնկելի յիշատակը:

Առ ի գօրակցութիւն- Իր աշխատանքներուն երրորդ օրը, Պատգամատրական Ընդհանուր Ժողովը հրապարակեց հիւսիսային Սուրիոյ հայութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին գօրակցութեան յայտարարութիւն մը (տեսնել էջ 31), որ յղուեցաւ մամուլին եւ ընկերային ցանցերուն: Հաղորդագրութիւնը թարգմանուելով լոյս տեսաւ նաեւ անգլիատառ մամուլին մէջ:

Դէտի հանգամանքով- Պատգամատրական Ընդհանուր Ժողովներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, այս Ընդհանուր Ժողովին ներկայ էին միութեան երիտասարդական համագումարին կողմէ ընտրուած հինգ երիտասարդներ, որոնք դէտի հանգամանքով ներկայ գտնուեցան նիստերուն եւ համագումարին արտայայտուած միտքերն ու առաջարկները փոխանցեցին ժողովին:

Հայաստանի սահմանամերձ գօտիներու մէջ իրականացող կամաւոր, հանրօգուտ աշխատանքներու: Այս ծրագիրներու կարելիութիւնները եւ պահանջուած մարդուժին թիւը կը պատրաստուին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կողմէ:

- Նկատի առնելով Հ.Մ.Ը.Մ-ի հայրենակեդրոն սկզբունքները, ուսումնասիրել կարելիութիւնները Հայաստանի եւ Արցախի մէջ վարչամարզական համալիրներ կառուցելու:

- Վերակենդանացնել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի հետ «Քոյր մասնաճիւղեր»ու ծրագիրը եւ վերսկսիլ մասնաճիւղերու միջեւ հորիզոնական համագործակցութեան:

- Կեանքի կոչել կազմակերպական յանձնախումբ մը, որ՝ ա) Հ.Մ.Ը.Մ-ը հասանելի դարձնէ հայահոծ գաղութներու մէջ:

բ) Արժեւորէ միութեան գործօն շրջաններուն իրավիճակը:

գ) Հարկ եղած պարագային հասնի շրջաններու օժանդակութեան (օրինակ՝ կազմակերպէ ղեկավար պատրաստելու դասընթացքներ):

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

- Վերատեսուութեան ենթարկել սկառտական բոլոր կարգերու դաստիարակչական գիրքերն ու պայմանները, այժմէականացնելով գանոնք բոլոր մանրամասնութիւններով:

Ակնարկուածները հերթաբար, պատրաստութեան կարգով, տեղադրուին համացանցի վրայ, ի պահանջեալ հարկին որդեգրելով Course Management system-ը: Նաեւ, նորութիւնները օրը-օրին գործնականացնել, ուր որ անհրաժեշտ է:

- Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի նորաստեղծ մասնաճիւղը քաջալերելու, արցախահայութեան եւ մանաւանդ երիտասարդութեան Հ.Մ.Ը.Մ-ը ծանօթացնելու նպատակով, համա-Հ.Մ.Ը.Մ-ական աշխատանքներ իրականացնել Արցախի մէջ, օրինակ՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետական համագումար, միջ-մասնաճիւղային բանակում եւ այլն:

- Կազմակերպել միջ-շրջանային խմբապետական համագումարներ, որոնց ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը քաջալերէ շրջանները, որպէսզի մշակեն խմբապետներու վերաորակաւորման ծրագիրներ:

- Հնարաւորութեան պարագային Հ.Մ.Ը.Մ-ի շրջանները



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի միջոցով մասնակցին Համաշխարհային Սկսողական Շարժումի հիմնական ծրագրերներուն:

- Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի սկսողական հիմնադրութեան հարիւրամեակին առիթով (2020) կազմակերպել ընդհանուր բանակում մը՝ Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր շրջաններու եւ համաշխարհային սկսողական մասնակցութեամբ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումի խմբապետական կազմին մէջ անպայման ընդգրկել հիւրընկալ երկրէն ներկայացուցիչ խմբապետ մը, իսկ նոյն բանակումի գործադիր մարմինի անդամներուն մեծամասնութիւնը նշանակուի հիւրընկալ երկրէն:

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումի մասնակիցներուն թիւը որոշէ Կեդրոնական Վարչութիւնը, հիմնուելով գործնական կարելիութիւններու ուսումնասիրութեան վրայ:

- Նկատի ունենալով, որ համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերը եւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումը երկու տարուան տարբերութեամբ պէտք է կազմակերպուին, համա-Հ.Մ.Ը.Մ-ական յաջորդ մարզախաղերը կազմակերպել 2021-ին, իսկ համա-Հ.Մ.Ը.Մ-ական յաջորդ ընդհանուր բանակումը՝ 2022-ի ամբան, Հայաստանի մէջ: Իսկ յաջորդող քառամեակին, համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերը կազմակերպել 2024 թուականին, պայմանով որ նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը (2019-2023) նախաձեռնէ անոր նախապատրաստական աշխատանքները:

ՄԱՐԶԱԿԱՆ

- Կեանքի կոչել Միջին Արեւելքի մարզական յանձնախումբ մը, որ պիտի բաղկանայ շրջաններու կողմէ նշանակուած մէկական ներկայացուցիչներէ: Յանձնախումբին նպատակը պիտի ըլլայ իրագործել Միջին Արեւելքի շրջանային մարզախաղերը:

- Տարեկան կազմակերպել համա-եւրոպական մարզախաղեր, մասնաճիւղերու հիւրընկալութեան հերթականութեամբ, ըստ շրջաններու կարելիութեան:

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու օրերու տեղումը վերատեսուցեան ենթարկուի: Նաեւ, խումբի մը



ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Հինգ երիտասարդներն էին՝ քոյր Սիլվա Արսլանեան (Հարաւային Ամերիկա), եղբայրներ Գոս Արսլանեան (Գանատա), Շահան Աքմաճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Սեւակ Քէթնճեան եւ Նժդէհ Սկրտիչեան (Լիբանան):


Պարտքի զգացումով-

Պատգամաւորական Ժողովի նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի պատգամաւորները, միութեանական պարտքի զգացումով, այցելեցին տարի մը առաջ իրենց շրջանին մեկենասութեամբ կանգնեցուած Վահան Զերբազի արձանը, Կիւմրի:



Նորագոյն արհեստագիտութեամբ-

12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի յաջողութեան նպաստեցին նորագոյն արհեստագիտութեան միջոցներու օգտագործումը՝ ժողովի աշխատանքներուն հեզասահ ընթացքին ապահովման համար: Կեդրոնական Վարչութեան տեղեկագիրին յատուկ տեսանիւթով ներկայացումը, ժողովէն առաջ եւ ընթացքին անմիջական փոխանցումները մասնակիցներուն WhatsApp-ով կատարելը, նիստերուն ներկայութիւնը համակարգչային յատուկ ծրագրի վստահիլը ժողովականներուն խնայեցին բաւական ժամանակ՝ արագացնելով եւ դիրքացնելով նման բազմանդամ ժողովի մը մասնակիցներուն միջեւ կապն ու գործակցութիւնը:





կատարելիք խաղերուն միջև ազատ ժամանակը երկարաձրգ-
ւի՝ առիթ տալու մարզիկներուն, որպէսզի հանգստանան:

Մարզիկներու առողջութիւնը ի մտի ունենալով, մրցում-
ները կատարել աւելի յարմարաւէտ ժամերու, նկատի առնե-
լով տաք եղանակը եւ մարզադաշտերու աննպաստ վիճակը:

- Հետապնդել, որ մարզախաղերու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի
անուան, խորհրդանշանի եւ նշանաբանի սխալ օգտագործում
չկատարուի:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակցու-
թեան արձանագրութեան ժամանակ, իւրաքանչիւր շրջան-
մասնաճիւղ, որ կը փափաքի հաւաքական մարզաձեւի մը
մասնակցիլ պարտի կատարել կանխավճար մը, որ պիտի չվե-
րադարձուի շրջանին-մասնաճիւղին՝ այն պարագային, երբ
արձանագրութեան ժամկէտը անցնելէ ետք շրջանը-մասնա-
ճիւղը չեղեալ նկատէ իր մասնակցութիւնը եւ խումբ չներկա-
յացնէ խաղերուն:

- Ուսումնասիրել Երեւանի մէջ մարզահամալիր մը ունե-
նալու կարելիութիւնը: Համալիրը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.-
Հ.Ա.Ս.Կ.ի տրամադրութեան տակ եւ կ'օգտագործուի համա-
Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն համար: Նաեւ ուսումնա-

սիրուի կարելիութիւնը նման համալիր
մը ստեղծելու Արցախի մէջ:

- Կեանքի կոչել մարզական քառամ-
եայ յանձնախումբ մը, որ կազմակերպէ
եւ հսկէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզա-
խաղերուն, տարածաշրջանային խաղե-
րուն, մարզիկներու եւ մարզիչներու
դաստիարակչական ծրագիրներուն:

- Մշակել Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկնե-
րու եւ մարզիչներու դաստիարակչական
ծրագիր մը՝ համապատասխան անոնց
տարիքին:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախա-
ղերու կիսաւարտական եւ աւարտական
խաղերը ուղղակի հեռարձակումով սրվի-
ռել համացանցով (live stream) :

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միջոցով ստեղ-
ծել մանկապատանեկան մարզական ճամբարներ, որոնք տե-
ղի ունենան Հայաստանի եւ Արցախի մէջ: «Athletics Day
Camp»-ի աշխատանքը պէտք է ըլլայ հետեւողական եւ շրջան-

ներու աջակցութեամբ:

- Նախորդ տարիներուն պատրաստուած համա-
Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ուղեցոյցը 12-րդ Պատգամա-
ւորական Ընդհանուր Ժողովի մարզական յանձնախումբին
կատարած բարեփոխումներով, փորձառական ձեւով, կիրակ-
ուի յաջորդ մարզախաղերուն:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

- Մինչեւ մէկ տարի մշակել երիտասարդական բաժան-
մունքի ուղեցոյցը, որ պիտի ճշդէ բաժանմունքին առաքելու-
թիւնը, նպատակը եւ գործունէութիւնը՝ ըստ Հ.Մ.Ը.Մ.ի ռազ-
մավարական ծրագիրին:

Ուղեցոյցի պատրաստութեան յանձնախումբին անպայ-
ման մաս կազմեն աշխարհագրական զանազան շրջաններ
ներկայացնող երիտասարդ տարրեր:

- Քառամեայ դրութեամբ կազմակերպել համա-



Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդական համադրումարներ, որոնց մասնակիցները ճշգրտին ըստ որդեգրուելիք ուղեցույցին:

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
- Շարունակել «Մարզիկ» պաշտոնաթերթի տպագիր հրատարակությունը՝ եռամսեայ դրուլթեամբ: Միաժամանակ, ներկայացնել Marzig Online-ը, որ կայքէջի եւ ընկերային ցանցերու ճամբով առօրեայ դրուլթեամբ պիտի փոխանցէ միութեան լուրերն ու նկարները:

- Շրջաններ Marzig Online-ին իրենց թղթակցութիւնները կրնան ղրկել նաեւ տեղական լեզուներով: Թղթակցութիւնները կը հրատարակուին կայքէջով եւ թարգմանաբար ու համադրաբար, հայերէնով, լոյս կը տեսնեն թերթին տպագիր հրատարակութեան մէջ:

- Marzig Online-ի եւ ընկերային ցանցերու նիւթերու գրաւիչ ձեւով ներկայացման համար աշխատանքի հրաւիրել մասնագէտ մը, որ արդիական ձեւաւորումով պատրաստէ նկարներ, տեսանիւթեր եւ animation-ներ:

- «Մարզիկ»ի մուտքերու ապահովման համար՝
ա) Շարունակել «Մարզիկ»ի տարեկան մէկ տողար ցենզի դրուլթիւնը:

բ) Թերթին երկու բացառիկ թիւերուն՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերուն եւ բանակումին նուիրուած ծախսերը ներառել կեդրոնական Վարչութեան յիշեալ ձեռնարկներու պիւտձէին մէջ:

գ) Marzig Online-ի մէջ որդեգրել ծանուցումներու դրուլթիւն:



- «Մարզիկ»ի վարչութեան կողքին յառաջացնել թերթին բովանդակութեամբ զբաղող մարմին մը, որ օժանդակէ խմբագիրին: Մարմինը շրջաններու մնայուն թղթակիցներուն ճամբով նիւթեր եւ նորութիւններ ապահովէ թերթին:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐ ՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- Կազմել մարմին մը, որ երկու տարուան ընթացքին պատրաստէ online աշխատանքներու ուղեցույց մը՝ նկատի առնելով համաշխարհային օրէնքները (GDPR, Privacy), ներառեալ՝ Հ.Մ.Ը.Մ.ի «branding»-ը (լրկոն, վահանը, շուշանածաղիկը եւ Հ.Մ.Ը.Մ. գրութեան գիրբերու ձեւը):

- Իւրաքանչիւր մասնաճիւղ, Մեկուսի կամ Շրջանային Վարչութիւն ունենայ արհեստագիտական տեղեկատուութեան իր ներկայացուցիչը, որ կանոնադրային սահմանուած կարգով կապի մէջ ըլլայ կեդրոնական Վարչութեան արհեստագիտական տեղեկատուութեան յանձնախումբի ներկայացուցիչին հետ:

- Նկատի ունենալով արդի քարոզչութեան միջոցները եւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան լայն տարողութիւնը, միութեան



լիքներու, անհրաժեշտ է ամէնէն արագ միջոցին ստեղծել համացանցային համաժողով մը (forum), ուր կարելի ըլլայ տեղադրել բոլորին կողմէ օգտագործելի միութենական գիտելիքներ:

Առաջին հանգրուանին սկսիլ խմբապետներու յատուկ համացանցային համաժողովով:

- «Արարատեան» կարգ ստացող քոյր-եղբայրներուն անլանացանկը տեղադրել Հ.Մ.Ը.Մ-ի կայքէջին վրայ, «Արարատեան» կարգ գլխուն տակ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

- Կարեւորելով Հ.Մ.Ը.Մ-ի եկամտաբեր հիմնադրամը, Կեդրոնական Վարչութիւնը շրջաններու եւ մասնաճիւղերու հետ գործակցաբար ճիգ չինայէ հիմնադրամին մայր գումարը քառամեակի աւարտին հասցնելու մէկ միջոցն ամերիկեան սոլարի:

- Աշխատանք տանիլ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրամին համար կտակներ ապահովելու եւ ձեռնարկներ կազմակերպելու:

- Քաջալերել Շրջանային եւ Մեկուսի շրջաններն ու մասնաճիւղերը, որպէսզի իրենց անձեռնմխելի գումարները փոխանցեն հիմնադրամին եւ անոր մէջ ունենան իրենց անունով ենթահաշիւ:

- Ուսումնասիրել կարելիութիւնը բանակումներու թուականներէն դուրս, Բիւրականի բանակավայրը հանգստեան գօտիի կամ այլ ծրագրերու համար վարձու տալու:

- Ուսումնասիրել եւ նախաձեռնել միջազգային զանազան կառույցներէ դրամաշնորհներ ձեռք բերելու աշխատանքին:

- Ձեռնարկել բոլոր շրջաններու մէջ Հ.Մ.Ը.Մ-ի անշարժ գոյքերու (չէնքեր, հողատարածքներ) ցանկագրումին:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԵՐԸ

Ուրբաթ, 18 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 5-ին տեղի ունեցաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին նախալերջին նիստը: Նիստին սկիզբը ողջոյնի խօսքերով հանդէս եկան ժողովին նոր միացած, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յա-

թեան տեղեկութիւնները կեդրոնացնելու նպատակով ստեղծել App մը, որ ընդգրկէ հետեւեալ բաժանումները.- ընդհանուր լուրեր, սկաուտական, մարզական, նիւթերու աղբիւրներ, «Մարզիկ» պաշտօնաթերթ եւ առցանց վաճառք

- Նկատի ունենալով որ նորաստեղծ եւ գոյութիւն ունեցող մասնաճիւղերը կարիքը ունին տեղեկութիւններու եւ գիտե-



կոր Տէր Խաչատուրեան եւ Թեհրանի Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան ատենապետ Հարմիկ Զովեկեան (խօսքերը տեսնել էջ 46 եւ 48): Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, որ օր մը առաջ միացած էր ժողովի աշխատանքներուն, միութեան խօսքը փոխանցեց գրաւոր (տեսնել էջ 47):

Խօսքերէն ետք, ժողովականները քննեցին միութեան մայր կանոնադրութեան մէջ կատարուելիք փոփոխութեան առաջարկները եւ ժողովականներու կողմէ որոշումի կարգ անցնելիք անհատական առաջարկները: Ապա, վաւերացուեցաւ 2019-2023 քառամեակի գործունէութեան նախահաշիւը եւ հաստատուեցաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ հրապարակուելիք հաղորդագրութիւնը:

Դադարէն ետք, երեկոյեան ժամը 10-ին, ընթացք առաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին վերջին նիստը, որ նախ նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամներու թիւ ճշդեց 13-ը եւ անցաւ քուէարկութեան:

Յետ քուէարկութեան, 2019-2023 քառամեակի համար Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անգամ ընտրուեցան քոյր Թալին Օրտոյլեան (Լիբանան), եղբայրներ Վաչէ Նաճարեան, Վիգէն Աւագեան (Լիբանան), Մանուկ Քէօշկէրեան (Սուրիա), Օշին Փիրումեան, Դաւիթ Յակոբեան (Հայաստան), Հրաչ Միսեռեան (Ֆրանսա), Ֆէտի Թափրա (Շուէտ), Արմատ Քիլիճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վահէ Թանաչեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Մոսիկ Թոփուզեան (Գանատա), Արմանտո Թորգոմեան (Հարաւային Ամերիկա) եւ Տիրան Վահրատեան (Աւստրալիա):

Հասաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի փակման պահը: Սրտառուզ մթնոլորտի մէջ, սրտի խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան կարգ մը անդամներ, վաստակաշատ քոյրեր-եղբայրներ եւ առաջին անգամ ըլլալով պատասխանատու նման ժողովի մը մասնակից երիտասարդներ:

Հուսկ, ժողովը իր աշխատանքները աւարտեց կէս գիշերական ժամը 1-ին, «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգովով



(գիտել հետեւեալ կապով <https://www.facebook.com/MyHomenetmen/videos/468530927101841/>), պատուաբեր անցեալ մը ետին ձգած ըլլալու եւ դէպի յաղթական ապագայ ընթանալու Հ.Մ.Ը.Մ-ական յանձնառութեամբ եւ ազգային պատասխանատուութեամբ:



riott
ADZOR



Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԿԱԶՄ



**Հ.Ս.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները:
Նկարէն կը բացակայի եղբ. Վիգէն Քորթեան:**



Հ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու պատգամաւորական կազմը շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Ս.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու պատգամաւորական կազմը շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Ս.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի պատգամաւորական կազմը շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Ս.Ը.Մ.ի Գանատայի պատգամաւորական կազմը շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Աստրալիոյ շրջանի պատգամաւորական կազմը:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատգամաւորները շրջանի Կեդրոնական Վարչութեան անդամներուն հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի պատգամաւորական կազմը:



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի պատգամաւորական կազմը:



Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի՝ Փարիզի, Մարսէյի եւ Վալանսի պատգամաւորները շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի պատգամաւորները շրջանի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:



Հ.Մ.Ը.Մ.Ի Շուևտի՝ Սթրոնիլմի եւ Ստտերթելիոյ պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.Ի Երուսաղէմի մեկուսի շրջանի պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.Ի Գահիրէի մեկուսի շրջանի պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.Ի Քուէյթի մեկուսի շրջանի պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.Ի Սիւնիխի եւ Վիեննայի մեկուսի շրջաններու պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.Ի Պաղտատի եւ Ալմէլոյի մեկուսի շրջաններու պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Ս.ի Յունաստանի եւ Կիպրոսի մեկուսի շրջաններու պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Ս.ի Թիֆլիսի եւ Արցախի մեկուսի շրջաններու պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Ս.ի Պուլկարիոյ շրջանի պատգամաւորը:



Հ.Ս.Ը.Ս.ի երիտասարդական համագումարէն հրաւիրեալ երիտասարդ պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Ս.ի ԺԲ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակից քոյրերը:

Հ.Մ.Ը.Մ. ՏԵՐՆ Է ԵՒ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԻՐ ՆՇԱՆԱԲԱՆԻՆ

(Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ)

Շատ սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Իսկապէս հաճոյք է գտնուիլ ձեր մէջ, մանաւանդ որ այսքան ծանօթ դէմքեր կան այստեղ: Ուրախ եմ, որ միութիւնը առողջ է եւ խանդավառ: Հ.Մ.Ը.Մ.ը բոլորիս սիրտերուն եւ միտքերուն մէջ ունի յատուկ տեղ: Իր առաքելութեան լիբրաւ տէրն է ան: Ես շատ ուրախ եմ տեսնելու, որ աւելի քան 70 լիազօր պատգամաւորներով եւ աւելի քան 117 պատգամաւորներու ընդհանուր թիւով, այսօր եկած էք մայր հայրենիքի մէջ փաստելու, որ Հ.Մ.Ը.Մ.ը Հայ իրականութեան սկստական եւ մարզական մեր ամենամեծ կազմակերպութիւնն է:



կազմակերպութիւն էր, հիմնականին մէջ՝ Միջին Արեւելեան: Վերջը դարձաւ համափիւռքեան եւ անոր համար մենք մեծ ուրախութեամբ ողջունեցինք Հ.Մ.Ը.Մ.ի տարածումը այլ շրջաններու մէջ: Այսօր, միութիւնը կը ներկայանայ իբրեւ համահայկական կազմակերպութիւն: Փառք ու պատիւ այստեղ նստող եւ դուրսը աշխատող մեր քույրերուն եւ եղբայրներուն, որոնք

Երիտասարդութիւնը տարիքի հարց չէ միայն, բարեկամներ, սիրելիներ: Ձեզմէ իւրաքանչիւրը երիտասարդի պէս կը մտածէ, երբ այս կազմակերպութեան անդամակցութիւնը կը շարունակէ եւ այս կազմակերպութեանն անդին, իբրեւ վարչական, առաջնորդի դեր կը ստանձնէ այլազան մակարդակներու վրայ:

Ես Հ.Մ.Ը.Մ.ի արդիւնք եմ: Շատ փոքր տարիքիս, երկուքուկէս տարեկանիս, զիս արձանագրած են Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն, Հայկպի մէջ: Ես հաճոյքով կրած եմ գայլիկական կանաչ տարազը՝ մինչեւ Պէյրութ հաստատուիլս: Պէյրութի մէջ շարունակած եմ սկստական գործունէութիւնս՝ մինչեւ Գանատա մեկնիլս: Գանատայի մէջ որոշ ժամանակ օժանդակած եմ Հ.Մ.Ը.Մ.ին: Եղած եմ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի հիմնադիր խմբակի անդամ: Հետագային, բախտը ունեցած եմ մեր կուսակցութեան շուրջ բոլորուած մեր գաղափարակից, ուղեկից կազմակերպութիւններու ընդմէջէն տեսնելու անոնց աշխոյժ փիճակը եւ հպարտութեամբ նկատելու, թէ որքան պատնէչի վրայ են անոնք եւ որքան յաջող աշխատանք կը տանին:

Այսօր մենք ծարաւը ունինք իսկական համահայկական միութիւններու: Հ.Մ.Ը.Մ.ի պատկերը վկայ: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ վերընձիւղումէն ետք ստացաւ համահայկական այն նկարագիրը, որուն կը բաղձայինք եւ որուն կարօտը ունէինք մենք երկար տարիներ: Հ.Մ.Ը.Մ.ը մինչ այդ շրջանային

պատուով կարողացան միութիւնը հասցնել այս մակարդակին:

Հ.Մ.Ը.Մ.ը միայն մարզական, երիտասարդական, սկստական շարժում չէ: Հ.Մ.Ը.Մ.ը նաեւ ազգային դաստիարակութեան տուն է: Իմ օրինակէս մեկնելով, ես մանկութեանս Պատանեկան Միութիւններու չեմ անդամակցած, ուղղակի երիտասարդականի մաս կազմած եմ, բայց պատանեկութեանս շրջանին Հ.Մ.Ը.Մ.ի մէջ լաւապէս սորված եմ, թէ ի՞նչ կը նշանակէ ազգային նկարագիր, ի՞նչ կը նշանակէ ազգային արժէք, ի՞նչ կը նշանակէ ժողովուրդի եւ դատի նուիրում: Հ.Մ.Ը.Մ.ը զիս սողորած է ո՛չ միայն իր կանչերով, որոնք հաճելի կը թուին բոլորիս, այլեւ՝ քայլերգի հնչեղութիւն ունեցող իր երգերով, որոնք 20-րդ դարու մեր յօրինուածքներուն մէջ իւրայատուկ տեղ ունին:

Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը նահատակ ժողովուրդի զաւակներու մարտական կոչ է, որպէսզի իր առաքելութեան ճամբով նահատակ ժողովուրդը ոտքի՛ կանգնի, անգամ մը եւս պանծացնէ հայրենիքը, իր առջեւ ունենալով Մասիսը եւ իր սրտին մէջ ունենալով Եռագոյնը,- այդ ժամանակ մէկ հատուածի միայն պատկանող, իսկ հիմա՝ համազգային,- եւ բնականաբար նաեւ՝ ամբողջական Հայաստանը:

Ես մեծապէս ուրախ եմ, որ զանազան միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ երկար ծառայութեանս շրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի պարագային ես երբեք ընկրկում կամ վհատում չեմ տեսած: Հ.Մ.Ը.Մ. տէրն է եւ ամբողջական պատասխանատուն իր նշանաբանին, որովհետեւ ան ո՛չ միայն ինքզինք կը բարձրացնէ, այլեւ՝ իր հետ կը բարձրացնէ նաեւ մեր երիտասարդութիւնն ու ժողովուրդը:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ՆՈՅՆԸ, ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ)

20-րդ դարու երկրորդ կիսուն մարդու կողմէ արմատականորէն փոփոխութեան ենթարկուած արհեստագիտական միջոցները խոր եւ անվերադարձ կերպով փոփոխութեան ենթարկած են մարդկային փոխադարձ յարաբերութիւնները: Այս փոխազդեցութիւններու երեւոյթը հազարամեակներէ ի վեր կը դեկավարէ մարդկութիւնը: Ատոր հետեւանքով, այսօր, համեմատած նախորդ դարու մեր կեանքին, փոխուած են մտայնութիւնները, տեւական հոլովոյթի մէջ է մարդոց մտածելակերպը: Մարդիկ դարձած են աւելի գործնապաշտ, մէկ կողմ հրելով ցարդ իրենց կեանքի հիմնական սկզբունքները՝ իրենց գաղափարական կեցուածքները:

Այս պատճառով հաւատքը, կրօնական թէ այլ տեսակի, դարձած է դիւրաբեկ. մինչդեռ ատիկա կարեւոր դեր կը խաղայ աշխատանքներու յաջող ընթացքին եւ արդիւնաւէտ աւարտին համար: Հետեւաբար, ճիգ պէտք է խնայել մարդոց էութեան մէջ գաղափարականութիւնը վերականգնելու: Ասիկա դիւրին գործ մը չէ, նոյնիսկ Հ.Մ.Ը.Մ.ի նման գաղափարական հարուստ անցեալ ունեցող հաւաքականութիւններու համար: Դիւրին չէ, որովհետեւ նախորդ դարու կրթամըշակութային 1968 թուականով խորհրդանշուող յեղափոխութեան վաղորդայնէն սկսեալ հետեւողական պայքար տարւած է բոլոր գաղափարաբանութիւններուն դէմ: Այդպէս է մինչեւ այսօր եւ ոչինչ ցոյց կու տայ, թէ այդ ոլորտներէն ներս բան պիտի փոխուի մօտաւոր ապագային:

Սակայն մենք գիտենք, թէ մեզի պէս աշխարհացրիւ փոքր հաւաքականութեան մը համար ինչքա՞ն դաժան է մարդկութեան այս նոր պատկերը, ուր տկարները կը ճգմուին կամ կ'անհետանան: Հետեւաբար, մեզի համար դէպի իրական գաղափարականութիւն վերադարձը հրամայական է: Մեր ուղեկից միութիւնները գաղափարական հիմք ունեցող միաւորներ են. բարեսիրական, սկստական ու մարմնակրթական, կրթական ու մշակութային: Այսպէս են ՀՕՄ-ը, Հ.Մ.Ը.Մ.-ն ու Համագգայինը:

Այս վիճակին մէջ յստակ է, որ գաղափարական միութիւն-

ները իրենց ուժականութենէն բաւական բան պիտի կորսնցընեն, որովհետեւ տնտեսական վայրի մրցակցութեան ներկայ մթնոլորտը մեծ հարուած կը հասցնէ անոնց անդամներու կամաւորականութեան վրայ հիմնուած գործելակերպին: Ինչպէ՞ս կրնայ մրցիլ կամաւորականութիւնը տնտեսականութեան դէմ: Ինչքա՞ն կրնայ տոկալ կամաւոր աշխատողին ինքնասիրութիւնն ու արժանապատուութիւնը, երբ կը տեսնէ, թէ իրմէ նուազ արժէքաւոր անհատներ՝ նուազ որակաւոր աշխատանքի շնորհիւ կը տիրանան համբաւի, կ'արժանանան յարգանքի, երբ իրենց աշխատանքը ընդհակառակը յաճախ կ'արհամարհուի: Մեր միութիւնները արդէն շատոնց կը կրեն այդ նոր դրութեան հասցուցած վնասները: Մեր միաբերուն մէջ դեռ թարմ են մեր մարզական եւ այլ միաւորներու դառն վերքերը:

Բնականաբար չենք հակադրեր կամաւորականութիւնը արհեստավարժութեան: Կամաւորականութեան վրայ հիմնուած մեր միաւորները իրենց գործին մէջ ցուցաբերած բծախնդրութեան, իրենց միութեան հանդէպ ունեցած ջերմ գգացումներուն, յարգանքին եւ հաւատքին շնորհիւ, իրենց կամաւորականութիւնը յաճախ կը հասցնեն արհեստավարժութեան աստիճանի:

Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանն է՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»: Այս նշանաբանը կը պարտաւորեցնէ: Ան գաղափարականութեան արտայայտիչ է: Բարձրանալ կը նշանակէ ճիգ թափել ինքզինք բարելաւելու, որպէսզի կարելի ըլլայ ուրիշին օգնել, որպէսզի ան ալ իր կարգին բարձրանալու կարողութեան տիրանայ. ինքնասրբագրութիւն՝ որ կ'առաջնորդէ ուրիշներու մաքրման. կա՞յ ասկէ աւելի ազնիւ նպատակակէտ:

ՀՕՄ-ն ու Համագգայինը, հիմնուած նոյնքան գաղափարական մարդոց կողմէ, որքան՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները, նոյնատիպ հաւաքականութիւններէ կազմուած են: Անոնց հասարակաց գիծերը բազմաթիւ են: Գործելաձեւի, գործունէութեան ասպարէզներու եւ անմիջական նպատակներու տարբերութիւնները ոչինչ կը փոխեն իրենց բիւրեղեայ էութենէն: Բազմաթիւ



տասնամեակներու իրենց գործունէութեամբ անոնք երաշխաւորած են սփիւռքեան բազմաթիւ սերունդներու հայկականութիւնը:

Խոստովանինք, որ դժուար է պահպանել ազնիւ նկարագիրը, երբ շրջապատուած ես քեզի վնաս հասցնելու, նոյնիսկ քեզ անհետացնելու պատրաստ հակառակորդներով: Սակայն այս միութիւնները ուրիշ ընտրանք չունին, քանի իրենց առաքելութիւնը կը մնայ նոյնը, այսինքն՝ գուրգուրալ նոր սերունդներուն վրայ՝ զանոնք հասցնելով պատասխանատուութիւններ ստանձնելու մակարդակին, իրենց ամբողջական կարողականութիւնը յարմարեցնելով արդի ժամանակներուն: Մէկ խօսքով, առաքելութիւնը կը մնայ նոյնը, փոփոխութեան կ'ենթարկուին ի գործ դրուող միջոցները: Ասիկա՛ է ապագայ յաջողութիւններու բանալին:

Մինչեւ երէկ Համագաղայինն ալ այդ փնտռութիւն մէջ էր: Այսօր գործը արդէն հասունցած է եւ քանի մը ամիսներ առաջ հրապարակ նետուած է www.h-pem.com մշակութային հարթակը, ուր կը ներկայացուի հայկական մշակոյթը իր բոլոր երեսներով՝ անցեալի, ներկայի եւ ապագան պատրաստող

ուսովիրայական գաղափարներով: www.h-pem.com-ը կը յանձնարարուի բոլորին:

Այս հարթակին վրայ նորութիւնը այն է, որ գործածուող լեզուն անգլերէնն է: ասիկա կը նշանակէ, թէ ան ուղղուած է առաւելաբար արեւմտեան կիսագունդի երիտասարդութեան: Հայկական մշակոյթին հետ խորքային ծանօթացումը հաւանաբար առաջնորդէ նաեւ հայոց լեզուն ուսումնասիրելու եւ ապա՝ գործածելու փափաքի զարթնումին:

Ելեկտրոնային լայնածիր միջոցներու կիրառումը ուղեկից միութիւններու կողմէ այլեւս անշրջանցելի է: Նոր սերունդները ենթակայ են բացառաբար ա՛յս ձևի միջոցներով կատարուող քարոզչութեան. անշուշտ այլո՛ց կողմէ կատարուող քարոզչութեան՝ զուտ շահադիտական նպատակներով կատարուող քարոզչութեան:

Մեր հակազդեցութիւնը պէտք է ըլլայ ուժեղ եւ հրապուրիչ: արդիւնաւէտ ըլլալու համար՝ միահամուռ: Ասիկա է ներկայի մեծ մարտահրաւէրը, որուն պէտք է ուղղուին մեր հայեացքները:

Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԵԾ, ԱՆՓՈԽԱՐԻԵԼԻ ԳԵՐ ՈՒՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔՈՒՄ (Հ.Մ.Ա.Կ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՀԱՐՄԻԿ ԶՈՎԵԼԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՄՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 12-ՐԴ ՊԱՏԳՄԱԽՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ)

Սա մեծ պատիւ է ու առիթ, աւանդոյթ դարձած հրաւիրեալի կարգավիճակով ներկայ լինել այս պատկառելի ժողովին, որ կայանում է Հայաստանում, ներկայութեամբ հայ իրականութեան երեք բեւեռների՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի: Միջազգային այս ծանր իրավիճակում, երբ աշխարհի չորս կողմում կան մարդու դէմ ծառայած դժուարութիւններ, պատերազմներ, մշակութային տարբերութիւններ, ճնշումներ, դաւադրութիւններ, ֆինանսական բարդութիւններ եւ այլ տեսակի խոչընդոտներ, մեր հայերի դիմաց կան նաեւ շատ այլ հիմնախնդիրներ՝ Սփիւռք, Հայաստան, հայապահպանում եւ այլն:



Մեծ է ու դժուար տարուող աշխատանքը: Ներառելով երիտասարդութիւնը, դաստիարակում ենք սերունդ, որի ազդեցութիւնները տարածուած է տուեալ անձերի կեանքերի վրայ:

Մենք յաջողում ենք այն ժամանակ, երբ մեր շարքերից դուրս ունենում ենք մեր կողքին քայլող եւ մեզ վստահող մեծ թիւով մարդիկ, ովքեր իրենց զաւակներին վստահում են մեզ:

Այս հաւաքը եւ համահայկական իտէալներով, մտածումներով նպատակադրուած նման հաւաքներն ու ժողովները գալիս են մօտեցնելու մեզ՝ մէկ կողմ թողելով տեղական հարցերը, մեր ուժն ու կարողութիւնը տանելով հիմնախնդիրների լուծման ուղղութեամբ, որն է՝ համահայկական մտածողութեամբ դաստիարակել ազգային դաստիարակութիւն ստացող սերունդ, որ ատակ կը լինի իր անձն ու սեփականը երկրորդական դասերով քայլել Հայ Դատի ուղղութեամբ:

Այս առումով, Հ.Մ.Ը.Մ.ը իր աշխատանքներով եւ մասնաճիւղերով մեծ, անփոխարինելի դեր ունի մեր ժողովրդի կեանքում: Սերունդներ եկել-գնացել են, 101 տարեկան է Հ.Մ.Ը.Մ.ը, բայց երիտասարդ է նրա ոգին ու մարմինը: 75-ամեայ Արարատ կազմակերպութեան բոլոր անդամների կողմից ողջունում ու յաջողութիւն ենք մաղթում մէկ առ մէկ ձեզ եւ Հ.Մ.Ը.Մ.ի գալիք կենտրոնական Վարչութեան:

Թող մեզ բախտը վիճակուի ականատեսը լինելու կայուն, միացած հայրենիքի, ուր հայութիւնը համախմբուած լինի աւելի բարգաւաճ ու ծաղկուն:

Միասնականութիւն եւ յաջողութիւն եմ մաղթում բոլորիս:



ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹ ԴԷՊԻ ՆՈՐ ԼՈՒՍՄԱՒՈՐ ԱՊԱԳԱՅ

(ՀՕՄ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀՄԸՄ-ի 12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Միրելի՛ քոյրեր եւ եղբայրներ, սոյն նամակով Հայ Օգնութեան Միութեան նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը կ'ողջունէ ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր ժողովը:

Որպէս հազարաւոր պատանիներու եւ երիտասարդներու համախմբողը, սկառուտական եւ մարզական դաստիարակութեամբ ազգային ու մարզկային արժէքներ փոխանցողը, կ'ողջունենք ՀՄԸՄ-ի բոլոր պատգամաւորները, որոնք կը ներկայացնեն մարդու չհիմնական դարբնոցները իրենց երկիրներէն ներս եւ տարբեր մակարդակներու վրայ միշտ կը համագործակցին ՀՕՄ-ին հետ:

Կը յուսանք, որ պատկառելի այս ժողովը «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով կը շարունակէ իր յաղթական երթը՝ դէպի նոր, լուսաւոր ապագայ՝ շինիչ եզրակացութիւններու շնորհիւ:

Տասնեակ հազարաւոր միութենականներու, մարզիկներու եւ սկառուտներու իրերայաջորդ սերունդներ ՀՄԸՄ-ի

շունչին տակ հասակ առնելով ծառայեցին հայրենիքի ու ըՄ-փիւռքի մեր կռուաններուն: Իր անդամներու կամաւոր աշխատանքի գիտակցութեան պատրաստակամութեան եւ գոհողութեան ոգիով, այս կազմակերպութիւնը անքակտելի մէկ մասնիկը եղաւ մեր ժողովուրդին եւ հաւատարիմ մնալով իր առաքելութեան՝ իր արդար բաժինը բերաւ սփիւռքահայրութեան ազգային գոյատեւման ջանքերուն:

ՀՄԸՄ-ը մէկ դարէ աւելի պատուով կատարեց իր ստանձնած եւ իրենց վստահուած առաքելութիւնը, ժամանակին հետ քայլ պահելով: Վարձքը կատար ՀՄԸՄ-ի նշանաբանով առաջնորդուած մեր քոյրերուն ու եղբայրներուն: Կը մաղթենք միշտ յառաջ ընթացք ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին: Յաջողութիւն նորընտիր Կեդրոնական Վարչութեան:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



«ՅԱՐԵԱԼ ՎԵՀՕՐԷՆ...»

Ստեփան Տեր Պետրոսեան ՊԵՅՐՈՒԹ

«Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար»:

Յարուժիւն ա՛ռ,- կ'ըսէ բանաստեղծը,- ոչնչացո՛ւր խաւարը:

Երէկ, մեզի համար խաւարը Եղեոնն էր, Օսմանեան կայսրութեան՝ թուրքին եաթաղանն էր:

100 տարի շարունակ, հայ ազգը մերժելով խաւարի մէջ մնալ, յարուժիւն առաւ, վերածնաւ, վերապրեցա՛ւ, վերանկախացա՛ւ:

Մեր սիրելի միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ-ը առաջնորդեց այդ ընթացքը, վերածնունդը: Հաւատարիմ իր սկզբունքներուն, յաջորդական սերունդներ ապահովեցին Հ.Մ.Ը.Մ-ի վերելքն ու տարածումը:

Այսօր, խաւարը մեզի կը ներկայանայ տարբեր երեսներով: Իսկ մենք, կառչած մնալով մեր սկզբունքներուն, մեր նպա-

տակներուն հասնելու համար կը պայքարինք տարբեր ձեւերով:

Այսօր խաւարը ձուլումն է, ապագայնացումն է, արժէքներու անկումն է: Հ.Մ.Ը.Մ-ի համար, այսօրուան մարտահրաւէրը յաջորդ սերունդներէն նոյնքան եւ աւելի ճիգ կը պահանջէ՝ որքան անցեալին թափուածը:

Հեռու լուսարձակներէ, Հ.Մ.Ը.Մ. պէտք է ամէն գնով շարունակէ իր հիմնական գործը, որն է՝ սերունդներու մարմինի եւ միտքի կրթութիւնը:

Հ.Մ.Ը.Մ. պէտք է շարունակէ մտնել ամէն հայու տուն եւ ներգրաւէ մատղաջ սերունդին միտքն ու հոգին այսօրուան, բայց մանաւանդ՝ վաղուան միջոցներով, որոնց փնտուտուքի աշխատանքին միութիւնը սկսաւ ռազմավարական իր ծրագիրով եւ անոր լոյսին տակ առնուած կարգ մը քայլերով:

Հ.Մ.Ը.Մ. պիտի մնայ որբերու հոգատար միութիւնը, գայլիկն ու արծուիկը դաստիարակող խմբապետը, հոգատար եւ մարզանքը սորվեցնող մարզիչը, պատասխանատու եւ օրինակելի վարչականը, դաշտերու վրայ հազարաւոր համակիրներ ունեցող միութեանկանը, Արցախի եւ Սուրիոյ մէջ պատնէշի վրայ կանգնած զինուորը, Հայ Դատի յառաջատար պայքարողը:

Կարելի չէ արագ զնահատական տալ, թէ Հ.Մ.Ը.Մ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը կարողացա՞ւ լուծումներ գտնել միութեան հիմնական հարցերուն կամ ոչ: Մէկ բան վստահ է, սակայն, որ ժողովը անգամ մը եւս ի մի բերելով իր լաւագոյն տարրերը, բոլորին նոր յոյս ու կորով ներշնչեց, վերանորոգ կամբով շարունակելու իր սրբազան առաքելութիւնը:



ՄԻ՛ ՄՏԱՀՈԳՈՒՒՔ

(Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ)

Նժդեհ Սկրտիչեան*
ՊՈՒՐՑ ՅԱՍՈՒՏ



ՀՄԸՄ-ի գերագոյն ժողովին ներկայ գտնուելը իւրաքանչիւր ՀՄԸՄ-ականի երազն է: Ներկայ գտնուել տեղ մը եւ շրջապատուած ըլլալ ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքով, ՀՄԸՄ-ի օրակարգով՝ իւրաքանչիւր ՀՄԸՄ-ականի փափաքն է:

Իսկ ներկայ գտնուել ՀՄԸՄ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին՝ բախտաւորութիւն է:

Տարբեր էր 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը: Իւրապատուկ եւ յատկանշական, որովհետեւ 100-ամեայ գործունէութեան էտք այս մեծ միութիւնը կը մտնէր նոր փուլ եւ կ'ուղղուէր դէպի նոր 100-ամեակ:

Այսպէս, 14-19 Հոկտեմբեր 2019-ին, Հայաստանի Մարզկաճոր շրջանին մէջ հաւաքուած էին ՀՄԸՄ-ի աշխարհասփիւռ շրջաններէն եկած 117 քոյրեր-եղբայրներ, արժեւորելու համար միութեան 2015-2019 քառամեակի գործունէութիւնը, ծրագրելու անոր ապագայի աշխատանքները, քննարկելու, կազմակերպելու եւ յատկապէս շարունակելու մէկ դարը թեւակոխած միութեան առաքելութիւնը:

Տարբեր էր այս ժողովը, որովհետեւ ներկայ էին ո՛չ միայն երէց միութենականներ, այլ նաեւ՝ երիտասարդներ: Երիտասարդներ թէ՛ շրջաններէն, եւ թէ՛ առաջին անգամը ըլլալով, ՀՄԸՄ-ի երիտասարդական Ա. համագումարէն:

Խօսքը գործի վերածելու գեղեցկագոյն օրինակ:

Եւ ես՝ իբրեւ երիտասարդ, առիթը եւ բախտը ունեցայ մասնակցելու այս ժողովին, սակայն մտահոգ էի. մտահոգ էին նաեւ միւս երիտասարդները, որովհետեւ չէինք պատկերացներ, թէ միութեան գերագոյն ժողովին պիտի կարենանք մեր մտածումները, երիտասարդութեան հարցերը եւ կարիքները լաւապէս փոխանցել եւ մեր ձայնը լսելի դարձնել: Սակայն մեր մտահոգութիւնները փարատեցան ժողովի առաջին իսկ օրէն:

Բոլորին կողմէ տարբեր սէր, գուրգուրանք եւ ուշադրութիւն կար մեզի հանդէպ:

Ի՛նչ գեղեցիկ էր միջնորդը, երբ իւրաքանչիւր դադարի երէց-երիտասարդ միասնաբար կը գրուցէինք ՀՄԸՄ-ի մասին:

Մենք հմայուած կը լսէինք ու կը փորձէինք նոր բան մը սորվել մեր մեծերէն, իսկ անոնք ժպիտով եւ հետաքրքրութեամբ կը լսէին մեզ:

Մենք կը գանգատէինք, իսկ անոնք հանդարտութեամբ կը խօսէին ու կ'օգնէին:

Երբեք չնկատեցինք տարիքի տարբերութիւնը, մանաւանդ

որ իրարու հետ կը խօսէինք «քոյր»-«եղբայր»ով:

Կ'ըսենք եւ կ'ըսեն՝ պէտք է առիթ տալ երիտասարդներուն, լսել երիտասարդութիւնը, եւ աւելին, վստահիլ անոնց... 100-ամեայ երիտասարդ ՀՄԸՄ-ը իր պատմութեան անկլանադարձային այս հանգրուանին կատարեց այդ մէկը:

Տարբեր էր այս ժողովը նաեւ իզական սեռի յաւելեալ ներկայութեամբ: Եւ աւելին, նորընտիր Կեդրոնական Վարչութեան մէջ իր արժանի տեղը ունեցաւ քոյր մը, եւ ՀՄԸՄ-ը անգամ մը եւս փաստեց, որ այս միութիւնը երբեք սեռային խտրութիւն դնող միութիւն մը չէ:

Տարբեր էր այս ժողովը, ինչպէս նաեւ՝ զգացական, որովհետեւ ժողովին կը մասնակցէին ՀՄԸՄ-ի նորաստեղծ կարգ մը մասնաճիւղերը՝ Մոսկուա, Թիֆլիս եւ ամէնէն նորեկ անգամը... Արցախի մասնաճիւղը:

Այս բաժինը նկարագրելը դժուար է. պէտք էր ներկայ ըլլալ եւ զգալ այդ վայրկեանները, երբ ամբողջ սրահը, յոտընկայս ծափահարութիւններով, յուզուած աչքերով, արցունքներով դիմաւորեց Արցախի ներկայացուցիչը, որուն առջեւ հպարտութեամբ կը տեսնէինք Արցախի դրօշակը եւ ԱՐՅԱԽ անունը, որոնք ուժ կը ներշնչէին մեզմէ իւրաքանչիւրիս:

Տարբեր էր այս ժողովը, որովհետեւ ականատես եղանք, թէ ինչպէ՛ս աշխարհի տարբեր երկիրներու մէջ ծնած, տարբեր ձեւով ապրած անձեր կը մտերմանան ժամերու ընթացքին, միասին կ'երգեն, կ'ուրախանան, կը յուզուին, որովհետեւ ունին նոյն նպատակը եւ կը հաւատան նոյն առաքելութեան, այլ խօսքով՝ ՀՄԸՄ-ական են եւ վերջ:

Վերջապէս, տարբեր էր այս ժողովը, որովհետեւ առաջին անգամը ըլլալով ժողովին կը մասնակցէին երեք հայրեր եւ իրենց զաւակները՝ երեք տարբեր շրջաններէ:

Փաստ մը, որ ՀՄԸՄ-ի ջահը կը փոխանցուի սերունդէ սերունդ:

Փաստ մը, որ ՀՄԸՄ-ը կը շարունակէ պատրաստել նոր «կամաւոր բանակ»:

Փաստ մը, որ ՀՄԸՄ-ը կը գոյատեւէ եւ իր ընթացքը դէպի նոր 100-ամեակ ապահով է ու հաստատուն:

Այս բոլորէն ետք, առանց վարանելու, հանգիստ խիղճով դարձեալ կ'ըսեմ՝ ՀՄԸՄ-ով «Մի՛ մտահոգուիք»:

Առաջին «Մի՛ մտահոգուիք»ը լոյս տեսաւ «Մարգիկ»ի թիւ 414-ին մէջ (էջ 22-23), Յ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական Ա. համագումարին առիթով:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ 12-ՐԴ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

ՇԱՒԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՑՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ



Թղթակից ԵՐԵՒԱՆ



Մ.Լ.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նախօրեակին, Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 2019-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Հայաստանի Ֆիզիքական կուլտուրայի եւ մարմնամարզի պետական հիմնարկի մուտքին, Երեւան, տեղի ունեցաւ միութեան ռահվի-

րայ եւ հիմնադիր՝ Շաւարշ Քրիսեանի դիմաքանդակին բացումը, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեանի, հիմնարկի տնօրէն Դաւիթ Խիթարեանի, Շաւարշ Քրիսեանի եղբորը թոռան՝ տղթ. Շաւարշ Քրիսեանի, հիմնարկի դասախօսներէն եղբ. Ռոլանտ Շառոյեանի եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի մասնակիցներու:

Հանդիսութեան սկիզբը, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի շեփորախումբին առաջնորդութեամբ եւ Հայաստանի, Հ.Մ.Լ.Մ.ի եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի դրօշակակիրներու գլխաւորութեամբ, քանդակի բացման վայրը ժամանեցին սկաուտներ: Հնչեց Հ.Մ.Լ.Մ.ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը:

ԲԱՑՄԱՆ ԽՕՄՔԸ

Բացման խօսքով հանդէս եկաւ հիմնարկի դասախօսներէն եղբ. Ռոլանտ Շառոյեան: Ան ըսաւ, որ Շաւարշ Քրիսեանի դիմաքանդակին կերտման գաղափարը ծնաւ երկու տարի առաջ: «Քրիսեան եզակի տիպար մըն է հայ իրականութեան մէջ, իբրեւ հայ մարմնակրթութեան հիմնադիր, հոգեւոր հայր, մարզիկ, խմբագիր, հրապարակագիր, գրող եւ մեծ մտածող: Մարդ, որ 30 տարին չբոլորած, հայ մտաւորականութեան ոսկէ փաղանգին հետ, Ապրիլ 1915-ին ձերբակալուեցաւ, Այաշի բանտը ուղարկուեցաւ եւ նոյն տարուան Օգոստոսին, թուրքերու կողմէ գազանաբար սպաննուեցաւ Անգարայի ծայրամասերէն մէկուն մէջ, Դանիէլ Վարուժանի, Սիւսանի/Թոյի, Ռուբէն Սեւա-





կի, Գրիգոր Զոհրապի եւ այլ սուրբ նահատակներու հետ»:

Եղբ. Շառոյեան աւելցուց. «Կրնան հարիւրաւոր տարիներ անցնիլ, բայց երբեք չի կրնար մոռցուիլ Շաւարշ Քրիսեանի վերաբերումը հայ մարմնակրթութեան հանդէպ ընդհանրապէս եւ հայ երիտասարդութեան նկատմամբ մասնաւորապէս: Քրիսեան հաւատաց դաստիարակութեան արժէքին եւ դեռ 100-ամեակ մը առաջ իր թելադրանքները կատարեց հայ մայրերուն, հայրերուն, թէ ինչպէ՛ս պէտք է դաստիարակեն իրենց երեխաները, որպէսզի «Առողջ միտքը առողջ մարմինի մէջ» սկզբունքով, անոնք մեծնան ընկերային առողջ մթնոլորտի եւ ազգային հարազատ միջավայրի մէջ»:



ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԷՆԻՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հայաստանի ֆիզիքական կուլտուրայի եւ

մարմնամարզի պետական հիմնարկի տնօրէն Դաւիթ Խիթարեան: Ան ըսաւ, որ Շաւարշ Քրիսեան կը հանդիսանայ հայ ժամանակակից մարմնակրթութեան յառաջատարը: «Ան Փիէր Բուպերթէնի մեծ աւանդը կրողն է: Աւելի՛ն, ան մեր հայկական Փիէր Բուպերթէնն է: Ինչո՞ւ համար, որովհետեւ ան 1905-ին, Փարիզի մարմնակրթութեան դպրոցը աւարտելով, կարողացաւ Արեւմտեան Հայաստանի մէջ ձեւաւորել նոր մշակոյթ: Կարողացաւ հիմնել «Մարզաշխարհ» թերթը, որուն միջոցով աւելի ժողովրդականացուց «Առողջ միտքը առողջ մարմինի մէջ» գաղափարախօսութիւնը: Ան հիմնադիրն է նաեւ այսօր իրականութիւն

Եղբ. Շառոյեան հաստատեց, որ Շաւարշ Քրիսեան Փիէր Բուպերթէնի «Աւելի արագ, աւելի բարձր, աւելի ուժեղ» կարգախօսը առնելով զայն փոխակերպեց «Միշտ պատրաստ»-ի: Անոր համար ալ, այդքան եղեռնագոհ դառնալէ ետք, մենք կարողացանք մեր հոգեւոր եւ ֆիզիքական ուժին շնորհիւ դարձեալ վերյառնել եւ անկախ Հայաստան եւ հզօր հայութիւն կերտել: Կը մնայ իրականացնել Քրիսեանի մեծ երազը՝ միացեալ Հայաստանը, որուն համար սերունդները շատ բան ունին սորվելիք մեծ ղեկավարին մտածումներէն եւ գործերէն:





դարձած համահայկական խաղերուն», ըսաւ ան:

Խիթարեան նշեց, որ մեծ պատիւ է այս հիմնարկի պատերուն ներքեւ կրել Շաւարշ Քրիսեանի դիմաքանդակը:

«Ան մեծ հաճոյք կ'առթէ հիմնարկի դասախօսներուն, ուսանողներուն եւ հայկական մարզաշխարհի սիրահարներուն: Շնորհակալութիւն քանդակագործ Դաւիթ Մինասեանին՝ այս գեղե-

ցիկ կոթողին համար: Շնորհակալութիւն հիմնարկի ղեկավարութեան՝ դիմաքանդակի կերտման գաղափարի վաւերացման համար», եզրափակեց Խիթարեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.Ի ընթացակարգ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ «Մեծ է Շաւարշ Քրիսեանի ներդրումը հայ մարմնակրթութեան: Ան ո՛չ միայն 101-ամեայ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան ռահվիրան է, այլեւ՝ ան հայ մարզական առաջին թերթին՝ «Մարզաշխարհ»-ին ստեղծիչն է: Իր ջանքերով նաեւ 1914-ին կը կազմուի հայկական Փուլթպոլի խումբերու առաջին ախոյեանութիւնը Պոլսոյ մէջ: Ինքն է նաեւ, որ գլխաւոր ոգին կը հանդիսանայ հայ սկաուտական եւ մարմնակրթական շարժումին ստեղծման եւ տարածման»:

Եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ 29 տարեկանին նահատակուած այս մեծ հայորդին մինչեւ օրս կը մնայ անշիրիմ: Իր ոգին եւ գաղափարականը, սակայն, կարելի է գտնել իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մօտ: «Իսկ ի՞նչ է այդ ոգին» հարցումին պատասխանելով, Ան ըսաւ.

«Այդ ոգին մարմնակրթութեան ճամբով հայ երիտասարդութեան ծառայութիւնն է: Առողջ, կայտառ եւ մոլուկիւններէ հեռու երիտասարդութեան մը պատրաստութիւնն է: Երիտասարդութիւն մը, որ բոլոր կարողու-



թիւնները պիտի դնէ ի սպաս իր ժողովուրդին եւ հայրենիքին:

«Երիտասարդութիւն մը, որ պիտի համախմբէ բոլորը, առանց աշխարհագրական, յարանուանական, գաղափարական կամ որեւէ այլ խտրութեան:

«Երիտասարդութիւն մը, որ վաղուան մեր պայծառ ապագան պիտի երաշխաւորէ եւ հայ ժողովուրդի առաջնորդութեան ղեկը պիտի ստանձնէ»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ. երախտագէտ կը մնայ իր հիմնադիրին եւ անոր յիշատակը տեւաբար կը յարգէ զանազան նախաձեռնութիւններով: 6 Սեպտեմբեր 2008-ին, Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ այս լսարանը վերանորոգուելով կոչուեցաւ «Շաւարշ Բրիսեան լսարան», իսկ տարի մը առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններու

ծիրին մէջ կազմակերպուեցաւ յատուկ զրտաժողով, ուր տոքթ. Շաւարշ Բրիսեան՝ նահատակ Շաւարշի եղբօրը թողու հանդէս եկաւ Բրիսեանի գործին պատմական արժեւորումը կատարող զեկուցումով: Իսկ այսօր, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի կազմին դիմաց, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը կատարէ Բրիսեանի դիմաքանդակին բացումը, յիշելով ու բոլորին յիշեցնելով Բրիսեանի մեծ աւանդը՝ երիտասարդութիւնը կազմակերպելու, մարմնակիրթանքի ճամբով առողջ հայեր եւ տիպար քաղաքացիներ պատրաստելու անհրաժեշտութիւնը: Իսկ ամէնէն կարեւորը, տեւաբար համախմբուելու եւ համահայկական ուժի վերածուելու ազգային հրամայականը, որուն մէջ է մեր փրկութիւնը այսօր եւ վաղը (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 56-57):

ՏՈՒՐԻՆՆԵՐ ԵՒ ԲՐԻՍԵԱՆԻ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ

Այս առիթով իր սրտի խօսքը արտասանեց Շաւարշ Բրիսեանի եղբօրը թողու՝ տոքթ. Շաւարշ Բրիսեան: Ան մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ը, որ կը յիշէ եւ երախտապարտ կը մնայ իր հիմնադիրին, որուն մտածումները միշտ կը մնան այժմէական ու թելադրական: Բրիսեան հայութեան ամբողջականութեան եւ հզօրութեան ջերմօրէն հաւատացողն էր, - յայտնեց ան եւ շեշտեց, - որ Բրիսեանի բոլոր ծրագիրները օրին չիրականացան, սակայն անոնք իբրեւ ուղեցոյց ծառայեցին սերունդներուն, մարմնակիրթութեան ճամբով ազգային նպատակներ հետապնդելու, երիտասարդութիւնը առողջ պահելու եւ ազգը հզօրացնելու համար:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻՆ ԽՕՍՔԸ

Խօսք առաւ նաեւ քանդակագործ Դաւիթ Մինասեան եւ շնորհակալութիւն յայտնեց ազգանուէր նման մարդու մը կարեւոր քանդակը իրեն վստահելուն համար: Ան մաղթեց, որ Բրիսեանի կիսատ մնացած գաղափարները յետնորդ սերունդները կ'իրականացնեն անպայման:

Աւարտին, տեղի ունեցաւ դիմաքանդակին բացումը նշող կարմիր ժապաւէնի հատում եւ ծաղկեմատոյց Բրիսեանի նորակերտ դիմաքանդակին (դիմաքանդակի բացման հանդիսութեան ամբողջական տեսագրութիւնը դիտել այս կապով՝ <https://www.facebook.com/My-Homenetmen/videos/525348858228592/>):



ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԿԵԱՆ ՄԻՇՏ ԿԸ ՄՆԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒ ԱՅԺՄԷԱԿԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԿԵԱՆԻ
ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին բացումը կանխող այս հանդիսութիւնը խորհրդանշական է եւ թելադրական:

Խորհրդանշական է, որովհետեւ այսօր դիմաքանդակի բացման այս հանդիսութեամբ մենք կ'ոգեկոչենք յիշատակը Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիր երրորդութեան ղեմքերէն Շաւարշ Քրիսեանի:

Այն, որ գլխաւոր գաղափարը յղացաւ անցեալ դարու առաջին տասնամեակին Պոլսոյ եւ Արեւմտահայաստանի տարածքին հայ մարզական բոլոր միութիւնները համախմբելու եւ մարմնակրթական մէկ ընդհանուր միութիւն կազմելու:

Շաւարշ Քրիսեան չկարողացաւ իր երազին իրականացումը տեսնել, որովհետեւ ան զոհ զնաց Հայոց Ցեղասպանութեան: Սակայն, իր ցանած սերմերը ծիլ տուին 1918-ին, երբ իր սաներն ու անմիջական գործակիցները, երազը իրականութիւն դարձուցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեամբ:

Մեծ է Շաւարշ Քրիսեանի ներդրումը հայ մարմնակրթութեան: Ան ո՛չ միայն 101-ամեայ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան ռահվիրան է, այլեւ՝ ան հայ մարզական առաջին թերթին՝ «Մարզաշխարհ»ին ստեղծիչն է: Իր ջանքերով նաեւ 1914-ին կը կազմուի հայկական Փոլսփոլի խումբերու առաջին խոյ-եանութիւնը Պոլսոյ մէջ: Ինքն է նաեւ, որ գլխաւոր ոգին կը

հանդիսանայ հայ սկստուտական եւ մարմնակրթական շարժումին ստեղծման եւ տարածման՝ «Առողջ միտքը առողջ մարմինով» կերտելու նպատակով:

Մարմնակրթանքի ուսուցիչ, դասախօս, հրապարակագիր Շաւարշ Քրիսեան անծանօթ անուն մըն է շատերուն: 29 տարեկանին նահատակած այս մեծ հայորդին մինչեւ օրս կը մնայ անչիրիմ: Իր ոգին եւ գաղափարականը, սակայն, կարելի է գտնել իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.՝ աւանդի մօտ:

Իսկ ի՞նչ է այդ ոգին: Այդ ոգին մարմնակրթութեան ճամբով հայ երիտասարդութեան ծառայութիւնն է: Առողջ, կայտառ եւ մոլուկութիւններէ հեռու երիտասարդութեան մը պատրաստութիւնն է:


Երիտասարդութիւն մը, որ բոլոր կարողութիւնները պիտի դնէ ի սպաս իր ժողովուրդին եւ հայրենիքին:

Երիտասարդութիւն մը, որ պիտի համախմբէ բոլորը, առանց աշխարհագրական, յարանուանական, գաղափարական կամ որեւէ այլ խտրութեան:

Երիտասարդութիւն մը, որ վաղուան մեր պայծառ ապագան պիտի երաշխաւորէ եւ հայ ժողովուրդի առաջնորդութեան ղեկը պիտի ստանձնէ:

Այս իմաստով, Շաւարշ Քրիսեան միշտ կը մնայ ժամանակակից ու աշխարհակալ: Իր մտածումներն ու գաղափարները կը պատշաճին նաեւ մեր օրերուն, երբ այնքան բազմացած են մեր ժողովուրդին ու հայրենիքին սպառնացող դժուարութիւնները եւ զայն արուեստականօրէն բաժան-բաժան ընող պատուարները:

Հ.Մ.Ը.Մ.՝ երախտագէտ կը մնայ իր հիմնադիրին եւ անոր յիշատակը տեւաբար կը յարգէ տարբեր-տարբեր նախաձեռ-





նութիւններով: 6 Սեպտեմբեր 2008-ին, Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ այս լսարանը վերանորոգուելով կոչուեցաւ «Շաւարշ Քրիսեան լսարան»:

Տարի մը առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններու ծիրին մէջ կազմակերպուեցաւ յատուկ գիտաժողով, ուր մեր սիրելի տոքթ. Շաւարշ Քրիսեանը, նահատակ Շաւարշի եղբօրորդին հանդէս եկաւ Քրիսեանի գործին պատմական արժեւորումը կատարող զեկուցումով: Իսկ այսօր, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի կազմին դիմաց, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը կատարէ Քրիսեանի դիմաքանդակին բացումը, յիշելով ու բոլորին յիշեցնելով Քրիսեանի մեծ աւանդը՝

Երիտասարդութիւնը կազմակերպելու, մարմնակրթանքի ճամբով առողջ հայեր եւ տիպար քաղաքացիներ պատրաստե-

լու անհրաժեշտութիւնը: Իսկ ամէնէն կարեւորը, տեւաբար համախմբուելու եւ համահայկական ուժի վերածուելու ազգային հրամայականը, որուն մէջ է մեր փրկութիւնը այսօր եւ վաղը, անկասկած:

Այս առիթով, շնորհակալութեան խօսք ունինք բոլոր անոնց, որոնք նպաստեցին այս դիմաքանդակին իրականացման: Յատուկ շնորհակալութիւն՝ քանդակագործ Դաւիթ Մինասեանին, նաեւ դիմաքանդակին աշխատանքները մօտէն հետապնդած եղբ. Ռուբենո Շառոյեանին: Բոլորին վարձքը կատար:

Շաւարշ Քրիսեան Երեւանէն, իսկ Վահան Չերազ Կիւմրիէն իրենց ոգեղէն ներկայութեամբ թող շարունակեն հսկել եւ ուղղել մեզի, որպէսզի մենք շարունակենք ընթանալ անոնց բացած ուղիէն՝ միշտ բարձրանալու եւ մեր ժողովուրդն ալ մեզի հետ բարձրացնելու Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական ուղիէն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԴՈՒՄ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՇՏՕՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ, ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՐԱԽՏԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

Թղթակից Երեւան



Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր ժողովէն օր մը առաջ, Կիրակի, 13 Հոկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը ծին, «Խուլերու մշակոյթի եւ մարմնամարզի հանրապետական պալատ»ի մարզադաշտին վրայ, Երեւան, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայաստանի մէջ վերահաստատման 30-ամեակի սկստական մեծաշուք հանդիսութիւն, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եղբ. Յակոբ Խաչերեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան անդամներու, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչներու, Ընդհանուր ժողովի մասնակից պատգամաւորներու, մեծ թիւով ծնողներու, հարազատներու եւ Հ.Մ.Ը.Մ.-

Հ.Ա.Ս.Կ.Ի բարեկամներու:

Հանդիսութիւնը կանխեց Հ.Մ.Ը.Մ.Ի Հայաստանի գործունէութեան 30 տարիներու պատմութիւնը ներկայացնող լուսանկարներու ցուցադրութիւնը՝ մարզադաշտ առաջնորդող սրահի մուտքին: Ներկաները երկա՛ր կանգ առին ցուցադրուած նկարներուն դի-

մաց եւ հետաքրքրութեամբ ծանօթացան միութեան 30-ամեայ երթը անմահացընող յիշատակելի պահերուն եւ դէմքերուն:

ԲԱՑՈՒՄԸ

Սկստական հանդիսութիւնը սկիզբ առաւ «Յառաջ նահատակ» քայ-





լերգով եւ Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի դրօշակակիրներու մարզադաշտ մուտք: Հետեւեցաւ տողանցքը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի խմապետական կազմին առաջնորդութեամբ: Տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 15 մասնաճիւղերէն աւելի քան 600 սկաուտներ, մեծ մասը նորեկ գայլիկներ եւ արի-արենոյճներ: Զոյգ թրիպիւններէն տողանցքին հետեւող ներկաները ջերմ ծափողջոյններով դիմաւորեցին հայրենի «կամաւոր բանակ»ը, միութեան փայլուն ապագային յոյսն ու ապաւէնը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ի ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔԸ

Մարզադաշտին վրայ իրենց տեղերը գրաւած սկաուտական շարքերուն ողջոյնի խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Դաւիթ Յա-

կոբեան: Ան ըսաւ, որ մեծ եւ առանձնաշատուկ է օրուան խորհուրդը: Սկաուտական իրենց երզումը տուող մեր հրաշք մանուկներուն, պատանիներուն եւ պարմանուհիներուն համար համար աշօր տօն է, նոր եւ լուսաւոր ճամբու սկիզբ ու մեկնակէտ: «Այսօր, սկաուտական իրենց երզումը տալով, անոնք պիտի դառնան 100-ամեայ փառաւոր ուղի կտրած համահայկական մեր մեծ կազմակերպութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անդամներ: Իրապէս անգնահատելի, մեծ ու կարեւոր է Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ, անոր զաւակներու կրթութեան եւ դաստիարակութեան գործին մէջ: Մենք համոզուած ենք, որ սկաուտական եւ ազգային մեր արժէքներու դաւանանքն ու դաստիարակութիւնը մեզ կը դարձնեն աւելի լաւ մարդ, լաւ հայ, լաւ քա-

ղաքացի, բնութեան պահապան եւ հայրենիքին արժանի զինուոր», շեշտեց եղբ. Յակոբեան:

Ապա, եղբայրը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ. 1918 թուականէն պատուով, արժանապատուութեամբ եւ մեծ պատասխանատուութեամբ կատարեց հայապահպանման գործ: 70 տարի Սփիւռքի երիտասարդութեան մօտ ան վառ պահեց հայրենիքի սէրը եւ անկախ պետականութեան երազը:

Եղբ. Յակոբեան այնուհետեւ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերահաստատման 30 տարիներու գործունէութեան եւ ըսաւ. «Փա՛ռք քեզ, նահատակ եղբ. Վարդան Բախշեան: Հ.Մ.Ը.Մ. 30 տարիէ հայրենիքի մէջ կը գործէ հաստատուն հաւատքով եւ անկոտորում կամքով: Կը հիմնէ նոր մասնաճիւղեր եւ բանակավայրեր՝ իր շուրջ համախմբելով արժանաւոր հայորդիներ: Հ.Մ.Ը.Մ. կը բարձրանայ եւ իր հետ կը բարձրացնէ հայ մարդը, կերտելով մեր երագած հայրենիքը»:

Իր խօսքը ներկայ սկաուտներուն ուղղելով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետը ըսաւ. «Զեր գործը արդա՛ր է, նպատակը՝ ազնիւ ու վեհ, ուրեմն ուսուսի տուած, մեծ պատասխանատուութեամբ շարժի՛նք յառաջ, «Մի՛շտ պատրաստ» գործելու Հայաստանի եւ հայրութեան համար»:

Եղբ. Յակոբեանի խօսքէն ետք, աւելի քան 300 գայլիկներ եւ սկաուտներ կատարեցին խոստման արարողութիւն: Յատկանշական կերպով, անոնք





իրենց խոստումը տուին միուլթեան անդամներէն եղբ. Շանթ Ծառուկեանի կողմէ Արարատի դազաթ բարձրացուած Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին:

ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՇՏՏՈՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Յաջորդեցին սկառտական աստիճաններու եւ պաշտօններու տուչութիւններ, որոնցմէ ետք՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 30-ամեակին առիթով, ներկայ սկառտները, բոլորը միասնաբար, վերանորոգեցին սկառտական իրենց խոստումը: Խոստումը ընդունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ըսկառտականի ներկայացուցիչ քոյր Շուշան Մելիքեան:



Տեղի ունեցաւ 30-ամեակի վկայագիրներու եւ կրօնականներու տուչութիւն՝ արժանաւոր քոյրերու եւ եղբայրներու:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հայաստանի առաջին հանրապետութիւնը ծնած են միասնաբար, 1918-ին, Հայոց Յեղասպանութեան յաջորդած դժուարին տարիներուն, երբ մեր ժողո-

վուրդին երկու երրորդը կոտորուել է ետք, ջարդերէն հրաշքով փրկուած մէկ երրորդը, գաղթական, թշուառ, սովահար եւ համաճարակներու գոհր դարձած՝ կու գար եւ իր վերջին ապաստանը կը գտնէր նորանկախ հայրենիքի մէջ: «Լինել-չլինել» ու օրեր էին: Հայ մարդը պէտք է որոշեր ընելիքը: Պէտք է կազմակերպուեր, գօրանար, նախ ինքը ոտքի կանգնէր ու ապա՝ հայրենիքը ոտքի պահէր: Օրհասական այդ օրերուն էր, ահա, որ հրապարակ կու գար Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, ծանօթ՝ Հ.Մ.Ը.Մ. անունով: Հ.Մ.Ը.Մ. կը շտկէր հայ մարդուն մէջքը, վաղուան յոյսը կը ներշնչէր անոր, պատանեկութիւնը կը դաստիարակէր, երիտասարդութիւնը կը համախմբէր եւ ազգը ազգ կը պահէր մարմնակրթութեամբ, սկառտական թէ՛ մարզական աշխատանքներով:

Եղբ. Մկրտիչեան միուլթեան սփիւռքեան գործունէութեան անդրադառնալով յայտնեց, որ «Հ.Մ.Ը.Մ. 70 տարի սիրեց եւ սիրցուց հայրենիքը: Իրեն դիմող բազմահազար պատանիներուն եւ երիտասարդներուն սորվեցուց, որ անցագիրին գոյնը չէ, որ կը ճշդէ մէկու մը պատկանելիութիւնը հայրենիքին: Ո՛չ ալ ծննդավայրն է, որ կը ճշդէ իր կապուածութիւնը հայրենիքին: Մարդ կրնայ հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու ծնիլ, կեանքին մէջ հայրենիքը տեսած չըլլալ, բայց Հ.Մ.Ը.Մ.ի շնորհիւ հայրենիքի սիրով ու կարօտով մեծնալ: Հայրենիքի համար ապրիլ ու գործել»:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 30-ամեայ երթին արժեւորումը կատարելով, եղբ. Մկրտիչեան կատարեց կարգ մը հարցադրումներ.-

«- Անցնող 30 տարիներուն Հայաստանի մէջ եղա՞ծ է պատանեկան-երիտասարդական հարցերով զբաղող միութիւն մը, որ անընդմէջ 30 տարի գործած ըլլայ:

«- Եղա՞ծ է միութիւն մը, որ 1996-էն, այսինքն՝ 23 տարիէ ի վեր հայութիւնը ներկայացնէ միջազգային ընտանիքին մօտ, այնպէս ինչպէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը հայ սկառտութիւնը կը ներկայացնէ համաշխարհային սկառտական շարժումին մէջ:

«- Եղա՞ծ է համահայկական կառույցով միութիւն մը, որ այսքան մեծածա-



ւալ գործունէութիւն ծաւալած է Հայաստանի մէջ, կազմակերպելով 7 ընդհանուր բանակումներ, 3 մարզախաղեր, 3 խմբապետական համագումարներ եւ 5 Պատգամաւորական ժողովներ:

«- Եղա՞ծ է միութիւն մը, որ իր կարիքները բաւարարելէ ետք, ընդառաջած է նաեւ քոյր շրջաններու՝ Ջաւախքի, Թիֆլիսի, Մոսկուայի եւ Արցախի մասնաճիւղերու կարիքներուն:

«- Եղա՞ծ է միութիւն մը, սփիւռքեան չարիքը բարիքի վերածած է՝ իր դռներն ու սրտերը լայն բանալով Իրաքի, Սուրիոյ, Իրանի եւ Լիբանանի շրջաններէն հայրենիք հաստատուած բազմահարիւր պատանիներու եւ երիտասարդներու:

«- Ըսէ՛ք, գոյութիւն ունեցա՞ծ է միութիւն մը, որ քառայարկ կեդրոն ունեցած է Երեւանի մէջ, նախանձելի

հսկայ բանակավայր Բիւրականի մէջ, յարմարաւէտ երկրորդ բանակավայր մը Երեւանի մէջ, առանց անդրադառնալու տակաւին բազմաթիւ քաղաքներու մէջ հաստատուած իր գրասենեակներուն:

«- Իսկապէս, գոյութիւն ունեցա՞ծ է միութիւն մը, որ վերջին 15 տարիներէն 13-ին համամիութենական ձեռնարկներ (բանակումներ, խաղեր, համագումարներ) հիւրընկալած է՝ մասնակիցներու տարուէ տարի աճող թիւերով եւ տարւէ տարի աւելի բժախնդիր կազմակերպումով:

«Հ.Մ.Ը.Մ-ի վաղուան պատմագիրը արժանին պիտի հատուցէ միութեան մայր շրջանին՝ Հայաստանին, իբրեւ ամէնէն կենսունակ եւ աշխոյժ շրջաններէն մէկը, որ Հ.Մ.Ը.Մ-ի մէկ դարու պատմութեան վերջին երեսուն տարիներ

րուն ունեցաւ իր պատուաբեր եւ հպարտաբեր գործունէութիւնը»:

Ուստի, եղբ. Մկրտիչեան եզրակացուց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը մեծ պարտականութիւն ունի այսօրուան եւ վաղուան Հայաստանի մէջ, ազգային մեր արժեհամակարգը նոր սերունդին ներկայացնելու, Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիասնութիւնը ամրապնդելու եւ վաղուան համար բարոյականի տէր, ազգային առողջ դաստիարակութեամբ քաղաքացիներ պատրաստելու համար (խօսքը տեսնել էջ 62-64):

ՅՈՒՇԱՆՈՒՅՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ ԵՒ ՓԱԿՈՒՄ

Եղբ. Մկրտիչեանի խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը յատուկ յուշանուէրներով գնահատեց միութեան հիմնադրութեան եւ 30 տարուան աշխատանքներուն իրենց նկատառելի նպաստը ունեցած Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերն ու եղբայրը:

Հոսկ, 30-ամեակի հանդիսութիւնը աւարտեցաւ սկաուտական խանդավառութեամբ եւ ազգային ոգեւորութեամբ: Օղակաձեւ շրջանակներ կազմած՝ սկաուտներ պարեցին ցնծութեամբ, շնորհաւորելով իրարու 30-ամեակը եւ տեւական յաջողութիւն մաղթելով իրենց սիրելի միութեան (հանդիսութեան ամբողջական տեսագրութիւնը դիտել այս կապով՝ <https://www.facebook.com/HASKscouts/videos/386754245602259/UzpfSTU4Nzc4MDkyNzcxODcwMDozMDU3OTgyNTc3NTY1MTC3/>):





Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ը ՄԵԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԵՐ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆԹԱՑԱԻԱՐՏ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԳԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 30-ԱՄԵԱԿԻ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՁԵՌՆԱՐԿԻՆ)

Այսօր տօն է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար: Ընտանիքին բոլոր անդամները համախմբուած են միասնաբար նշելու իրենց հարազատին ու սիրելիին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Հայաստանի մէջ վերընծիւղման 30-ամեակը:

Շատերուն կրնայ տարօրինակ թուիլ վերընծիւղում բառը, որովհետեւ ան հազուադէպ օգտագործելի բառ մըն է հայերէնի մէջ, բայց եւ այնպէս, ան լաւագոյն բառն է, որ կը բնորոշէ 30 տարի առաջ, 2 Դեկտեմբեր 1989-ին Երեւանի մէջ կատարուած աքթը՝ Հ.Մ.Ը.Մ.ի վերականգնումը Հայաստանի մէջ, 70 տարուան հալածանքէ, մերժումէ եւ անտեսումէ ետք:

Պատմութեան ծանօթները գիտեն, որ Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հայաստանի առաջին Հանրապետութիւնը ծնած են միասնաբար, 1918-ին, Հայոց Յեղասպանութեան յաջորդած դժուարին տարիներուն, երբ մեր ժողովուրդին երկու երրորդը կոտորուելէ ետք, ջարդերէն հրաշքով փրկուած մէկ երրորդը, գաղթական, թշուառ, սովահար եւ համաճարակներու զոհը դարձած՝ կու գար եւ իր վերջին ապաստանը կը գտնէր նորանկախ հայրենիքի մէջ:

«Լինել-չլինել»ու օրեր էին: Հայ մարդը պէտք է որոշեր ընելիքը: Պէտք է կազմակերպուէր, գորանա՛ր, նախ ի՛նքը ոտքի կանգնէր ու ապա՝ հայրենիքը ոտքի պահէր:

Օրհասական այդ օրերուն էր, ահա, որ հրապարակ կու գար Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, ծանօթ՝ Հ.Մ.Ը.Մ. անունով: Հ.Մ.Ը.Մ. կը շտկէր հայ մարդուն մէջը, վաղուան յոյսը կը ներշնչէր անոր, պատանեկութիւնը կը դաստիարակէր, երիտասարդութիւնը կը համախմբէր եւ ազգը ազգ կը պահէր մարմնակրթութեամբ, սկստական թէ մարզական աշխատանքներով:

Հայաստանի առաջին հանրապետութեան նման, Հ.Մ.Ը.Մ. եւս կ'ունենար կարճատեւ կեանք: Հայաստանի խորհրդայնացումով անոր գործունէութիւնը կը կասեցուէր, անդամ-

ները կը հալածուէին, կ'աքսորուէին, կը բանտարկուէին եւ դէպի մահ կ'առաջնորդուէին Սիպերիոյ կեդրոնացման ճամբարներուն մէջ:

Կազմակերպութիւնը կը դադրէր գոյութիւն ունենալէ, սակայն ոգին եւ գաղափարախօսութիւնը կը մնային: Չէին կրնար չմնալ, որովհետեւ անոնք հարազատ թարգմանը կը հանդիսանային հայ ժողովուրդի իղձերուն եւ անկատար տենչերուն: Իսկ ի՛նչ կ'ըսէին այդ ոգին եւ գաղափարախօսութիւնը. շատ պարզ երեք բառեր. «...Եւ ծառայել հայրենիքիս»:

Ծառայել հայրենիքի մէջ գործելով: Ծառայել հայրենիքէն հեռու, հայրենիքին համար գործելով: Ծառայել հայրենիքի մէջը եւ դուրսը միաժամանակ գործելով: Բոլոր պարագաներուն, ծառայել կամաւոր կերպով, անհասխնդիր մօտեցումով եւ ուժերու ամբողջական լարումով:

Այսպէս է, որ Հ.Մ.Ը.Մ. 70 տարի շարունակեց իր ծառայութիւնը հայրենիքին: Սիրեց եւ սիրցուց հայրենիքը: Իրեն դիմող բազմահազար պատանիներուն եւ երիտասարդներուն սորվեցուց, որ անցազիրին գոյնը չէ, որ կը ճշդէ մէկու մը պատկանելիութիւնը հայրենիքին: Ո՛չ ալ ծննդավայրն է, որ կը ճշդէ իր կապուածութիւնը հայրենիքին: Մարդ կրնայ հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու ծնիլ, կեանքին մէջ հայրենիքը տեսած չըլլալ, բայց Հ.Մ.Ը.Մ.ի շնորհիւ հայրենիքի սիրով ու կարօտով մեծնալ: Հայրենիքի համար ապրիլ ու գործել:

70 տարի, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերուն երազն էր բանակում կատարել հայրենի լեռներուն վրայ, մարզախաղեր կատարել հայրենի դաշտերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն մը ունենալ Երեւանի մէջ, քոյր մասնաճիւղեր դառնալ միութեան Հայաստանի մասնաճիւղերուն հետ:

Երազը իրականութիւն սկսաւ դառնալ 1989-ին, երբ





Հայրենիքի ծառայությունների ոգին իրենց հոգիներուն մէջ պահած խումբ մը նուիրեալներ, Արցախեան պայքարի ազգային-հայրենասիրական զարթօնքի պայմաններէն օգտուելով, Հ.Մ.Ը.Մ-ի օրուան Կեդրոնական Վարչութեան քաջալերանքով, նախ գաղտնի ու ապա՝ բացայայտ կերպով մասնաճիւղ մը հիմնեցին Երեւանի մէջ:

Մասնաճիւղ մը հիմնելը սակայն բան մըն էր, պահելը՝ այլ բան:

Հ.Մ.Ը.Մ-ի վերընձիւղումը առաջին օրէն պիտի դիմադրուէր տեսակ-տեսակ դժուարութիւններ: Անուան արձանագրութեան օրինական հարց, փորձառու մարդու չհարց, կեդրոն-բանակազմայրի հարց, դաստիարակչական ծրագիրներու մշակման հարց:

Եւ կարծէք այս բոլոր հարցերը չէին բաւեր: Հագիւ հինգ տարեկան Հայաստանի Հ.Մ.Ը.Մ-ը, 1994-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Համազգայինի եւ ՀՕՄ-ի Հայաստանի միաւորներուն հետ պիտի ենթարկուէր օրուան իշխանութիւններու հալածանքին: Գրասենեակները պիտի փակուէին, միութեան «Մարզաշար» թերթը պիտի դադրեցուէր, պատասխանատուները հալածանքի եւ բանտարկութեան պիտի ենթարկուէին եւ 1989-ին սկսուած երթը չորս տարի պիտի կասեցուէր անարդարանալի կերպով:

1998-ի իշխանափոխութեամբ Հայաստանի մէջ պիտի ստեղծուէին քաղաքական նոր պայմաններ եւ Հ.Մ.Ը.Մ. աստիճանաբար պիտի վերագտնէր աշխատանքի իր նախկին թա-

փը՝ այս անգամ գործելով իբրեւ Հայաստանի Ազգային Սկսուողական Կազմակերպութիւն՝ Հ.Ա.Ս.Կ.: Անուան փոփոխութիւնը օրինական պայմաններէ թելադրուած տեղի պիտի ունենար 1995-ին:

Յարգելինէր,

Այսօր, երբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի հիմնադրութեան 30-ամեակը կը նշենք, կ'արժէ անգամ մը հարց տալ, որ՝

- Անցնող 30 տարիներուն Հայաստանի մէջ եղա՞ծ է պատանեկան-երիտասարդական հարցերով զբաղող միութիւն մը, որ անընդմէջ 30 տարի գործած ըլլայ:

- Եղա՞ծ է միութիւն մը, որ 1996-էն, այսինքն՝ 23 տարիէ ի վեր հայրութիւնը ներկայացնէ միջազգային ընտանիքին մօտ, այնպէս ինչպէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը հայ սկսուողականութիւնը կը ներկայացնէ համաշխարհային սկսուողական շարժումին մէջ:

- Եղա՞ծ է համահայկական կառուցող միութիւն մը, որ այսքան մեծածաւալ գործունէութիւն ծաւալած է Հայաստանի մէջ, կազմակերպելով 7 ընդհանուր բանակումներ, 3 մարզախաղեր, 3 խմբապետական համագումարներ եւ 5 Պատգամաւորական ժողովներ:

- Եղա՞ծ է միութիւն մը, որ իր կարիքները բաւարարելէ ետք, ընդառաջած է նաեւ քոյր շրջաններուն՝ Ջաւախքի, Թիֆլիսի, Մոսկուայի եւ Արցախի մասնաճիւղերու կարիքներուն:

- Եղա՞ծ է միութիւն մը, սփիւռքեան չարիքը բարիքի վերածած է՝ իր դռներն ու սրտերը լայն բանալով Իրաքի, Սուր-



իրոյ, Իրանի եւ Լիբանանի շրջաններէն հայրենիք հաստատուած քաղմահարիւր պատանիներու եւ երիտասարդներու:

- Ըսէ՞ք, գոյութիւն ունեցած է միութիւն մը, որ քառաշաբաթ կեդրոն ունեցած է Երեւանի մէջ, նախանձելի հսկայ բանակավայր՝ Բիւրականի մէջ, յարմարաւէտ երկրորդ բանակավայր մը Երեւանի մէջ, առանց անդրադառնալու տակաւին քաղմութիւն քաղաքներու մէջ հաստատուած իր գրասենեակներուն:



- Իսկապէս, գոյութիւն ունեցած է միութիւն մը, որ վերջին 15 տարիներէն 13-ին համամիութենական ձեռնարկներ (բանակումներ, խաղեր, համագումարներ) հիւրընկալած է՝ մասնակիցներու տարուէ տարի աճող թիւերով եւ տարուէ տարի աւելի բծախնդիր կազմակերպումով:

Հ.Մ.Ը.Մ-ի վաղուան պատմագիրը արժանին պիտի հատուցէ միութեան մայր շրջանին՝ Հայաստանին, իբրեւ ամէնէն կենսունակ եւ աշխոյժ շրջաններէն մէկը, որ Հ.Մ.Ը.Մ-ի մէկ դարու պատմութեան վերջին երեսուն տարիներուն ունեցաւ իր պատուաբեր եւ հպարտաբեր գործունէութիւնը:

Օտարները յաճախ հայն ու Հայաստանը ճանչցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկստութեան ընդմէջէն:

Հայաստանը յաճախ Սփիւռքին ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կազմակերպութեան, աշխատասիրութեան եւ անմնացորդ նուիրումին շնորհիւ:

Ի գուր չէ, որ Հայաստանի մէջ վարչակարգեր փոխուեցան, նախագահներ իրարու յաջորդեցին եւ 1998-էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ յարգանքն ու գուրգուրանքը մնացին անփոփոխ: Հայրենի պետութիւնը մնայուն կերպով սատար հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին, որովհետեւ տեսա՛ւ գործը, գնահատեց արդիւնքը եւ արժեւորեց գայն կատարողը:

30-ամեակը առիթ է վերյիշումի եւ գնահատանքի:

Պէտք է վերյիշել եւ գնահատել Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերընձիւղման առաջին սերունդի չակերտաւոր խենթերը՝ Վարդանը Բախշեանը, այս սրահին մէջ ներկայ Բագրատ Եսայեանը, Մանուկ Մանուկեանը եւ դեռ ուրիշներ:

Պէտք է վերյիշել եւ խոնարհիլ յիշատակին դիմաց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի այն նահատակներուն, որոնք իրենց թանկագինը գոհաբերեցին հայրենիքին եւ հայութեան համար: Յաւերթ ապրի յիշատակը եղբայրներ Վարդան Բախշեանին, Վաչէ Ռոստոմեանին եւ Յակոբ Առուստամեանին, որոնց՝ Սփիւռքէն կը միանայ նահատակ Վիգէն Զաքարեանը:

Պէտք է վերյիշել մանաւա՛նդ սեւ աշխատանքի ախոյեան մեր քոյրերն ու եղբայրները, որոնք յաճախ ամիսներով հանգիստ ու դադար չունեցան համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակում

մը կամ մարզախաղ մը յաջողցնելու համար: Միութիւնը այդ խոնարհ հերոսներուն կը պարտի իր յաջողութիւնը: Շատերը անոնցմէ ներկայ են այս սրահին մէջ:

Վերջապէս, յիշենք ու գնահատենք անոնք որոնք պատնէջի վրայ են այսօր: Կրնային պատնէջի վրայ չըլլալ, սեփական հանգիստի եւ հաճոյքի հետամուտ ըլլալ, ինչպէս իրենց սերնդակիցներէն շատերը, բայց անոնք որոշած են Հ.Մ.Ը.Մ-ի սիրոյն գոհել ամէն բան՝ անհատին մէջ մարդը, մարդուն մէջ ազնիւ քաղաքա-

ցին կերտելու համար:

Հ.Մ.Ը.Մ-ը, սիրելիներ, այս բոլորով Հ.Մ.Ը.Մ. է:

Բոլորին գոհողութիւններուն գումարն է, որ այս միութիւնը արժանի կը դարձնէ Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւնը ներկայացնելու աշխարհի մէջ:

Նաեւ, բոլորին նուիրումի անչափելի տարողութիւնն է, որ այս միութիւնը կը պահէ Հայաստանի ամէնէն աշխոյժ, ամէնէն գաղափարական եւ ամէնէն նուիրեալ պատանեկան-երիտասարդական միութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի ուժին անսպառ աղբիւրն է: Այդ աղբիւրը այսօր կը բխի շրջանի 15 միաւորներէն՝ Երեւանէն Արմավիան, Արմավիէն Էջմիածին, Մարտունիէն Վեպի եւ այլ քաղաքներ: Մեր սպասումն է, 40-ամեակի եւ 50-ամեակի տօնակատարութիւններուն, միաւորներուն թիւը տեսնել կրկնապատկուած, իսկ անդամներուն թիւը՝ քաղմապատկուած:

Մեր համոզումն է, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը մեծ պարտականութիւն ունի այսօրուան եւ վաղուան Հայաստանի մէջ, ազգային մեր արժեհամակարգը նոր սերունդին ներկայացնելու, Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիասնութիւնը ամրապնդելու եւ վաղուան համար բարոյականի տէր, ազգային առողջ դաստիարակութեամբ քաղաքացիներ պատրաստելու համար:

30-ամեակի երթը թող ըլլայ անխափան:

Թող նորանոր ամեակներ հարստացնեն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի պատմութիւնը, որպէսզի իր կարգին, ան նորանոր իրագործումներով հարստացնէ միութիւնը, հայութիւնն ու Հայաստանը:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը:

Կեցցէ՛ անկախ Հայաստանը:

Կեցցէ՛ միացեալ հայութեամբ միացեալ Հայաստանը, ուր կը փափաքինք տօնակատարել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գալիք ամեակները:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 30-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ԵՂԲ. ՎԻԳԻՆ ՆԱԶԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ ՄԻՈՒԹԵԱՆ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ, ԳԱԲՐԻԷԼ ԶԷՄՊԵՐՃԵԱՆ՝ «ՈՍԿԷ ՇՈՒՇԱՆԱԾԱՂԻԿ» ՇՔԱՆՇԱՆՈՎ,
ԻՍԿ ԵՂԲ. ԱՐԱՄ ՖՐԱՆԿԵԱՆ՝ «ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆ» ՅՈՒՇԱՄԵՏԱԼՈՎ

Թղթակից
ԵՐԵՎԱՆ

Հիմնադրամի համանախագահ Գաբրիել Վարչութեան, միութեան 30 տարուան
Զէմպերճեանի, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի երախտաւորներու, բարերարներու եւ

ՀՄԸՄ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի աշխատանքներու աւարտէն օր մը ետք, Շաբաթ, 19 Հոկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 7-ին, Երեւանի «Արքայաձոր» ճաշարաններու համալիրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Հայաստանի մէջ վերահաստատման 30-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի նորընտիր եւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւններու անդամներու, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի կազմակերպական ներկայացուցիչ Սիմոն Սիմոնեանի, «Փիւնիկ»





մեծ թիվով բարեկամներու:

Ճաշկերոյթ-պարահանդէսին բացումը կատարելով, օրուան հանդիսավարներ՝ քոյր Անաչէ Նազարեան եւ եղբ. Պերճ Թիւֆէնկճեան բարի գալուստ մաղթեցին ներկաներուն եւ հրաւիրեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեանը՝ փոխանցելու միութեան խօսքը:

Քոյր Սանտրա ողջունեց 12-րդ Պատգամաւորական Ժողովի առիթով Հայաստան Ժամանած Հ.Մ.Ը.Մ-ական աշխարհասփիւռ քոյրերն ու եղբայրները: «Վարձքը կատար» ըսաւ բոլորին եւ նշեց, որ «Անցեալ վեց օրերուն ձեր բոլորին կատարած աշխատանքին շնորհիւ մեր կազմակերպութիւնը յառաջիկայ քառամեակի համար ունի յստակ ընելիքներ եւ տեսլական, որ միմիայն դրական արդիւնքներու պէտք է յանգեցնէ: Նոյն Պատգամաւորական Ժողովը հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը այլեւս կայուն իրողութիւն է: Անկախ բոլոր տեսակի վերիվայրումներէ, ան կը քալէ դէպի յառաջ: Հոկտեմբեր 13-ին տեղի ունեցած երդման արարողութեան մասնակիցներու շարքերը ապացոյց են այս անքակտելի իրողութեան եւ կողման փաստելու, որ մեր կազմակերպութիւնը այսուհետեւ իրաւունք չունի ընկրկելու»:

Շարունակելով, քոյր Սանտրա հաստատեց. «Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը Հ.Մ.Ը.Մ-ի Բարձրացի՛ր-բարձրացուր կարգախօսին ապաւինելով, եւ հաւատարիմ մնալով իր նպատակային ծրագիրին եւ գաղափարախօսութեան, սահուն ընթացքով միայն յառաջ պիտի ընթանայ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի բոլոր անդամները պատրաստ են ի գործ դնելու իրենց ջանքերը այս նպատակը լաւագոյնս իրականութիւն դարձնելու եւ վերահաստատելու այն ինչ որ իբրեւ աւանդ ստացած են կազմակերպութեան հիմնադիր քոյրերէն եւ եղբայրներէն»:

Այնուհետեւ, հանդիսավար քոյրն ու



եղբայրը առաջարկեցին ճաշկերոյթին առաջին կենացը նուիրել 101-ամեայ, բայց միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ-ին: Երկրորդ կենացը յատկացուեցաւ հայոց հերոսական բանակին, իսկ երրորդ կենացը՝ հայոց մայրաքաղաք Երեւանին, որուն հիմնադրութեան 2801-ամեակը կը զուգարկուէր այդ օրուան:

Յաջորդեցին շնորհակալական խօսքեր՝ ճաշկերոյթին բարձրորակ գինիները տրամադրած «Կարաս Ուալմո» ընկերութեան եւ «Երկիր մետիա» պատկերաս-





փիլուզի կայանի ստեղծագործական խումբին՝ Արթուր Մկրտչեանին եւ Արթուր Պապեանին, որոնք պատրաստեցին Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 30-ամեակի տեսերիզը:

30 վայրկեաննոց տեսերիզը, միութեան հիմնադիր սերունդի եւ յաջորդական պատասխանատուներու վկայութիւններով, կը ներկայացնէ Հ.Մ.-Լ.Մ.-ի Հայաստանի մէջ վերահաստատման 30-ամեայ երթը, անմոռանալի դրուագներն ու դէմքերը:

Հարկ է նշել, որ ճաշկերոյթ-պարա-

հանդէսը խանդավառեցին «Քալըրզ աֆ Արմենիա» նուագախումբը, երգչուհի Շուշան Պետրոսեան եւ երգիչ Սուրէն Աճէմեան:

Տեղի ունեցաւ 30-ամեակի կարկանդակի հատում, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայ եւ նախկին ատենապետները, ներկայութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-ի նորընտիր եւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւններու ատենապետներուն:

Ճաշկերոյթ-պարահանդէսը ունեցաւ պարզեւատրումներու յիշատակելի բաժին: Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան որոշումով, երկար տարիներ Հայկալի եւ

Հայաստանի մէջ Հ.Մ.-Լ.Մ.-ական իր գործունէութեան համար, եղբ. Վիգէն Նազարեան պարգեւատրուեցաւ միութեան «Ծառայութեան» շքանշանով: Ապա, Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին ցուցաբերած իր մնայուն աջակցութեան համար, Գաբրիէլ Զէմպէրճեան արժանացաւ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Ոսկէ շուշանածաղիկ» շքանշանին:

Վերջին պարգեւատրուողը եղաւ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի առաջին սերունդի անդամներէն եղբ. Արամ Ֆրանկեան, որ արժանացաւ «Վարդան Բախչեան» յուշամետալին: Այս առիթով ցուցադրուեցաւ եղբ. Վարդան Բախչեանը ծանօթացնող տեսերիզ մը:

Ճաշկերոյթ-պարահանդէսին խանդավառութիւնը զագաթնակէտին հասաւ ազգային-հայրենասիրական երգերու կատարումներով: Խանդավառուած մթնոլորտէն կատարուեցան բազմաթիւ նուիրատուութիւններ, մեծ մասը՝ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին, իսկ մաս մըն ալ՝ Հ.Մ.-Լ.Մ.-ի Արցախի եւ Սուրիոյ մասնաճիւղերուն:





Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՐԿԱՐԱՄԵԱՅ ԻՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻՆ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ.ի պատմության մէջ աննախընթաց քայլով մը, 3 Հոկտեմբեր 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը պարզեցաւ որեց ոչ-հայ անձնաւորութիւն մը՝ Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրին: Պարզեցաւ որ մը կատարեցաւ առի երախտագիտութիւն՝ անցնող աւելի քան 20 տարիներուն, Հարիրի ընտանիքին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային համալիրի կառուց-



Փոթոյնքեր Մարկար



ման ծրագրերին մեծագույնը եւ հետեւողական նուիրատուութեան:

Պարգեւատրոււմը տեղի ունեցաւ վարչապետ Սաստ Հարիրի կեդրոնական Պէյրութի բնակարանին մէջ՝ հրաւիրեալներու սեղմ շրջանակով եւ կոկիկ հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան վարչապետ Հարիրի, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, հայկական երեսփոխանական պլոքի անդամ՝ երեսփոխան Յակոբ Թերզեան, նախկին նախարարներ եւ երեսփոխաններ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ, Լիբանանի Թեմի քարոզիչ Անանիա Մ. Վրդ. Գուճանեան, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս Պատրիարքի եւ Հայ Կաթողիկէ Պատրիարքական Թեմի օգնական Եպիսկոպոս Գէորգ Եպս. Ասատուրեանի ներկայացուցիչ հայր Սեպուհ Վրդ. Կարապետեան, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Մկրտիչ Գաբակէօզեանի ներկայացուցիչ Վեր.

Րաֆֆի Մարրեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան, Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խօշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Սիսեռեանի ներկայացուցիչ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը Թամար Գապագեան-Հաչէօլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Հայկական համալսարանի նախագահ վեր. Փօլ Հայտոսեան, ինչպէս նաեւ լիբանանահայ ազգային-միութենական կառույցներու պատասխանատուներ:

ՅԱՏՈՒԿ ԳԻՐԸ

Հանդիսութիւնը սկսաւ Անանիա Մ. Վրդ. Գուճանեանի կողմէ ընթերցուած յատուկ գիրով, որուն մէջ ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան՝ ընդգծելով հայ պատանիներուն եւ երիտասարդ սերունդներուն ջամբող սկսուողական եւ մարմնակրթական դաստիարակութեան կարեւորութիւնը:

Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդ սերունդին արիւն կը ներարկէ եւ հայկական ընկերութեան սնունդ կը պարգեւէ:

«Նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրի հաւատացած է լիբանանեան ընկերութեան մէջ երիտասարդութեան դերակատարութեան եւ նիւթապէս ու բարոյապէս օժանդակած է անոր ու նեցուկ կանգնած՝ աշխուժացնելու համար լիբանանցի երիտասարդութեան դերակատարութիւնը եւ աշխատած է անոր ապահովելու համար խոստմնալից ապագայ մը: Այսօր մեր ներկայութիւնը հոս՝ կը փաստէ այն իրականութիւնը, որ վարչապետ Սաստ Հարիրի նոյն առաքելութեան մէջ է եւ իր հօր ուղեղիծով կը շարունակէ զօրակցել երիտասարդութեան դերակատարութիւնը կարեւորող միութիւններուն», ըսաւ ան:

Գուճանեան Մ. Վրդ. շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին կատարուած օժանդակութիւններուն համար եւ իր բարեմաղթութիւնները փոխանցեց վարչապետ Հարիրիի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ.



Photo by Markar



Photo by Markar

Ռաֆֆի Կէօվօղլանեան: Ան ըսաւ, թէ պատմութիւնը կը կերտուի արտակարգ անձնաւորութիւններու կողմէ, ինչպէս նաեւ՝ արտակարգ իղձերու եւ ձգտումներու հիման վրայ:

«Այսօր, իբրեւ Հ.Մ.Ը.Մ. եւ Լիբանանի մէջ գործող երիտասարդական միութիւններ, մենք կ'ապրինք պատմական պահեր: Ունինք երիտասարդ վարչապետ մը, որ հսկայ ձգտումներով, բարեկարգումի նպատակով, հզօր կամքով եւ առաջադրանքներով կը ջանայ գործադրել այնպիսի ծրագիրներ, որոնց գործադրութիւնը անկարելի կը թուի անոնց համար, որոնք հաւատք չունին անոր կարողութիւններուն, նոր սերունդին եւ բարգաւաճ ապագայի հանդէպ», ըսաւ ան:

Եղբ. Կէօվօղլանեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ սկսած է շուրջ երկուքուկէս տասնամեակ առաջ, երբ անոր սրտին շատ մօտիկ անձ մը՝ եղբ. Հրաչ Սիսեռեան խնդրանքով մը ներկայացած է նահատակ վարչապետին:

Օրին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Հրաչ Սիսեռեանի խնդրանքին ընդառաջած է Ռաֆիք Հարիրի եւ հսկայ գումար մը նուիրաբերած է Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային համալիրի կառուցման ֆոնտին:

Ան աւելցուց, որ մինչեւ իր նահատակութիւնը վարչապետ Ռաֆիք Հարիրի տարեկան ղրութեամբ նուիրատուութիւն կատարած է այդ ֆոնտին:

«Ռաֆիք Հարիրի ահաբեկուեցաւ, սակայն անոր երազը մնաց կենդանի: Ռաֆիք Հարիրի ահաբեկուեցաւ, սակայն անոր գործելաճճը մնաց կենդանի՝ իր զաւկին՝ վարչապետ Սաստէտին Հարիրիի գործունէութեան ընդմէջէն, որովհետեւ ան կառչած մնաց այն սկզբունքներուն, որոնց հիման վրայ հասակ նետած էր ան՝ Հարիրի ընտանիքի յարկին տակ: Ձեր զօրակցութիւնը երիտասարդական, սկառտական եւ մարմնակրթական միութիւններուն ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի յատկապէս, ձեզ դարձուց արտակարգ անձնաւորութիւն մը», ըսաւ եղբ. Կէօվօղլանեան:

Շարունակելով, եղբայրը շեշտեց, որ

հակառակ 25 երկիրներու մէջ 111 մասնաճիւղերով եւ աւելի քան 25 հազար անդամներով գործող այս հսկայ միութեան տարածուած ըլլալուն, անոր ընդհանուր ժողովները մնայուն կերպով Լիբանանը ընտրած են Կեդրոնական Վարչութեան նստավայր՝ նկատի ունենալով նման գործունէութիւն հիւրընկալելու ատակ միջավայր մը ըլլալու Լիբանանի իրականութիւնը:

Եղբ. Կէօվօղլանեան անդրադարձաւ նաեւ 20 Սեպտեմբեր 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի եւ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութեան միջեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային համալիրի շինութեան համաձայնագրի պաշտօնական ստորագրութեան վարչապետ Հարիրիի



Photo by Markar



ներկայութեան եւ մէջբերեց այդ առիթով անոր արտասանած խօսքերը, որոնց մէջ ան կը հաստատէր, թէ Հ.Մ.-Ը.Մ.-ին իր կապուածութիւնը ժառանգած է հօրմէն:

«Ձեր ճիգերը արդիւնաւորուեցան եւ նորահաս սերունդներու երազը իրականութեան վերածեցին: Այսպիսով, Հ.Մ.-Ը.Մ.-ի 101-ամեայ պատմութեան մէջ դուք դարձաք առաջին ոչ հայ անձնաւորութիւնը, որուն միաձայնութեամբ որոշուեցաւ ընծայել Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան «Արտակարգ» պատուանշանը: Շնորհաւոր Հ.Մ.-Ը.Մ.-ին եւ շնորհաւոր Լիբանանին», ըսաւ եղբ. Կէօփօղլանեան:

Այնուհետեւ, եղբայրը հրաւիրեց

Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը՝ կատարելու վարչապետին պարգեւատրումը:

Վարչապետ Հարիրի Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին կողմէ պարգեւատրուեցաւ միութեան «Արտակարգ» պատուանշանով, իսկ եղբ. Հրաչ Սիսեռեան, իր կարգին, վարչապետ Հարիրիին յանձնեց պատուանշանին վկայագիրը:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՆՈՒՄ ԾՆՈՐ ՀԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Ձերմ ծափողոյններէ ետք, խօսք առաւ վարչապետ Հարիրի եւ վերջիչեց Ֆրանսա ապրած իր ժամանակաշրջանը եւ սերտ բարեկամութիւնը եղբ. Հրաչ

Սիսեռեանի եւ եղբօրը՝ Պերճ Սիսեռեանի հետ: Ան նշեց, որ անոնք իր հօր մտերիմ բարեկամներն էին եւ կ'աշխատէին անկեղծ նուիրումով:

«Հօրս նահատակութենէն ետք, մեզի համար շատ մտերմիկ էր այս յարաբերութիւնը եւ կը շարունակէ այդպէս մնալ: Մենք նոյնքան անկեղծութեամբ եւ նուիրումով մէկ ընտանիքի նման կը շարունակենք մեր կեանքը: Յիշողութեանս մէջ միշտ դրոշմուած է այն իրականութիւնը, որ երեկոյեան ժամերուն Հրաչը կ'անհետանար: Յստակ էր, թէ ան Հ.Մ.-Ը.Մ.-ի իր աշխատանքները կը կատարէր՝ առաւելագոյն նուիրումով», ըսաւ ան:

Վարչապետ Հարիրի շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններուն, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսին, իր ըստացած պատուանշանին համար: Ան բարձր գնահատեց Հ.Մ.-Ը.Մ.-ի դերակատարութիւնը՝ երիտասարդ սերունդի առողջ կազմաւորման մէջ:

«Պէտք է նկատի ունենաք, որ Հարիրի բնակարանը՝ հոս, Քրայթէմի եւ Փարիզի մէջ, թէ այլուր, բոլոր լիբանանցիներուն եւ հայերուն տունն է: Բարի՛ եկած էք բոլորդ եւ դարձեալ շնորհակալութիւն», եզրափակեց վարչապետ Հարիրի:

Հանդիսութեան աւարտին, պարգեւատրեալ վարչապետը ընդունեց ներկաներուն շնորհաւորութիւնները:



ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

(Հ.Մ.Ը.Մ-ի նախկին ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԲԱՅՅԻ ԿԵՕՎՕՂԼԱՆԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԱՏ ՀԱՐԻՐԻԻ ՊԱՐԳԵԻԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Պատմութիւնը կը կերտուի արտակարգ անձնաւորութիւններու կողմէ:

Պատմութիւնը կը կերտուի արտակարգ գաղափարներով, ակնկալութիւններով եւ ձգտումներով:

Ահաւասիկ, մենք այսօր պատմական պահեր կ'ապրինք իբրեւ Հ.Մ.Ը.Մ., իբրեւ երիտասարդական շարժում եւ իբրեւ Լիբանան: Ունինք երիտասարդ վարչապետ մը, որ մեծ ձգտումներով, բարեկարգումի նպատակով, հզօր կամքով եւ առաջադրանքներով կը ջանայ գործադրել այնպիսի ծրագրեր, որոնց գործադրութիւնը անկարելի կը թուի անոնց համար, որոնք հաւատք չունին անոր կարողութիւններուն, նոր սերունդին եւ բարգաւաճ ապագայի հանդէպ:

Մեր պատմութիւնը սկսաւ մօտաւորապէս երկու տասնամեակ առաջ, երբ նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրի ընդառաջեց իրեն մօտիկ եւ շատ սիրելի անձի մը, - որ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Սիսեռեանն է, - իր սրտին խօսող մէկ խնդրանքին: Նահատակ վարչապետը առատաձեռն նուիրատուութիւն մը կատարելով հիմը դրաւ անձեռնմխելի գումարի մը, որ պիտի յատկացուէր Փարիզի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի վայել մարզամշակութային համալիրի մը կառուցման:

Մինչեւ իր նահատակութիւնը, վարչապետ Ռաֆիք Հարիրի գրեթէ տարեկան յաճախականութեամբ շարունակեց իր առատաձեռն նուիրատուութիւնները եւ նպաստեց անձեռնմխելի գումարին ուղեւորման:

Ռաֆիք Հարիրի ահաբեկուեցաւ, սակայն անոր երազը մնաց կենդանի: Ռաֆիք Հարիրի ահաբեկուեցաւ, սակայն անոր գործելաոճը կենդանի մնաց իր զակիին՝ վարչապետ Սաատէտտին Հարիրիի գործունէութեան ընդմէջէն, որովհետեւ ան կառչած մնաց այն սկզբունքներուն, որոնց հիման վրայ հասակ նետած էր ան՝ Հարիրի ընտանիքի յարկին տակ: Բոլորին բացուելու քաղաքականութիւնը, հայրենիքի շահը ամէն բանէ վեր դասելու եւ բարեկարգումներու անհրաժեշտութիւնը առաջնակարգ նկատելը ձեզ՝ պարոն վարչապետ դուրս բերին համայնքային նեղ սահմաններէ եւ տեղական-տեղայնական մօտեցումներէ:

Ձեր զօրակցութիւնը երիտասարդական, սկստական եւ



մարզական միութիւններուն, եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մեծ երազը իրականացնելու ձեռնարկը եւ ձեռնարկող հօր սկսած գործը շարունակելը, իրաւամբ, ձեզի դարձուցին արտակարգ անձնաւորութիւն մը:

Հ.Մ.Ը.Մ-ը, որ այսօր տարածուած է 25 երկիրներու մէջ իր 111 մասնաճիւղերով եւ աւելի քան 25 հազար անդամներով, իր Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներով որոշած է իր Կեդրոնական Վարչութեան նստավայրը դարձնել Լիբանանը, նկատի առնելով երկրին նպաստաւոր պայմանները, որոնք ստեղծուած են շնորհիւ երկրի ղեկավարութեան խոհուն քաղաքականութեան եւ լիբանանահայութեան աշխոյժ եւ արդիւնաւէտ գործունէութեան:

Սիրելի՛ ներկաներ,

Վարչապետ Հարիրիի ճիգերը երկու շաբաթ առաջ, 20 Սեպտեմբեր 2019-ին, յաջողութեամբ պսակուեցան, երբ վարչապետը ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի եւ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութեան միջեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային համալիրի շինութեան համաձայնագրին պաշտօնական ստորագրութեան: Այնտեղ, ձեր եզրափակիչ խօսքին մէջ, արտայայտուեցաք Հ.Մ.Ը.Մ-ին ձեր կապաւորութեան մասին, ըսելով թէ զայն ժառանգած էք ձեր նահատակ հօրմէն, եւ ես այս բեմէն Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ բոլոր միութեանականներու անունով կը հաստատեմ, որ զգացումը փոխադարձ է եւ դրոշմուած է իւրախանչիւր Հ.Մ.Ը.Մ-ականի սրտին մէջ:

Ձեր ճիգերը արդիւնաւորուեցան եւ դուք թարգմանը հանդիսացաք սերունդներու երազին իրականացման: Հետեւաբար, այս առիթով, յարգարժան պարոն վարչապետ, դուք կը դառնաք Հ.Մ.Ը.Մ-ի 101-ամեայ պատմութեան առաջին ոչ հայ անձնաւորութիւնը, որ կ'արժանանայ միութեան «Արտակարգ» պատուանշանին:

Փա՛ռք Հ.Մ.Ը.Մ-ին եւ փառք Լիբանանի արտակարգ անձնաւորութիւններուն, որոնք պատմութիւն կը կերտեն եւ կը նպաստեն երիտասարդութեան եւ նորահաս սերունդներու զարգացման ու ծաղկումին:



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 44-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝ ԿԱՐՕ ԵՒ ՍՕՍԷ ԷՇԿԻԵԱՆՆԵՐ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍՍ

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 44-րդ մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը սիրով ստանձնեցին շրջանի ծանօթ ազգայիններ տէր եւ տիկին Կարօ եւ Սօսէ Էշկիեանները: Ազգանրէի համեստ այս զոյգին մօտէն ծանօթանալու եւ անոնց նուիրեալ գործունէութիւնը հանրութեան ներկայացնելու համար, հանդիպում մը ունեցանք անոնց հետ:

Ինծի համար մեծ հպարտանք էր այս հանդիպումը, որովհետեւ մտերմօրէն պիտի զրուցէի հայորդիի մը հետ, որուն ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետուհին եղած էի, այլեւ՝ քաջախիղճ էի զինք ու եղբայրը անդամակցելու Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի շեփորախումբին եւ հմտանալու երաժշտութեան մէջ, քլարինէթ նուագելով: Հանդիպումը հաճելի էր, սակայն զոյգին կեանքի յաջողութիւններուն ծանօթանալը քիչ մը դժուար եղաւ, որովհետեւ անոնք իրենց համեստութենէն մղուած՝ դժուարութեամբ կ'անդրադառնային իրենց կեանքի նուաճումներուն, որ հազուադէպ երեւոյթ է մարդկային մեր կեանքին մէջ:

Կարօ Էշկիեան ծնած է Լիբանանի հայահոծ Պուրճ Համուտի շրջանի Ամանոս թաղամասը, ազգանուէր ընտանեկան յարկի մը տակ, եւ այդ ոգիով ալ հասակ նետած է ակմբային մաքուր շրջապատի մէջ, անվախ ու ազգասէր: Ան երկրորդ զաւակն է Միսաք եւ Ուսաննա Էշկիեաններուն: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի նախակրթարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան



քոլէճին մէջ: Այնուհետեւ, ան նետուած է կեանքի ասպարէզ եւ աւելի քան 11 տարիներ ապրելով լիբանանի քաղաքացիական պատերազմի դառնութիւնները, եղած է խոհեմ, անձնագոհ ու վստահելի անձնաւորութիւն մը, որուն շնորհիւ իրեն վստահուած են շատ կարեւոր պարտականութիւններ եւ պատասխանատուութիւններ: Ան իր աշխատասիրութեան եւ հետեւողականութեան շնորհիւ հասած է յաջող բարձունքներու, միշտ յառաջդիմութիւն արձանագրելով եւ իր յաջողութիւններուն բաժնեկից դարձնելով իր հարազատներն ու շրջապատը:

Կարօ Էշկիեան հասակ նետելով Պուրճ Համուտի նման հայահոծ շրջանի մը մէջ, բնական էր, որ դպրոցէն դուրս պիտի թրծուէր ակմբային կեանքի մէջ: Ան փոքր տարիքէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին՝ իբրեւ սկաուտ, ապա՝ շեփորախումբի անդամ, դառնալով հմուտ քլարինէթ նուագող: 1977-ին անդամակցած է Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական

Միութեան (ԼԵՄ) շարքերուն, ուր դեկավարի իր յատկութիւններուն շնորհիւ ստանձնած է վարչական եւ պատասխանատու զանազան պաշտօններ: 1981-ին անցած է Հ.Յ.Դ-ի շարքերը, ուր հաւատքով կը գործէ մինչեւ օրս:

1986-ին, Կարոն փոխադրուած է Մ. Նահանգներ եւ բնակութիւն հաստատած է Կլենտէյլ քաղաքին մէջ եւ զբաղած է պիտակեղէնի վաճառականութեամբ, նոյն ժամանակ նետուելով Real Estate-ի աշխարհին մէջ, մեծ յաջողութիւն արձանագրելով շէնքերու առուծախին մէջ:

1988-ին ան ամուսնացած է իր թաղեցի Սօսէ Կարապետեանին հետ, որուն 1980-ին ծանօթացած էր ԼԵՄ-ի շարքերուն մէջ: Ապագային անոնք բախտաւորուած են երկու զաւակով՝ Նարէ եւ Գօգօ, որոնք իրենց ծնողներուն նման ազգային նկարագիրով հասակ նետած են ակմբային միջավայրի մէջ եւ երկուքն ալ աւարտած են Ազգ. Շամբեան միջնակարգ վարժարանը, իսկ երկրորդականը՝ Լա Քրեսենթայի Հայ Սքուլը:



Ներկայիս Նարէն Լաս Վեկասի համալր- սարանին մէջ կը մասնագիտանայ ատամնաբուժութեան մէջ, իսկ Գօգօն կը հետեւի հօրը քայլերուն:

Կարօ Էշկիեանի հմտութեան, ղեկա- վարի յատկութիւններուն եւ նուիրու- մին շնորհիւ՝ անոր վստահուած են բազ- մաթիւ պատասխանատու պաշտօններ: Ան եղած է Հ.Յ.Դ. «Ահարոնեան» կոմի- տէի անդամ, երկար տարիներ Կլենտէյ- լի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգա- բարձութեան անդամ եւ բազմաթիւ տարիներ վարած է անոր ատենապետի պաշտօնը, Ազգային վարչութեան ան- դամ եւ ներկայիս՝ ատենապետը:

Ան նուիրումով գործած է շրջանի Կեդրոնական Կոմիտէի զանազան յանձ- նախումներուն մէջ:

Կարօ Էշկիեանի կեանքին ամէնէն դաժան օրերը եղած են ծնողքին եւ միակ եղբոր՝ Սազոյին անակնկալ մահը (2006), որոնց հանդէպ անսահման սէր ու յար- գանք կը ցուցաբերէր ան: Իր հարա- զատներուն յիշատակը անմահացնելու նպատակով, ան իր սիրելի ծնողքին յի- շատակին վերանորոգած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թանգա- րանը, նաեւ հովանաւորած է Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն սենեակը, իսկ «Ասպարէզ» օրաթերթին ժողովասրահը՝ եղբոր Սա- զոյին անուանով: Էշկիեան մեծ յարգանք ու հաւատք ունենալով Արեւմտեան Թե- մի Առաջնորդական Փոխանորդ Թոր- գոմ Տօնոյեանի անձին, կարողութիւն- ներուն եւ հոգեւորականի արժանիքնե-



րուն հանդէպ՝ սիրայօժար կերպով ըս- տանձնած է անոր եպիսկոպոսական օծ- ման կնքահայրութիւնը, Մ. Նահանգնե- րէն ճամբորդելով մինչեւ Լիբանան:

Անձնապէս նաեւ կը վկայենք, որ Էշկիեան զոյգը միշտ դրական արձա- գանգած է իրեն բոլոր դիմողներուն: Անոնք լուռ ու մունչ նիւթապէս եւ բա- րոյապէս թիկունք կանգնած են կրթա- կան հաստատութիւններու, ազգային կազմակերպութիւններու, ուսանողնե- րու եւ սիրայօժար հովանաւորած են բազմաթիւ ձեռնարկներ:

Սօսէ Կարապետեան ծնած է Գամիշ- լի, Սուրիա, ազգայնաշունչ ընտանեկան յարկի մը տակ: Ան վեցերորդ զաւակն է Յովհաննէս եւ Վարդուհի Կարապետ- եաններու եօթը զաւակներուն: Ան յա- ճախած է ծննդավայրի Եփրատ վարժա-

րանը: 1971-ին, ընտանիքին հետ փո- խադրուած է Լիբանան եւ բնակութիւն հաստատած է Ամանոսի շրջանին մէջ, ուր յաճախած եւ աւարտած է Թաղի Ազգ. Կիլիկեան վարժարանը: Լիբանանի մէջ ան անդամակցած է ԼԵՄ-ի շարքե- րուն եւ իր պատասխանատուութեան գիտակցութեան եւ ղեկավարի յատկու- թիւններուն շնորհիւ, իրեն վստահուած են զանազան պատասխանատու պաշ- տօններ: Ան եղած է Ամանոսի ԼԵՄ-ի «Րաֆֆի» մասնաճիւղի վարչութեան անդամ, ինչպէս նաեւ՝ Ամանոսի «Նա- ւասարդեան» եւ Ռաուտայի «Կոմս» պատանեկան միութիւններու վարիչ: Ան անդամակցած է Համազգայինի Պուրճ Համուտի մասնաճիւղի «Գորա- նի» պարախումբին, իսկ 1982-ին անցած է Հ.Յ.Դ.-ի շարքերը: Երկար տարիներ ան գործած է Ազգային խորհուրդի մէջ՝ իբրեւ գանձիչ, նաեւ քանի մը տարիներ վարած է Լիբանանի «Վանայ Ձայն» ռատիոկայանի քարտուղարի պաշտօնը:

1988-ին ան նշանուած է իր երկար տարիներու սիրելիին՝ Կարոյին հետ եւ նոյն տարին Մ. Նահանգներ փոխադրու- ւելով՝ ամուսնացած է անոր հետ: Մ. Նահանգներու մէջ եւս Սօսէն ունեցած է միութենական բեղուն գործունէու- թիւն: Ան կոմիտէի ղեկավար պարտակա- նութիւններ ստանձնած է Հ.Յ.Դ. Լա Գրեսենթայի «Չաւարեան» եւ Կլենտէյլի «Ահարոնեան» կոմիտէի կողմէն մէջ, մաս կազմած է շրջանի Հ.Յ.Դ. Կեդրո- նական Կոմիտէի յանձնախումբերուն, ինչպէս նաեւ բազմաթիւ տարիներ



նուիրումով գործած է Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի տիկնանց միութեան մէջ: Ան մեծ աշխատանք տարած է Լիբանանի ընտրական մարմինին մէջ: Աշխոյժ գործունէութիւն ցուցաբերած է Թիւֆէնքեան մանկամսուրի ծնողական յանձնախումբին մէջ: Ան գաւակին՝ Գօգոյին շնորհիւ եղած է նաեւ AYSO Ֆութպոլի խումբի ծնողական մարմինի անդամ: Աւելի ուշ, դարձեալ Գօգոյին շնորհիւ՝ իբրեւ մարզիկի ծնողք առնչուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Քրեակենսապահման հովիտի «Շանթ» մասնաճիւղին: Սօսէն, իր համեստութեամբ, աշխատասիրութեամբ եւ մեղմ նկարագիրով սիրաշահած է իր շրջապատին սէրն ու յարգանքը: Իրեն համար կարեւոր են բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք կը նպաստեն մեր երիտասարդութեան դաստիարակութեան, հայ ժողովուրդի բարօրութեան եւ մեր սիրելի հայրենիքին հզօրացման: «Հ.Մ.Ը.Մ.ը այն կազմակերպութիւններէն մէկն է, որուն համար սիրալոյս տար ղունած ենք անոր տարեկան մեծագոյն նախաձեռնութեան՝ Նաւասարդեան

մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը», ինքնավստահութեամբ ընդգծեց ան մեր հարցազրոյցին ընթացքին: Իսկ Կարօ Էշկիեան, Հ.Մ.Ը.Մ.ը արժեւորելով ըսաւ. «Ես միշտ հպարտ կը զգամ Հ.Մ.Ը.Մ.ական իմ անցեալով: Հ.Մ.Ը.Մ.ը ընդհանրապէս իր ազգայնաշունչ ծրագիրներով եւ յատկապէս Նաւասարդեան մարզախաղերով, մեծ խանդավառութիւն ստեղծած է երիտասարդութեան մօտ: Հ.Մ.Ը.Մ.ը նաեւ գեղեցիկ միջոց հանդիսացած է անոնցմէ շատերուն, ընտանեկան իրենց բոյնը ստեղծելու անոր շարքերուն ընդմէջէն: Կասկած չունիմ, որ Հայաստանի անկախացումէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ը իր սկստական շարքերով եւ բանակավայրերով մեծ դերակարտարութիւն ունեցաւ եւ կը շարունակէ ունենալ հայրենի երիտասարդութեան ազգային կեանքին մէջ: Վստահ եմ, որ անիկա պիտի շարունակէ մնալ իր բարձունքին վրայ եւ պիտի պահպանէ ազգային մեր արժէքները»:

Իսկ պատասխանելով Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնելու դրդապատ-

ճառին մասին հարցումին, ան շարունակեց՝ ըսելով. «Բնական է, Հ.Մ.Ը.Մ.ականի անցեալս մեծ դերակատարութիւն ունեցաւ ստանձնելու այս պատասխանատուութիւնը. Հ.Մ.Ը.Մ.էն շատ բան սորված եմ: Հիմա, երբ կարողութիւններս կը ներեն՝ կ'ուզեմ երախտագիտութիւնս յայտնել եւ սիրելի կազմակերպութիւնս բաժնեկից դարձնել կեանքիս յաջողութիւններուն, նիւթական եւ բարոյական աջակցութիւնս ցուցաբերելով անոր»:

Սօսէ Էշկիեան համաձայն գտնուելով ամուսնոյն հաստատումներուն հետ՝ յոյս յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ իր ազգանպաստ գործունէութիւնը եւ իր հոգածութեան յանձնուած սերունդները հարազատ թարգմանը կը հանդիսանան «Բարձրացի՛ր-բարձրացուր» իմաստալից իր նշանաբանին:

Կը շնորհաւորենք տէր եւ տիկին Կարօ եւ Սօսէ Էշկիեանները, որոնք իրենց պարկեշտութեամբ, ազգասիրութեամբ եւ օգտակար ըլլալու ձգտումներով՝ բարի օրինակ կը հանդիսանան իրենց շրջապատին:



The advertisement features a white square on the left containing a stylized red logo of the letters 'EP'. To the right of the logo, the brand name 'Elegance Plus' is written in a large, elegant, cursive script. Below the brand name, the text 'Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items' is displayed in a clean, sans-serif font. The entire advertisement is set against a solid pink background.



«Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՒԻՐԵԱԼ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԷՁ

Թղթակից
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը, շարունակելով գեղեցիկ սովորութիւնը, Շաբաթ, 9 Նոյեմբեր 2019-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի «Պաղտասարեան-Շահինեան» սրահին մէջ մեծ շուքով նշեց «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր»ը:

Իւրայատուկ այս ձեռնարկին պարգեւատրուեցան վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներ, որոնք երկար տարիներ նուիրումով գործած են իրենց մասնաճիւղերուն եւ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ:

Ցաւով պէտք է նշել, որ սրահի սեղաններէն մէկը պարապ էր: Սեղանը կը պատկանէր Հ.Մ.Ը.Մ.Ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղին կողմէ պարգեւատրուող եղբ. Էմիլ Տէր Գէորգեանի հարազատներուն եւ իր անդամակցած մասնաճիւղի վարչութեան, որոնք ակա-



մայ կը բացակայէին, որովհետեւ կը գտնուէին... անողոք հիւանդութեան պատճառով բժիշկներու խնամքին յանձնուած եղբոր կողքին: Եղբ. Էմիլ իր մահականցուն կնքեց ձեռնարկէն շաբաթ մը ետք, խոր սուգի մատնելով սիրելիներն ու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ը:

ԲԱՅՈՒՄԸ

Օրուան հանգիստավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց քոյր Մարիամ Յակոբեան: Բարի գալուստի քաղցր խօսքերով հանդիսութեան բացումը կատարելէ ետք, ան վարեց ձեռնարկին հարուստ յայտագիրը:

Կարելոր այս ձեռնարկին ներկայ գտնուելու եւ պարգեւատրեալ քոյր-եղբայրներուն իրենց յարգանքն ու շնորհաւորանքները փոխանցելու համար, սրահ փութացած էին երկու հարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչու-

թեան անդամ եղբայրներ Արմանո Բիրիճեան եւ Օշին Փիրումեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամներ՝ Կարօ Իսբէնճեան, Ռազմիկ Շիրինեան եւ Հրայր Կարապետեան, Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Նորա Յովսէփեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահ՝ Վարանդեւ Հոլրի Մեյքոնեաններ, Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ եւ բազմաթիւ հիւրեր:

Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը կը ներկայացնէր Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արտակ Ա. Քհնյ. Տէմիրճեան:

Ձեռնարկին դրօշակի տպաւորիչ արարողութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղերէն կազմուած դրօշակակիրներու խումբը, գլխաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային խմբագրատունի քոյր Դարար Գալստեանի: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները գեղեցիկ իր ձայնով մեներգեց





քոյր Իվանա Գրիգորեան, մեծապէս տպաւորելով ներկաները:

ՕՐ ՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՄՔԸ

Առաջնորդ հօր եւ իր հայրական օրհնութիւնները փոխանցեց Արտակ Ա. Քհնյ. Տէմիրճեան, որ սեղաններու օրհնութիւնէն ետք՝ մեծապէս զնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայ իրականութեան մէջ: Ան շնորհաւորեց պարգեւատրուող քոյր-եղբայրները եւ յաջողութիւն մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ ազգանուէր գործունէութեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄՔԸ

Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Սիւզի Օհանեան: Առաջին հերթին խուսկ ու աղօթք մատուցելով Հ.Մ.Ը.Մ.ը հիմնող նուիրեալներու անթաւամ յիշատակին, ան ըսաւ. «Այո՛, հայ ժողովուրդի նուիրեալներու շնորհիւ հիմը դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին, որ աւելի քան հարիւր տարիներ խրոխտ շարքերով, անկոտորում կամքով ու հաւատքով գործեց հայրենիքէն հեռու, սերունդներ դաստիարակեց, արմատաւորուեցաւ աշխարհի տարածքին, վերընձնորդուեցաւ հայրենիքին մէջ, համաշխարհային ճանաչում ստացաւ եւ այսօր իր 111 մասնաճիւղերով կը գործէ»:

Ապա, յիշեցնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ականին համար «ամէն օր Հ.Մ.Ը.Մ.ի օր է», քոյրը վստահեցուց, որ «Հ.Մ.Ը.Մ.ը

դաստիարակելու առնթեր, գիտէ նաեւ զնահատել այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք հաւատքով եւ առանց որեւէ ակնկալութեան կը գործեն իրենց շարքերուն մէջ: Վկայ՝ այսօրուան պարգեւատրուող քոյր-եղբայրները, որոնք հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, ի գին մեծ գոհողութիւններու եւ անշահախնդրութեամբ կը գործեն իրենց մասնաճիւղերէն ներս»:

Եզրակացնելով, քոյր Օհանեան Շրջանային Վարչութեան անունով շնորհաւորեց պարգեւատրեալները եւ շնորհակալութիւն յայտնեց իրենց անշահախնդիր ծառայութեան համար:


Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Այնուհետեւ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանի տուչութիւն: Այս կարեւոր պատուանշանը կը տրուի «հայ կամ օտար անձնաւորութեան մը, որ թանկագին ծառայութիւն մատուցած է Հ.Մ.Ը.Մ.ին»: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, ընդառաջելով շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ղեմուծին, «Արտակարգ» պատուանշանով պարգեւատրեց եղբ. Սթիւ Արթինեանը՝ Հ.Մ.Ը.Մ.ին մատուցած իր երկար տարիներու ծառայութեան համար: Պատուանշանը յանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Արմանտ Քիլիճեան եւ Օշին Փիրումեան, ընկերակ-

ցութեամբ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեանին:

Եղբ. Սթիւ Արթինեան պատուանշանը ստանալէ ետք, յուզումնախառն ըզգացումներով փոխանցեց իր սրտի խօսքը: Առաջին հերթին ան շնորհակալութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններուն, զինք այս պատիւին արժանացման համար: Ապա, անդրադառնալով Հ.Մ.Ը.Մ.ի իր անդամակցութեան եւ քառասուն տարիներ անոր շարքերուն մէջ ծառայելու իրողութեան, ան ըսաւ, որ պարգեւատրումը կը նուիրէ իր դաստիարակներուն՝ եղբայրներ Համլէթ Չրախչեանին, Սարգիս Արեւեանին եւ Յարութ Բարսեղեանին, որոնք քաջալերած եւ գործի մղած են զինք ու իր նմանները:

Եղբայրը իր պարգեւատրումը ընդունեց նաեւ յանուն բոլոր այն ծնողներուն, որոնք ամէնօրեայ դրութեամբ իրենց զաւակները կ'առաջնորդեն Հ.Մ.Ը.Մ., սկսած դեկավարներուն, որոնք մեր երեխաներուն հոգատարութիւն կը ցուցաբերեն, մարզիչներուն, որոնք դեկավար ըլլալ կը սորվեցնեն իրենց վստահուած մարզիկներուն, Հ.Մ.Ը.Մ.ական կամաւորներուն եւ մեր դեկավարներուն, որոնք իսկական հերոսներն են այս ընդհանուր պատկերին: Ան յիշեց նաեւ իրեն համար կարեւոր անձնաւորութիւն ներկայացնող հանգուցեալ եղբ. Ճորճ Ժամկոչեանը: Վերջա-



պէս, եղբայրը իր պարգեւատրումը նուիրեց իրեն սիրելի բարեկամ եղբ. Էմիլ Տէր Գէորգեանին, որ հասկնալի պատճառներով կը բացակայէր ձեռնարկէն:

«Հ.Մ.Ը.Մ.ը իսկական դպրոց մըն է, որ քեզի կը սորվեցնէ ըլլալ իսկական դեկավար, կը սորվեցնէ ինչպէ՛ս ըլլալ իրապէս համեստ, կը սորվեցնէ առաջնորդել, հետեւիլ եւ երբեմն ալ մէկ կողմ քաշուիլ եւ ուրիշին առիթ տալ, որպէսզի հզօրանայ մեր կազմակերպութիւնը: Այս բոլորը ես սորվեցայ Հ.Մ.Ը.Մ.էն, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ կեանքիս վրայ եւ մէջս փոխեց ամէն ինչ», ըսաւ եղբ. Արթինեան:

Պատիւ զգալով նման մակարդակի պարգեւատրման արժանացման համար, եղբ. Արթինեան հպարտութեամբ

ըսաւ, որ այս պատուանշանը մշտական իր տեղը պիտի գրաւէ տան գրասենեակին մէջ: Եղբայրը անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ յատուկ գնահատանք յայտնեց եղբ. Յակոբ Թիւֆէնքճեանին եւ Շրջանային Վարչութեան անդամներուն, որոնք ամէն ջանք ի գործ կը դնեն բոլոր անդամները ներգրաւելու Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն մէջ, յանուն իր հոգածութեան յանձնուած երեխաներու դաստիարակութեան:

ԸՆԹՐԻՔԻ ԴԱԴԱՐԸ

Պարգեւատրման արարողութեան յաջորդեց ընթրիքի դադարը, որուն ընթացքին ցուցադրուեցաւ չըջանի Հ.Մ.Ը.Մ.ի

գործունէութիւնը ներկայացնող տեսանիւթ մը: Աւարտին, ցուցադրուեցան տարուան ընթացքին մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու նկարները:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց նորընտիր Վարչութեան անդամ եղբ. Արմանո Քիլիճեան: Ողջունելով ներկաները, ան իր հպարտանքը յայտնեց իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ ներկայ գտնուելու ձեռնարկին, իր ընկերներուն, քոյրերուն եւ եղբայրներուն հետ: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի լաւ ձեռքերու մէջ ըլլալու իրողութիւնը վստահեցնելով, ան յիշեցուց, որ ձեռնարկը ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձի տօնախմբութիւնն է, այլեւ առիթ՝ պատուելու եւ շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր անձնաւորութիւններուն, որոնք նուիրումով գործած են այս կազմակերպութեան բարեխաղման համար:

«Այս հինգերորդ տարին է, որ այս տօնախմբութիւնը կը կազմակերպուի Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ: Համոզուած եմ, որ եթէ յաջորդ հարիւր տարիներուն եւս կազմակերպենք նման ձեռնարկներ, տակաւին չենք կրնար գնահատել այն բոլոր անհատները, որոնք արժանի են այս ճանաչման», ընդգծեց եղբայրը: Պարգեւատրեալներ





րուն կողմէ Հ.Մ.Լ.Մ.ի վերելքին համար կատարած կամուրը աշխատանքներուն անդրադառնալով, եղբ. Քրիմեան Հ.Մ.Լ.Մ.ը անոնց երկրորդ տունը կոչեց, շնորհաւորեց զանոնք եւ եզրակացուց ըսելով. «Այս ձեռնարկին մասնակիցները Հ.Մ.Լ.Մ.ի բարելավման համար կատարած են եւ կը շարունակեն կատարել միութենական իրենց պարտականութիւնները: Կարեւոր է, որ այս սրահէն դուրս գտնուողները իմանան ձեր տարիներու զոհողութիւնները: Յոյսով եմ, որ մենք պիտի կարենանք ձեր զոհողութիւնները ծանօթացնել հանրութեան, որպէսզի կարենանք ձեր քայլերուն հետեւող նոր ղեկավարներ ընդգրկել Հ.Մ.Լ.Մ.ի մէջ»:

«ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ»

ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ

Եղբօր իրախուսիչ պատգամէն ետք, տեղի ունեցաւ ձեռնարկին գլխաւոր առանցքը հանդիսացող, շրջանի Հ.Մ.Լ.Մ.ի բարձրագոյն շքանշանին՝ «Ծառայութեան» շքանշանի յանձնման արարողութիւնը: Շքանշանները յանձնեցին մասնաճիւղերու մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները: Շքանշաններ ստացան հետեւեալները. -

- Եղբ. Արամ Թոմաս՝ Հ.Մ.Լ.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ:
- Եղբ. Յովիկ Արիստակէսեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ:
- Եղբ. Առաքել Արիսեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Սասուն» մասնաճիւղ:

- Եղբ. Սարգիս Կարապետեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղ:
- Եղբ. Էմիլ Տէր Գէորգեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ:
- Քոյր Յասմիկ Քէօզկէրեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Սարդարապատ» մասնաճիւղ:
- Եղբ. Յակոբ Սերոբեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ:
- Քոյր Մարալ Կիւլտալեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Սեւան» մասնաճիւղ:
- Եղբ. Վազգէն Գալստյան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Արագ» մասնաճիւղ:
- Քոյր Նայիրի Ստեփանեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Անի» մասնաճիւղ:
- Եղբ. Արամ Պէքարեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ:
- Քոյր Ժարմիր Մեհրաբի՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Սիրիան» մասնաճիւղ:

- Եղբ. Աբրահամ Սարգիսեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի Ֆինիքսի մասնաճիւղ:
 - Եղբ. Չարլզ Մենգիլեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի «Կարս» մասնաճիւղ:
- Ներկաները երկարաշունչ ողջոյններով զնահատեցին երեկոյին ընթացքին պարգեւատրուած բոլոր քոյր-եղբայրները:

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ ԵՒ ՓԱԿՈՒՄԸ

Այնուհետեւ, հայկական տոհմիկ երգերով երեկոն խանդավառեց Հ.Մ.Լ.Մ.ական երգիչ եղբ. Վարանդ Աւաննէսեան:

Գնահատանքի երեկոն վերջ գտաւ ուշ գիշերին: Ներկաները դժուարութեամբ հրաժեշտ տուին իրարու, Հ.Մ.Լ.Մ.ական նուիրեալ գործունէութիւնը հաւատքով շարունակելու հաստատակամութեամբ:





ՄԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՊՐԱԾ ԿԵԱՆՔԻ ՓՈՔՐԻԿ ԱՇԽԱՐՀՆ Է

«ԱՊԱՌԱԺ» ԹԵՐԹԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎՐԷԺ ԷՍՄԻՐԵԱՆ

Արցախի նորակերտ պատմութեան նուիրական էջերից մէկը Ստեփանակերտում բացուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մասնաճիւղն է:

«Ապառաժ»ը Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մեկուսի մասնաճիւղի գործունէութեան եւ ծրագրերի մասին զրուցել է մասնաճիւղի ատենապետ Վրէժ Էսմերեանի հետ: Ձրոյցը վարել է Յասմիկ Յակոբեանը:

Վրէժ Էսմերեանը ներկայացրել է, որ Հ.Մ.Ը.Մ.ն ունի 111 մասնաճիւղ աշխարհի չորս կողմերում գտնուող 25 երկրներում: Արցախի մասնաճիւղը սկառուական կառոյց է, որի վարչութիւնն ունի 7 անդամ եւ 45 սկառու:

Ատենապետի խօսքով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութիւնից խմբապետներ են գործուղուում Արցախ, ովքեր մարզում եւ գիտելիքներ են հաղորդում մեր սկառուներին: Նա ասել է, որ շատ անելիքներ ունեն Հ.Մ.Ը.Մ.ի բնագաւառում: Ըստ նրա՝ հեռանկարային աշխատանքները շատ մեծ են, իսկ



ղրանցից սպասուող ակնկալիքներն՝ աւելի մեծ:

«Մենք Արցախում պրոֆեսիոնալ ակումբ չենք, բայց կարելորում ենք մեր երիտասարդները՝ տարբեր մարզաձեւերի, փողային երաժշտութեան, շքերթներ կազմակերպելու պատրաստութիւնը, արժեւորում հայոց մշակոյթը՝ նրանց դարձրնելով հոգով եւ մարմնով բարձր սկառուները», ասել է նա:





Ատենապետը նշել է, որ Արցախի երիտասարդների համախմբումը Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերում հայոց աշխարհի Արցախ շրջանում բոլորի մեծ երազանքի իրականացումն է, որի համար ջանք եւ ուժ չեն խնայում նորակազմ վարչութեան անդամները:

Վրէժ Էսմէրեանի խօսքով՝ մասնաճիւղի գրասենեակի համար տարածք են յատկացրել եւ արդէն ունեն նոր կառույցի նախագիծ: Ըստ նրա՝ աշխատանքներ են տարւում հասարակական կազմակերպութիւնը օրինական դարձնելու ուղղութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի գրասենեակի համար նախատեսուած եռաշարկ շէնքի 3-րդ յարկը նախատեսել են հիւրերին հիւրընկալելու նպատակով մոթելի համար: Գրասենեակի տարածքում կը լինեն ֆուլթայլի եւ պասքեթպոլի դաշտեր:

Հ.Մ.Ը.Մ-ի ատենապետը կիսուել է վերջերս Երեւանում տեղի ունեցած Միութեան 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի տպաւորութիւններով: Նրա խօսքով՝ որոշուել է Հ.Մ.Ը.Մ-ի գալիք քառամեայ ծրագրի որոշ աշխատանքները իրագործել Արցախում՝ Արցախի մասնաճիւղը զարգացնելու եւ յարատեւելու նպատակով:

«Ուրախութիւնից յուզուել եւ անթաքոյց հպարտութիւն ենք ապրել բոլորս, երբ յոտնկայս ծափող ջոյներով Արցախի մասնաճիւղի ատենապետին հանդիսաւոր հրաւիրեցին: Շատ ջերմ են ընդունել մեզ», - յաւելել է նա:

Վրէժ Էսմէրեանը նշել է, որ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով լինելու հանգամանքը չի խանգարել իւրաքանչիւրին իր ելոյթում անդրադառնալ Հ.Մ.Ը.Մ-ի՝ Արցախում գործունէութիւն ծաւալելու եւ զօրացնելու խնդիրներին:

«Երբ Արցախի երիտասարդութիւնը գիտակցի, թէ ի՞նչ ասել է



սկաուտութիւն, կը սովորի սիրել եւ կը ցանկանայ կապուել սկաուտութեանը: Արցախի ազատագրական պայքարի ժամանակ ողջ հայութիւնը թեւ-թիկունք է կանգնել Արցախին, այսօր էլ Հ.Մ.Ը.Մ-ի ողջ ընտանիքը Սփիւռքում, Մայր Հայաստանում միաւորուել է Արցախին՝ մասնաճիւղը զարգացնելու պատրաստակամութեամբ, որը յարատեւելու հեռանկարներ ունի», - յաւելել է նա:

«Սկաուտութիւնը մեր ապրած կեանքի փոքրիկ աշխարհն է՝ աւելի փափուկ եւ մեղմ», - յաւելել է նա:



ՄԱՀԱՉԳ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ շրջանի անդամներէն, «Արժանեաց» շքանշանակիր՝

ԵՂԲ. ԶԱԻԵՆ ԲՐՈՒՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 22 Յոկտեմբեր 2019-ին, Աւստրալիոյ մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պատրաստել եւ մարդեր եւ որ մեզի կը պակսին: Մարդուն կեանքը դրամագլուխ մըն է եւ որպիսին պարտի այդ կեանքը բարելաւելով՝ զաւակներուն յանձնել...: Ազգ մը խմբովին, որակի տեսակէտով, այնքան կ'արժէ, որքան զինքը կազմող անհատները անջատաբար:

ՇԱԿԱՐԵ ՔՐԻՍԵԱՆ